

891.99


U-41

ԳԱՐԵԳՐՆ
ՍԵՎՈՐՆՑ



ԴԵՊՈՒ

ՅԵՐԿՐ




Շ 36-Ա
Շ 21194

881.99
4-41

ԳԱՐԵԳԻՆ ՍԵՎՈՒՆԹ

ԴԵՊՈՒ ՅԵՐԿԻՐ



ՍԶԵՐՆԵՐ — ԲԱԳՈՒ — 1935

30 JUL 2019

54807

19 NOV 1966

Խմբագիր Յե. Չուբար


Տեխ.-խմբագիր Ա. Արխան

Շապիկը, տիտուլը և ֆորզայը նկարիչ՝

Գ. Արզումանյանի



56/26-66



ԱՏՐԱՏՈՍՖԵՐՈՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԶՈՀՎԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԸՆԿ. ԸՆԿ. ՎԱՍԵՆ-
ԿՈՑԻ, ՖԵԴՈՍԵՑԵՆԿՈՑԻ ՅԵՎ ՈՒՍԻՍԿԻՆԻ
ԱՆՄՈՌՈՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ՝
ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԳԻՐՔՍ:

Դեպի վե՛ր,

Դեպի վե՛ր,

Մի՛ս վե՛ր

Մենք հղում ենք մեր թռչունների չուն.....

Ավիամարտից

Գ Ե Պ Ի Յ Ե Ր Կ Ի Ր

Յերբ ստորագրելուց հետո գրիչը դրի սեղանին՝ մեր ես-կադրիլիայի հրամանատարը նայեց ուղիղ աչքերիս մեջ և ժպտաց։ Ակամայից յես ել ժպտացի և նայեցի ստորագրութեանս։ Այդ պահին տարորինակ լուսթյուն պիտի տիրեր, յիթե մեր հրահանգիչը մեջքիս չխփեր։

— Այդպես, յոթ հարյուրից պիտի թռչես. վոչինչ, առաջին անգամ դա յեւ բավական ե։

Իմ ընկերներից Սաշա Վերխադուրովը, վոր մինչ այդ լուռ կանգնած էր, թեև քաշելով կատակով ասաց.

— Գրիշա, դու աշխատիր մինչև գետին պարաշյուտդ չբանալ, 700 մետրից՝ դա համաշխարհային ռեկորդ կհամարվի...

Ընդհատեց ծիծաղեցին։

Յես ժպտում եյի, առանց վորև ե խոսք ասելու։ Իսկ Սաշան շարունակեց.

— Վոսկորներդ ասեղի ծայրով կհավաքենք, վորպեսզի սերունդները քաջ ողաչույիդ չմոռանան...

Նորից բարձրացավ աշխույժ ծիծաղի ալիքը։ Սաշան աշխուժութեան աղբյուր ե, նրա մարմինն ասես կառուցված ե այնպիսի նյութից, վորը-տխրութունից կծկվում ե ճիշտ ափսոսանքով, ինչպես վոլանտ մարմինը վերահաս վտանգի ժամանակ։

Այսօր նա մեզ, յերևի սովորականից շատ պեռք ե ծիծաղեցներ սակայն մեր հրահանգիչը մեջքիս յերկրորդ անգամ խփելով ասաց.

— Գնանք, և ինքն առաջինը դուրս յեկավ սենյակից։

Փողոցում հրահանգիչը յերկու քայլ ինձնից առաջ եր գնում։ Չեր խոսում, նրա լուսթյունն ինձ ավելի մտածել եր տալիս արածս քայլի առթիվ։ Առաջին անգամ, յերբ

նստել եմ սափառակ և սլացել դեպի լազուր յերկինքը, սըր-տումս վախի փոքրիկ նշան անգամ չի յեղել, իսկ հիմա ա-հա ինչ վոր անսովոր բան մարմնիս մեջ շարժվում ե: Ի՞նչ ե սա. մհ, թե՞ ուրիշ բան. Վհ, դա ահ է, այլ ինչ վոր մի ուրիշ բան, վոր ինձ ստիպում ե մտածել: Մի գուցե դա 700 մետր տարածությունն ե, վորը յես պետք ե կտրեմ իմ պա-րաշյուտի հետ: Կամ ավելի շուտ, այդ տարածության պատ-կերն ե ուղեղիս մեջ: Հրահանգիչն ասես հասկանալով ինձ, քայլերը դանդաղեցրեց: Հավասարվելով ինձ, աչքերը կկո-ցելով նայեց բարձրացող արևին և կամաց, ասես ինքն իր համար, ասաց.

— Այսոր թռչելու հիանալի որ ե:

Յես հակաճառելու վոչինչ չունեյի: Որը ճիշտ վոր հիա-նալի յեր: Արևելքում ասես հսկա Մարտենի վառարան եր վառվում: Դեռ նոր բարձրացող արևի շողերը թափվել եյին ցրված ամպերի կույտերի վրա: Թվում եր, թե շուտով այդ կույտերը պետք ե հալչեն, ինչպես մետաղի դանդաղները հնոցում: Ներքե՛ր՝ գետնի վրա, աշնան ծիրանագույն տերե-ները փոքրիկ սվվոց եյին բարձրացնում: Այս բոլորը հրա-հանգչի ուշադրությունը չեր գրավում, կամ ավելի շուտ, ինձ թվում եր, վոր նա չի հետաքրքրվում, չի դիտում շուրջը: Ընդհանրապես շատ դժվար եր հրահանգչի կարծիքն իմանալ գեղարվեստական այս կամ այն խնդրի մասին: Նա սիրում եր լռել: Միշտ նայում եր լուրջ, իսկ յեթե հար-կավոր եր ծիծաղել, նրա փոքրիկ աչքերը կուչ եյին գալիս, այտերի վրա ստեղծվում եյին յերկու խորշոմներ:

Խոհուն դեմքով դառնալով ինձ, նա ասաց.

— Կեցցես, Գրիշա:

— Ինչո՞ւ, հարցրի հանկարծակի յեկած:

Առաջին անգամ յես հրահանգչից գովասանք եյի լսում: Նույնիսկ ամենալավ թռչող ուսանողին չեր գովում նա. Ամենալավ թռիչքից հետո ասում եր. «Մշակել ե հարկա-վոր»: Իսկ վատ թռիչքից հետո ավելի լավ եր գլուխդ տա-կառի՝ մեջ թաղեյիր, վորպեսզի չլսեյիր նրա հանդիմանու-թյունները: Իմ հանկարծակի հարցից հետո նրա դեմքի վը-րա վոչ մի փոփոխություն չկատարվեց:

— Դու տղաների մեջ առաջինը վորոշեցիր թռչել, բայց չվախենաս: Տես, մենք հիմա շատ թե քիչ կատարե-

լագործված միջոցներով ենք թռիչք գործում, իսկ մարդիկ հին, բոլորովին անպետք միջոցներով եյֆելյան աշտարա-կից ներքև են թռել: Խոսք չկա, վոր այսօրվա մեր միջոց-ները դեռ ամբողջապես կատարելագործված չեն, սակայն վստահիլ յեն: Ձե՛ք վոր մեր միտքն անիվի նման իր առանց-քի շուրջը չի պտտվում, նա առաջ ե շարժվում... Մեր ա-մին մի թռիչքը դեպի յերկիր այդ առաջ շարժման համար ոժանդակիչ մի ուժ ե...: Դա խնդրի մի կողմն ե: Մյուս կողմից ամին մի թռիչք արիություն ե ասիլի մարդուն:

Ինչպես գովասանքը, այնպես ել այս փրկստիպյությու-նը բոլորովին նորություն եր: Մինչ այդ, յես կարծում եյի, թե հրահանգչից միայն հրամաններ տալ գիտե և ու-րիշ վոչինչ: Յե՛վ իսկապես, ո՞վ կկարծեր թե հրահանգչի Զախարովի ընդունակ ե այդպես մտերմորեն խոսել: Տղա-ներն ողում նրա նկատողություններից պաշտպանվելու վոչ մի հնարավորություն չունեյին, իսկ հողի վրա ամաչում եյին ուղիղ նայել նրա աչքերի մեջ:

Մենք մոտենում եյինք անրողորմին: Անրողորմում նա ինձնից պիտի բաժանվեր, ուստի քայլերն ավելի դանդա-ղեցնելով շարունակեց.

— Դու գիտե՞ս, վոր յերեկ № եսկադրիլայից յերկու ուսանող պարաշյուտով վայր են իջել: Նրանցից մեկն իմ նախկին ուսանողն ե յեղել: Յե՛վ վոչինչ, յերկուսն ել հա-ջող. միայն մեկի վոտքը մի քիչ ցավում ե, հիմա պառկած ե: Բայց դու մի վախենա, լավ պատրաստվիր: Յես խոր-հուրդ եմ տալիս՝ այս քանի որս աղջիկներից հեռու կանգնես...

— Առանց ձեր խորհրդի յել, հեռու յեմ կանգնած, յես վոչ վոք չունեմ...

— Նո՛ւ, ավելի լավ, յես դա ի միջի այլոց եմ ասում: Նրա աչքերն ավելի կկոցվեցին: Հետո՝ ձեռքս սեղմելով, գնաց:

Մինչև տուն գալս, Սաշան տղաներին հայտնել եր իմ մոտակա թռիչքի մասին: Դա յերեաջ նույնիսկ տղաների սպասողական դրությունից: Հարց ու փորձն սկսվեց հան-րակաջարանի դռնից: Յերբ մտա ներս, Սենկան գրպանի կոճակն եր կարում: Ինձ տեսնելուն պես թողեց աշխատան-քը, մահճակալի վրայից թռչելով, ցցվեց առաջս.

— Նո՛ւ, Գրիշ, պատմիր, ասում են 700 մետրից պիտի իջնես:

— Ի՞նչ պատմեմ, բոլորն ասացիր արդեն:

— Այո, յես հասկանում եմ, բայց ասա, թե ինչպես յեղավ, վոր վորոշեցիր:

Յես նրան պատմեցի: Վերջում ավելացրի.

— Միևնույն ե, բոլորս ել պետք ե թոչնէք:

— Իսկ ինձ թվում ե, թե յես յերբեք չեմ կարողանա թոչել...

Հետո նա քիչ լռեց և կրկին հարցրեց.

— Իսկ պարաշյուտը նոր ե, թե՞ արդեն ստուգված:

— Նոր ե, նոր,— իմ փոխարեն պատասխանեց Սաշան, վորն այդ որը չհամաձայնվեց թոչելու:

— Այդպես, — նորից բացականչեց Սենկան, այս անգամ արդեն մտախոհ դեմքով:

Նա հարց ու փորձը դրանով վերջացրեց, սակայն շարունակում եր տեղում կանգնած մնալ:

Մյուս կողմից մոտեցավ Սահակյան Սուրենը, և սովորականից մեծ քիթն առաջ ցցելով, հարցրեց.

— Իսկ ի՞նչ հետ պիտի թոչես:

— Հրահանգիչ Չախարովի հետ:

— Ահա թե ինչի՞նչ աստոր գլուխդ լցնում եր: Ի՞նչ եր ասում:

Յես պատմեցի բոլորը:

— Իսկ ողում քեզ հայոյանքի գետում կլողացնիր:

Սաշան նորից սկսեց իր անսպասելի կատակները:

— Գրիշա, դու քո սիրած աղջկա հասցեն թող մեզնից վորեւ մեկի մոտ, մի գիտե, բան ե ելի, մի գուցե...

Նման վերաբերմունքն ուրիշ պայմաններում գուցե և չարժանանար իմ ուշադրությանը, սակայն այստեղ, ուր գործ ունես կյանքի և մահվան հետ, մի պահ ուշադրությունդ մեխվում ե: Ստիպված մտածում ես այն մասին, թե յոթ հարյուր մետր բարձրությունից սրընթաց դեպի յերկիր պիտի իջնես: Ձե՞ վոր մարդ ողում իջնում ե այն արագությամբ, ինչ արագությամբ քարի կտորը: Դողի նման մի բան ե անցնում մարմնովս: Սակայն Վասիան տեղից վեր կենալով, կուսքլիջի քարտուղարին հատուկ հաստատակամությամբ և հեղինակությամբ հայտարարեց:

— Ի՞նչ գուցե: Մենք ապագա ողաշունքս պետք ե պատերազմի ուսուցիչներ դառնանք: Մեքենայի վրա նստել, բարձրանալ ողում, դեռ բոլորը չե, պետք ե սովորել պա-

րաշյուտի հետ վարվել ճիշտ այնպես, ինչպես և մեքենայի հետ: Բացի դրանից, պետք ե տիրապետել նաև ստրատուֆերին...

Վասիան մի պահ լռեց, հետո նույն հասարակ, ընկերական տոնով շարունակեց.

— Մենք, այսորվա ողաշունքս, մեր մեջ դեռ պահպանում ենք յերբեք հողից չկտրվող մարդու բնավորության վորոշ գծեր: Մենք դեռ բրոնզե կամք չունենք: Այսոր ողը յերկրից շատ բանով ե տարբերվում: Սակայն մի քանի տամայակ տարուց հետո կտեսնենք, վոր ողը հաղթահարված ե ճիշտ այնպես, ինչպես և գետինը: Մարդիկ այն ժամանակ ողում հնարավորություն կունենան զրոսնել ճիշտ այնպես ինչպես ոթոյով կամ տրամվայով գետնի վրա: Ուրեմն, այսորվա մեր քաջությունը, արիությունը, վաղվա հաղթանակների հիմնաքարն ե...

Վասիան մինչ ողային դպրոց գալը յեղել եր կոմյերիտ-միության շրջկոմի քարտուղար, հետո պատմա-փիլիսոփայական ֆակուլտետում եր սովորել: Նրա յելույթները միշտ ել, ինչպես տղաներն եյին ասում, «փիլիսոփայական աստառ» ունեյին:

Այսոր վոչ վոք տրամադրված չեր նրա հետ վիճելու, քննադատելու նրա ապագայի մասին ունեցած տեսակետները: Շուտով խոսակցությունը դարձավ դեպի «կանանց խնդիրը», ինչպես սիրում եր ասել Սաշան, դեպի անցյալը, դեպի որվա նորությունները: Հետո խոսակցությունը վերջացավ նրանով, վոր Սաշան մի բայլ ինձնից հեռանալով, ասաց.

— Դու, Գրիշ, խնդրիր Չախարովից, վորպեսդի մեքենան քշի դեպի ձեր քաղաքը, սիրածդ աղջկա տան ուղիղ գլխին իջիր...

— Իհարկե, ավելի հետաքրքիր ե,— ավելացրեց Վասիան: Յես բոլորովին դադարել եյի մտածել թոչելու մասին: Ինձ հանդիպեց մեր եսկադրիլայի հրամանատարը.

— Ինչպե՞ս ես,— յեղավ նրա առաջին հարցը:

Նա գոհ մնաց իմ տրամադրությունից և ավելացրեց.

— Վաղը ժամը 11-ին պետք ե թոչես:

— Շատ լավ,— պատասխանեցի:

Սակայն այդ «շատ լավի» հետ ինչ վոր մի զգացմունք

նորից ինձ պատեց: Նորից ասես սիրտս սովորականի նման
չէր բարբախում:

Մյուս ուրը, հրահանգիչ Զախարովը, մինչև մեքենան
գործի գցելը, նորից կրկնեց թռչելու բոլոր կանոնները:
Նա խոսքերը մեկ-մեկ երաժշտում, ասես հատիկներ եր թա-
փում: Պարաշյուտան իր ձեռքով կապեց մեջքիս: Հետո նստե-
լով զեկի մոտ, ասաց.

— Նստիր:

Արևն իր ամենուրյա հնոցն արևելքում դեռ նոր եր վա-
ռել: Թեք շողերի տակ աերոդրոմում մի մշուշ եր իջել,
վորի նմանը հազիվ է պատահում: Այդ մշուշի մեջ ամեն
մի առարկա յերևում եր:

Մեր մեքենայի մոտ, բացի եսկադրիլիայի հրամանատա-
րից, կանգնած էին կողմնակի մարդիկ և մեր տղաները:
Սաշան, վոր անդադար հետևում եր իմ և հրահանգչի շար-
ժումներին, թվում եր, թե լրջացել է, սակայն դա թվում
էր: Նա միշտ հետևելով հրահանգչին՝ շարունակ նայում եր
ինձ ու շատ վարպետորեն աչքը հուպ տալիս: Այդ դիրքում
նա նման եր այն չարածձի աշակերտներին, վորոնք ողովե-
լով հանգամանքից՝ ուսուցչի հետեր կանգնած նրա ձեռքն
են կրկնում՝ հաճախ քիթը, բերանը, աչքերը ծռռռելով...

Մեքենան գործի գցվեց:

Ոգտադրոված գաղը՝ մեքենայի հետևում, փոշու հետ
միասին հսկա մի սյուն կազմեց: Հողը մեքենայից անջատ-
վեց: Թվում եր, թե նա աստիճանաբար ցածրանում է: Մեր
ներքևը գտնված սավառնակները կամաց-կամաց փոքրանում
էին: Քաղաքի տներն ասես յերևանալի խաղալիքներ լի-
նեցին: Մեր ներքևում Ազովի անրիժ հայելին արտացոլում
եր արևի արծաթե շողերը: Երկ թվում եր, թե մենք արե-
վից ել բարձր ենք գտնվում... Մեր մեքենան խախտում եր
ոգի խաղաղությունը և խլացուցիչ շառաչյունով ճեղքում
ոգի կուրծքը, դեպի վեր սլանում: Քամին անկանոն խփում
եր յերեսներին, սակայն դա մեզ համար նորոթյուն չէր:
Յերբ հասանք 700 մետրին, Զախարովը բղավեց.

— Պատրաստվիր:

Մեքենան այլևս վերև չէր սլանում:

Միայն աերոդրոմի վրա շրջան եր գծում:

Յես պետք է դուրս գայի, թեի վրա կանգնեյի և ինձ
գլորեյի ներքև՝ դեպի յերկիր: Փոխանակ դրան, յես նայեյի

ներքև՝ իմ ընկնելու տեղն ստուգելու համար: Մենք գլորն-
վում էյինք փշալար ցանկապատի վրա: Մտքումս ազում
եմ. «Թող անցնի հետո»...

Զախարովը նորից գոռում է.

— Նու, պատրաստվիր... Վերցրու...

Յես խցիկիցս զգուշ դուրս եմ գալիս: Վտքիս մեկը
դրել եմ թեի, իսկ մյուսը՝ սանդուխքի վրա: Ձեռներով ա-
մուր բռնել եմ թևերի հենարանից և պահում եմ:

Մեքենան յերկրորդ շրջանն է գծում: Զախարովը կա-
տաղել է: Սոսում է, սակայն չեմ հասկանում: Ձեռքերով
դանազան նշաններ ե տնում... բայց և այնպես դժվար չեր
հասկանալ, վոր հայտնում է... Նորից ուզում եմ գլորվել,
սակայն ձեռքերս չեն հարատակվում, չեն անջատվում:
Նույնիսկ թեքվում եմ ձախ թևիս վրա. թվում է թե, ահա
գնացի, սակայն ելի մեքենայից չեմ պոկվում... Ասես մագ-
նիսացած ուժերն ինձ բռնած ամուր պահում են:

Արդեն յերկրորդ շրջանի վերջն է. չորրորդը պիտի գնա:
Մի պահ մտածում եմ յետ դառնալ և մտնել խցիկս, սա-
կայն հիշում եմ ընկերներին, հրամանատարին... իսկ Զա-
խարովը նորից ձեռքով ինչ վոր նշաններ ե տնում: Յես
առկալս դրոթյան մեջ եմ: «Ահա վերջին անգամ է», ասում
եմ ինքս ինձ և ամբողջ մարմնով կախվում մեքենայից: Վեր-
ջին անգամ նայում եմ նրան և ձեռներս բաց թողնում...

Քամին աչքերս փակեց... Հետո մեջքիս վրա ինչ վոր շր-
ջուն լավեց: Իս նշան եր, վոր պարաշյուտս բացվում է:
Յեվ յերբ մետաքսե «հովանոցը» գլխիցս վերև փովեց, ինձ
թվաց թե այդպես ոգից կախված պիտի մնամ: Ասես հողը
բոլորովին չէր մոտենում: Նայում եմ շուրջս, քաղաքի տե-
րերն աստիճանաբար մեծանում են, նրանց հետ և աերո-
դրոմում կանգնած սավառնակները: Ծովը նույն հայելին
եր: Իմ մետաքսե պարաշյուտը նույնպես պսպրում եր արևի
տակ: Մինչ յես դիտում էյի չորս կողմս, հողը մոտենում
եր ու մոտենում... Մի քանի վայրկյան ևս ահա հողը վոտ-
քերիս տակն է:

Ո՛ր, վորքան կոշտ ու կոպիտ եր հողը: Յես վտքերիս
վրա մնալ չկարողացա, սակայն իսկույն բարձրացա, պա-
րաշյուտը դարսեցի՝ Յեկան՝ Սաշան և Վասիլան ել մոտս է-
յին: Ո՛ր, ինչքան էյին ուրախացել: Սաշան անհամբեր մո-
տեցավ և նրա առաջին հարցը հետևյալը յեղավ.

— Նո՛ւ, այսպէս ասած, ընկեր պարաշյուտիստ, ելի կը-
թռչե՞ս:

— Այո՛, նորից կ'թռչեմ...

Այս հաստատակամութիւնը մեր հրամանատարին դուր
յեկավ: Նա ինձ մի քանի հարցեր տվեց, վորոնց պատաս-
խանից հետո, ուրախ տրամադրութեամբ հեռացավ: Բացի
25 ուղբի նվերից, յերեկոյան՝ շարքի առաջ նա ինձ շնոր-
հակալութիւն հայտնեց:

Այդ ըոպեյին ուզում եյի բոլոր ուժովս դռալ, վոր
նա շնորհակալութիւն հայտնի վոչ թե ինձ, այլ նրանց,
վորոնց մոտ յես աճել, մեծացել եմ: Այո՛, անհրաժեշտ եր
շնորհակալութիւն հայտնել իմ ընկերներին, իմ լայնածա-
վալ յերկրին, վորտեղ սնվել, աճել եմ յես:

Բայց վորքան գեղեցիկ է, դուրեկան արևի շողերի հետ
դեպի յերկիր իջնելը:

— Նորից, Վասիլա, նորից պիտի թռչեմ, վորպեսզի
բրոնզե կամշ ունենամ... հայտարարեցի յես...

Այդ ըոպեյին Սաշան մոտեցավ եսկադրիլիայի հրամա-
նատարին, նայեց նրա խոր աչքերին և ասաց.

— Ընկեր հրամանատար, ինձ ել գրեցե՞ք... յես ել եմ
ուզում թռչել:

Յեյիսկ—1933 թ.

Գ Ի Ծ Ը Գ Ե Պ Ի Հ Յ Ո Ւ Ս Ի Ս

Խավարը լուծվել եր ջրի ալիքներում: Ալիքները ծան-
րորեն խփում են ափերին, ջարդվում, հետ նահանջում նո-
րից հարձակվելու համար: Նրանց համաչափ ֆշշոցը շրջա-
պատի համատարած լուսթյան մեջ խորհրդավոր սիմֆոնիա
յեր ստեղծում:

Ո՛, ինչքան խորհրդավոր է այստեղ խարսխած բար-
ժան: Ջրերը զարնում են նրա սև, լարծուն, կուպրած
կողերին, փշրվում, իսկ բարժան ճոճվում է ու ճոճվում...

Այսպիսի խավարում մարդուն թվում է թե գլխին կա-
պարե սարեր են դրված:

— Սը՛ս... հանգցրու ծխախոտդ:

Կայսի վրա յերկու սև գծեր մեկ իջնում, մեկ բարձրա-
նում եյին: Հետևի կանգնածը ծխախոտը ափում սեղմելով,
բարձրացավ կայսի վրա դրած սանդուխքներին և ցանկա-
նում եր հեռվում ինչ վոր բան տեսնել... Սակայն թանձր
խավարը ամեն տեղ ծածկել եր:

Ողի խոնավութիւնը նստում եր նրանց թոքերում և
դրանից ասես նրանց շնչառութիւնը խզվում եր: Սիւրուե-
ներն այդ դրութեամբ շարունակում եյին միայն:

— Քամին նոր ընկավ: Նա պետք է վոր այստեղ հա-
սած լիներ:

Դրանից հասակով յերկարը ուսերը վեր քաշեց:

— Ե՛հ—ջղայնորեն բացականչեց նա: Նորից շուրջը
թագավորեց ալիքների ձայնը: Հանկարծ յերկուսն ել թեք-
վեցին դեպի բարժայի մյուս կողմը: Փոքրը հանեց ատըր-
ճանակը և կանչեց.

— Կանգնիր, ռվ ե շարժվում այդտեղ:

Խավարում նա տեսավ մարդկային ինչ վոր մի սիւրու-
վետ, վորը կայսի մյուս կողմը անցնելու համար ճանա-
պարհ եր փնտրում...

— Յեւ եմ, ընկեր պետ:

Ձայնը ծանոթ էր: Յերկուսով թռան ծանոթ ձայնի կողմը և համարյա գրկած, յեկողին բերին բարձայի վրայի փոքրիկ սենյակը:

Յեկողը միջին հասակով մի մարդ էր: Նա հազած ունեւր զինվորական հնամաշ շինել: Յերկար ժամանակ հածիւած միտուքը և բխերը միախառնուելով, ծածկել էյին նրա բերանը, ծնոտը: Սոսկիւս միտուքը և բխերը միմիանցից բաժանվում էյին և նոր միայն յերևում էր մախորկայից սևացած ատամները: Աչքերն իրենց խոր բնից նայում էյին խելոք, ուշիմ: Սոսկիւս մարդ ակամա նայում էր այդ աչքերին: Կոմունարկան մի կողմը դնելով նա նայեց ընկերներին, կարծես դրանով ասում էր՝ «հիմա պատրաստ եմ, կարող եք հարցնել...»:

Գլխի հատ-հատ սպիտակած մազերը պսպղում էյին մոմի լույսի տակ:

Լույսը դրսից անտեսանելի դարձնելու համար սենյակի փոքրիկ պատուհաններից մեկը փակված էր հնամաշ մի անդրախտիքով, իսկ մյուսը գնդացրի յուզոտ շտապիկով:

Յեկողը հայացքով անտեղեց այդ ամենը և շարունակում էր լռել: Կայմի վրա կանգնած հասակով փոքրը նրա թևից բռնելով շտապ, բեկբեկուն ձայնով հարցրեց.

— Ինչ են անում տղաները:

— Սպասում էյին հետախուզության արդյունքներին:

— Իսկ հիմա...

— Ստացան—հանգիստ պատասխանեց նա:

— Իսկ ումից ստացան, մենք առավոտից մինչև հիմա սպասում ենք, Ալեքսեյը Հվերադարձավ:

Յեկողը նորից հանգիստ տոնով պատասխանեց

— Յեկավ:

Հարցնողի դեմքը պայծառացավ: Նրա գլխում ուրիշ կասկածալոր մտքեր էյին պտտվում: Նա լավ գիտեր Սև ծովի խենթությունները: Նրան թվում էր թե, Ալեքսեյը սովառնակի հետ միասին կնկնի խելագար ծովի գիրկը և կխորտակվի... Կամ՝ թշնամու նավերը կարող էյին հետապնդել նրան ու իմանալ բարձայի տեղը:

Այստեղ, անա այս բարձայից մի քանի հարյուր քայլ այն կողմ հիդրոաերոդրոմում կանգնած են թվով 9 ջրային սովառնակներ: Դրանք խորհրդային առաջին ողային

գալրոցի սովառնակներն էյին: Բարձան իր մեջ տեղավորում էր գալրոցի հրամանատարական կազմը: Սովորողներին համար ուսումնա ինքը կյանքն էր, պատերազմը:

Դպրոցը գտնվում էր թշնամու թիկունքում: Կարմիր-ները հյուսիսից հետապնդում էյին Դենիկինին: Սպիտակ-ներին թիկունքում գտնվող ծովափնյա քաղաքի բուշնիկները կարողացել էյին քաղաքը իրենց ձեռքն առնել, դրա հետ միասին նրանք հեղափոխել էյին ողաշուններին, գրավել իրենց կողմը: Բայց քաղաքի կտրված լինելը, նահանջող թշնամու մոտենալը ստիպում էր մտածել այն խնդրի մասին, թե ինչպես վարվել սովառնակների հետ: Սորտակել, թողնել փախչել, թե թռչել, կտրել թշնամու ֆրոնտը, անցնել կարմիրների մոտ: Սրանցից վորեւ մեկն ընդունելու համար հետախուզ էր ուղարկվել, վորոշելու թշնամու թիկունքի խորությունը և հեռավորությունը: Բոլորն անհամբեր սպասում էյին հետախուզի վերադարձին: Այդ էր պատճառը, վոր պետք—կայմի վրա կանգնած փոքրահասակ մարդն անհամբեր հարցրեց.

— Իսկ ինչ նորություններ և բերել... Ընկեր կոմիսար դու մանրամասն պատմիր, շուտ, միայն շուտ...

Կոմիսարը նայեց ուղիղ պետի աչքերի մեջ, քիչ լռելուց հետո տեղից հանկարծակի վեր թռավ:

— Ինձ թվում և թե, պետք և թռչել... Այո, միայն թշնամու վրայով թռչելը մեզ կփրկի... Սորտակել մեքենաները չարժե, թողնել փախչել մե՛ծ հանցագործություն է... Վաղը, վաղը և յետ պետք և թռչել...

Նա նորից նստեց և ձեռքերը փոքրիկ սեղանին դնելով ասաց.

— Ձկնից բանից չունեք, յես ուղղակի սոված մեռնում եմ...

Պետը փոքրիկ արկղից հանեց սև հացի մի կտոր և տալով նրան, սկսեց ինչ վոր բանի մասի մտածել:

— Լսիր Ալեքսանդր, յես համաձայն եմ քեզ հետ, մենք թեկուզ այսօր, նույնիսկ գիշերս կպատրաստվենք վազվա թռիչքին: Այո, վաղն առավոտյան կթռչենք, բայց դու չես իմանում ինչ և պատահել ողաշու: Սովորովի, այդ ազնվականի հետ: Նա պատրաստ և թշնամու մոտ անցնելու: Այսօր նա առանց քաշվելու տղաների մոտ ասել և «բուշնիկները մեզ սոված կկտորեն»: Սպիտակների մոտ արա-

ծիզ համար թեկուզ հաց եյին տալիս, իսկ աշատեղ ձուկ և կրկին ձուկ...»: Հարկավոր և նրան գնդակահարել, իսկ մեքենան խորտակել...

Կոմիսարը նորից տեղից վեր թռավ:

— Յես դրան դեմ եմ, մեքենան մեղ շատ և հարկավոր, ինչ կերպ ել ուզում և լինի, մենք պետք և հասցենք մեքենան... Յես դուռն եմ, դու ցանկանում ես հակաճառել, մի անի, չի հարկավոր, յես գլխում ինչպես պետք և վերաբերվել նրա հանդեպ: Դու հրաման տուր, վորպեսզի բոլոր մեքենաները դիշերս պատրաստվեն թռչելու համար: Վաղ առավոտյան պետք և ու բարձրանալ...

— Հրաման գրելու ժամանակ չկա, բոլորս գնանք սլաքապատվենք...

Նրանք բարձրացան դուռն յեկան:

2.

Ուսման ասես ավելի յեր թանձրանում... Դպրոցի պետը և կոմիսարը լուռ ու մուռն գնացին դեպի ծովափում խփած վրանները: Մի քանի րոպեյից հետո ամբողջ տեխնիկական կազմը վտարվեց վրա յեր: Սավառնակների շարժիչները պետք և ստուգվեց, յուզ, բենզին յցվեց: Հեռավոր, վտանգավոր ճանապարհ պետք և կտրվեց, հետևապես ամեն մի պտուտակ պետք և ստուգվեց, յուզվեց...

Ամեն ինչ կատարվում և շատապ, առանց աղմուկի: Տեխնիկները միմիանց մոտ եյին վազում, հարկավոր գործիքը վերցնում, նորից հետ տալիս...

Դպրոցի պետը նույնպես մի մեքենայի մոտից դեպի մյուսն եր գնում, հարցեր տալիս, խոսում: Յերը նա մոտեցավ այն մեքենային, վորի վրա պետք և թռչելու ողջու Սոկոլովը, պահ մի կարծես սիրտն սկսեց աննորմալ աշխատել: Այսոր մի ողջու նույնիսկ պատմել եր, վոր նա ցանկացել և վերցնել սավառնակը և թռչել սպիտակների մոտ: «Դրան կարելի չի հավատալ, այո, նա կանի», մտածում եր դպրոցի պետը և այլևս վոչ մի բայլ առաջ չեր գնում... «Թիկնույնն և, պետք և հրաժարվել քեզնից...»: այս ասելով նա մատներով սկսեց շփել սավառնակի թեկերը... Այդ պահին նա հանկարծ մտաբերեց կոմիսարի հետ ունեցած խոսակցությունը: Իսկույն ինչ վոր մտքեր միմիանց խառնվեցին:

— Ի՞նչ և մտածում կոմիսարը, ի՞նչպես և նա վերաբերվելու...

Մտքերի մեջ խորասուզված նա վաղեց կոմիսարին գրտնելու: Կոմիսարն այդ պահին գտնվում եր կարմիր բանակայինների վրանում, վորոնք պետք ցրվելին (նրանք թվով շատ չեյին) և սպասելին վերադարձին: Յեթե հաջողվոր լինեի մեքենաներում աեղավորել, նրանց բոլորին կը վերցնեյին: Կոմիսարը մանրամասն բացատրում եր թռչելու, թռչամու ֆրոնտն անցնելու անհրաժեշտությունը:

Դպրոցի պետը համարյա հեծվելով մտալ վրանը և սպասում եր կոմիսարի բացատրություններին վերջին: Պետի դեմքն մի տեսակ այլայլված եր: Նա ցանկանում եր վորպեսզի կոմիսարը շուտ վերջացնի... Յերը կոմիսարը խոսքը վերջացրեց, պետը նրա թեկին խփելով ասաց.

— Ալեքսանդր, դու շուտ վերջացրու, հարկավոր ես:

Մի քանի րոպեյից հետո նորից նրանք դուռն խավարումն եյին:

— Յես չեմ հասկանում, թե դու ինչպես ես վերջացնելու ողջու Սոկոլովին հետ:

— Ասացի, վոր դու դրա մասին մի անհանգստանա:

— Ախր յես ել ուզում եմ իմանալ, դու իմացիր, վոր նա վաղը թռչիքի ժամանակ իր ճանապարհը կփոխի... Տղաները պատմում են, վոր նա փախչելու նպատակ և ունեցել...

— Դու վանիս, — ասաց կոմիսարը Պետի բազուկը բռնելով. — բոլորովին մի անհանգստանա:

— Այ քեզ բան, մի անհանգստանա, ահա այսոր ժամը 5-ին թռչում ենք չե, յես պետք վոր իմանամ... պետք և գնդակահարել... Այո, այո, դա միակ յեղն ե... Մենք կխորտակենք մեքենան, նրա հետ միասին...

— Նորից դու տաքանում ես...

— Այ քեզ բան, ի՞նչպես թե տաքանում ես, թողնեմ, վոր մեքենան վերցնի տանի թռչամու բանակը... Հա, քեզ համար դա լավ կլին... Կամ թողնեմ, վոր մեզնից հետո գան տիրանան և մեր դեմ հանեն, հա...

— Վոչ, վոչ...

— Ախր դե ի՞նչպես, չե վոր ողջում նրա առաջը կտրել չես կարող, նա կարող և հաղար ու մի խաղեր խաղալ...

— Վանիս, տեսնում եմ, վոր շատ ես հուզվում:

Յեւ իսկապես դպրոցի պետը հուզվում եր, նա չեր կարող թույլ տալ վորպեսի սավառնակն անցնի թշնամու ձեռքը: Նույն ժամանակ խորապես համոզված եր, վոր ողջաւ Սովետիւր կդաւաճանի: Նա ազնվականի տղա յեր և մինչև հեղափոխութիւնը բանվորներին անպետք, ազնիւ հասարակութիւն վզին նստած վորդ և համարել, հիմա յեւ թերևս նա այդպես և համարում: Այո հիմա 1919 թիւն և և գիտեմ, վոր այդ «անպետք» մարդիկ Մոսկվայում իրենց կառավարութիւնն ունեն: Գիտեմ վոր նրանք ջարդում են Դենիկինին, Կոլչակին, Վրանգելին... բայց չեմ վոր ինքը բանվորներից վոչ մի սպասելիք չունի: Թերևս այդպես և մտածում նա, յերբ ցանկանում և փախել թշնամու կողմը: Թերևս բալչերիկների հետ համաձայնվելը նա յուր կյանքում մի թշուրիմացութիւն և համարում: Ո՞վ գիտեմ, համենայն դեպս, նա դեպի թշնամին և ձգտում և վորպես այդպիսին պետքեւ վոր վոչնչացվի: Այդպես և մտածում առաջին խորհրդային ողային դպրոցի պետ Իվան Պաստուխովը:

— Ի՞նչպես, ախր ի՞նչպես չհուզվեմ... ի՞նչ կարող ես անել յերբ նա վաղը գիծը ծոխ...

— Այ— և կոմիսարը ցույց տվեց կողքից կախած մատուցերը: Թող փորձի:

— Հ'ը — հեգնորեն արտաշնչեց պետը: Մինչև դու հանես, նա վահանաձև կբաշանտ, հետո կկորչի...

— Ձի անի, յես նրա մեքենայում կհասեմ...

Պետը հանկարծակի յեկած կազնեց: Նա կարծես լավ չհասկացավ կոմիսարի ասածի իմաստը:

— Ի՞նչ, հետը կհասես — զարմանքով հարցրեց նա

— Այո, ի՞նչ կա վոր, թող այն ժամանակ փորձի փախչել...

— Գովիւ ես Ալեքսանդր, քեզ եւ կփախցնի... կարծես հիասթափված պատասխանեց պետը և նորից սկսեց քայլել:

— Թող փորձի — պատասխանեց կոմիսարը շատ կարուկ ձայնով — այն ժամանակ յերկուսս եւ Սև ծովի հատակը կգնանք...

Մի պահ տիրեց լուսթիւն:

— Դեմ, հառաչեց պետը, դու աչքերդ բաց, դեպի հիմար մահն ես գնում... Նրան մենակ պետքեւ վոչնչացնել այստեղ, իսկ մեքենան խորտակել...

— Դու, Վանիա, չես իմանում, թե մեր նոր Միութիւնը մեքենաների վորքան մեծ կարիք ունի... Ընկեր Լենինը դրա մասին անձամբ և խոսել, իսկ դու առաջարկում ես խորտակել, յերբ զոնե հիսուն տոկոսով չվերու հույս կա... Մենք չենք կարող ամեն ինչ խորտակել: Այն ինչ կարելի յե ազատել, ողտաւործել հեղափոխութիւն համար, պետք և կատարենք...

Նրանք նորից լուեցին:

— Դե լավ, ի՞նչ կա վոր, համաձայն եմ... Միայն թե Սաշա, քեզնից եմ վախենում, ևս սրիկան...

— Վոչինչ... լուր յերեք ժամ և ֆապել մինչև չվելը, հարկավոր և զոնե քիչ քնել...

Նրանք ձանապարհվեցին դեպի բարձայի փոքրկ սենյակը: Ետը լուր եր, միայն հեռվում լսվում եր տեխնիկների մուրճերի ձայնը և մեկ եւ ջրի ալիքների վշտը...

3.

Դեռ ժամը հինգից 30 րոպե պակաս եր, յերբ տեխնիկներին մեկը յեկավ սենյակը, պետին զեկուցեց մեքենաների պատրաստ լինելու մասին: Ջրակայարանի ափին այսու աջ կողմ ելին վաղում, շտապ խոսում, վոմանք եւ հայհոյում:

Կոմիսարը և պետը դնացին դեպի մեքենաները: Քիչ հետո բոլոր ողաշունները նստած իրենց խցիկում, սպասում ելին հրամանի, վոր պիտի տար դպրոցի պետը: Կոմիսարը նստեց ողաշու Սովետիւրի սավառնակի յետին խցիկում: Ողաշույն թաղուն ձեռքը տարավ դեպի մատուցերը և սպասում եր:

Կարմիր դրոշմ իջավ, նորից բարձրացավ — Թուշելու համար իրավունք ստացված եր: Ծարժիչների խլացուցիչ աղմուկը լսվում եր մեքենաների թեւերին ու կորչում ջրի ալիքներում: Ծովում հսկա ալոսներ բացվեցին... Ճերմակ փրփրակալած ալիքները միմյանց ելին զարնվում և հետ գնում... Ողակով կանգնած ողանավերի պտուտակները շարժվեցին... Քամու հզոր ալիքները թեւերի տակ մտնելով, աստիճանաբար բարձրացրին նրանց:

Ափին ֆապածները հրաժեշտի նշաններ ելին անում: Ջրի վրա սավառնակները դեպի արեւը ելին գնում: Ողբարձրանալով, կռուկները փոքրիկ յերամի նման փոխե-

ցին ուղղութիւնը: Նրանք վերցրին գիծը դեպի Հյուսիս — Մոսկվա, իսկ հետո Պետերբուրգ:

Բայց հետո ուղղակի թեքվելու տեղ, սավառնակներէց մեկը փոխեց ուղղութիւնը:

Նա գնում էր դեպի արեւմտյան կողմը:

Սկզբում վոշինչ նկատել չէր կարելի,

կոմիսարը տեսնում էր, թե ինչպես մյուս մեքենաներն իրենցից հեռանում են, թռչում բոլորովին հակառակ կողմը Նա սկսեց բղավել... Սակայն քամու հուժկու հոսանքը նրա ձայնը շուրջերէց վերցնում էր ու փախցնում...

— Լսիր, փոխիր, հրամայում...

Ողջուն վոշինչ լսել չէր կարող, նստած էր առաջին կարէնում, իսկ քամին նրա կողմից հոսում էր դեպի հետ: Կարծես նա գիծը, ուղղութիւնը չի փոխել, կարծես նա չի գնում դեպի դաւաճանութիւնը, այլ այնպես, սովորականի նման թռչում է... Սակայն ողջուն Սոկոլովն այդ բոլորներին գիտեր, վոր թռչում է դեպի թշնամին, վոր նա դաւաճանում է: Այդ, այո, դաւաճանութեան այդ պահին, նրա դեմքի հատ—հատ չաճիլված մազերը, կարծես ուղղահայաց դրութիւն էյին ստանում: Նրա ներքին ծնունդն ավելի պինդ էր կաշւում վերինին, աչքերը կուչ էյին գալիս... Նրա մատները սկսում էյին դողալ և ատամների արանքից ինքն իրեն շնչում էր «նա չի համարձակվի, թող հազար ատրճանակ ունենա, բայց իր կյանքը ևս թանգ է... Այդ մարդիկ հերոսներ են մինչև մահվան րոպեն, իսկ յերբ մահը յուր յերախն է բաց անում նրանց կուլ տալու համար, նրանք գերադասում են գերի լինելը... Գիտեմ, գաղանները, նույնիսկ գիշատիչ, սոսկալի գաղանները մինչև մահն են սարսափելի...»

Այդ մտքերում նա դիտում էր հեռու հորիզոնը, վորի հետեւից շուտով պետք է յերեւար ցամաքը... Այնտեղ են Սոկոլովին հարկավոր մարդիկ, այն ափի մոտ նա կիջնի, կներկայական ֆրոնտի, այո ֆրոնտի հրամանատարին, կասի վոր բոլշեւիկներից մի մեքենա յե բերել, իսկ մեքենայի հետ ել գերի... Նա յել ի՞նչ գերի, եսկադրիլիայի ամենամեծին, դեկավարին, կոմիսարին...

Մինչդեռ այդ պահին կոմիսարը ձեռքը տարավ դեպի կողքից կախած ատրճանակը: Նրա փոքրիկ, խոհուն աչքերն ասես ցանկանում էյի խոռոչներից դուրս գալ: Նա ցանկա-

ցավ կարէնում կանգնել, ձեռքով խփել Սոկոլովին, վոր պեսդի նա դեպի յետ նայի: Գոտիները, վորով նա կապկըպ վել էր, խանգարում էյին, չեյին թողնում հասակով մեկ կանգնի և ձեռքը մեկնի ողջունին: Ձեռքի ճարպիկ շարժումով նա աղաւղեց գոտիներից, կանգնեց և ձեռքով հարվածելով Սոկոլովի մեջքին կանչեց.

— Տեսնում ես, նրանք վոր կողմ են թռչում...

Սոկոլովը գլխով հալանութեան նշաններ էր անում: «Ի՞նչ է գլխով անում» պահ մի մտածեց կոմիսարը և նորից ձեռքով խփեց:

— Ուր ես թռչում...

Սոկոլովը մատով ցույց տվեց արեւմտյան կողմը:

Կոմիսարը հանեց ատրճանակը, ցույց տալով նրան բղավեց.

— Տեսնեմ ես, փոխիր ուղղութիւնը:

— Ի՞նչ կա վոր, այն ժամանակ... Բայց չեք, չեք համարձակվի... Ձեք վոր դուք ել ինձ հետ եք:—այս ասելով Սոկոլովը ցույց տվեց սավառնակի տակը գտնվող Սև ծովի խաղաղ դեմքը: Ներքեում ջուրը հայելու նման փայլում էր արշալույսի շողերի տակ: Վերեւից թվում էր թե մեկը դիտավորյալ վերադրով ապակու համատարած շերտեր է փռել: Արշալույսի շողերը թափանցելով հստակ ողը, խրվում էյին այդ շերտերում... Յերբ մարդ սովորաբար նայում է առավորում մաքուր այդ ողին, նրա մեջ ցանկութիւն է առաջանում ծծել այն: Ծծել, ինչպես մանուկն է ծծում մոր կենսաբար կտթը: Այնտեղ ափում, վորտեղից քիչ առաջ եսկադրիլիան ող բարձրացավ, հսկա բարժան յերեխայի խաղալիքի նման ճոճվում էր, ճոճվում... Ափում մնացածները գուշողույն հատիկների նման շարժվում էյին զանազան կողմեր:

Վերեւից, ողից թվում էր թե և՛ այդ կուպրած բարժան, և՛ այդ մարդիկ, միշտ ել պետք է մնան իրենց աեղում... կարող են մարդիկ փոխել իրենց տեղը, քայլել ուրիշ տեղ, մինչդեռ սև բարժան այնքան հանդիստ էր ճոճվում...

Ի՞նչ է կատարվում յերկրի վրա, ինչ գեղեցկութիւն ունի ներքեում գտնվող ծովը, դրա մասին կոմիսարը չէր կարող մտածել: Նրան նույնիսկ չէր հետաքրքրում իր դիր-

քը — այն բարձրությունը վորի վրա նա գտնվում եր: Նա տեսնում եր միայն առաջին կաբինում նստած ողաչույին: Նրա գլխում մեխվել եր միայն և միայն մի միտք — այն, վոր անջատվել են եսկադրիլայից և թռչում են բոլորովին այլ կողմ... Թռչում են թշնամու կողմը:

Ել համբերություն չկա: Նա նորից նայեց սավառնակների յերամին, վորոնք ամեն բոպե հեռանում եյին իրենցից, հեռանում... Ախ, յեթե ինքն իմանար սավառնակ վարելը, այդ սրիկային ինչպես կվռչնացներ ափում: Իր սեփական ձեռքով դեպի նրա սիրտը կուղղեր ատրճառակի փողը, բաց կթողներ բոլոր յոթ փամփուշտը... Հիմա, այ... նրա մտքով պահ մի անցավ կնոջ պատկերը, յերեսխաների հասակը... Տղաներից ամենափոքրը, վորը ձմեռը կոշիկներ չունենալու համար անից դուրս չեր գնում, իսկ արտաքնոց գնալիս բորիկ վոտքերով վազում եր ձյունի վրայով: Չե՞ վոր այդ փոքրը դրսից տուն վազելուց հետո լալիս եր, մինչև սառած վոտքերի ցավը չանցնի: Նրա մանկական աչքերից հոսում եր ամենաանկեղծ արցունքը, թրջում նրա անդուլն դեմքը: Յեվ միշտ, յերբ հայրը տանն եր լինում, նա հազիվ սովորած բռնեցով, մանկական առողջանությամբ հարցնում եր.

— Հայրիկ, ի՞նչ յեղը ես, ինձ համալ կոսիկներ գնելու...

Ապրում ե՞ արդոք այդ փոքրը: Նորից նրա փոքրիկ վոտքերը մըսում ե՞ն, սառչում... Ի հարկե, ապա ո՞վ կարող եր նրա համար կոշիկներ գնել... Հիշողությունով արբած նա նորից ձեռքը բարձրացրեց: Այս անգամ նրա ձեռքում բռնած կար սև ատրճառակը: Նա կանգնած եր, նայեց դեպի ծովը, վորն այնքան անսահման եր թվում... Նայեց հեռացող սավառնակներին...

Քամին խելագար ճնշումով ստիպում եր նրան նստել, բայց կոմիսարը մի ձեռքով բռնել եր կաբինի ծայրից: Քամին սպառնում եր պոկել նրան, դուրս շարտել... Կոմիսարը կորացավ մեջքից և աջ ձեռքը թափով իջեցնելով Սոկոլովի գլխին հրամայեց.

— Սրիկա, այ դեպի այն կողմ թռի...

Սոկոլովը զաղանացավ: Նստած լինելով առաջին կաբինում, նա վոչ մի հնարավորություն չունեի կոմիսարի հար-

վածին հարվածով պատասխանելու: Նա ինչ վոր բացասական նշաններ եր անում.

— Շան նման կսպանեմ...

Կոմիսարը դեռ հույսը չեր կորցրել: Նրան թվում եր, վոր Սոկոլովը կենթարկվի ատրճառակի ուժին: Մինչդեռ Սոկոլովը նայելով կոմիսարին միայն ծպտում եր: «Ձի համարձակվի, իր կյանքն իր համար նուշնպես թանգ ե»... Նրա գլխում մի միտք ծագեց՝ ողում ողակ կազմել ողում — վորի ժամանակ կոմիսարը ծովը կգլորվի: Յեվ վայրկյանապես նա ավելացրեց գազի քանակը, սավառնակի «քիթն» իջեցրեց, վորպեսզի պտտվելու համար արագություն ստանա...

Ափում մնացածները նայելով «խելագար» սավառնակին չեյին կարողանում հասկանալ այն, ինչ այդ բոպեյին կատարվում եր սավառնակի վրա: Յեվ եսկադրիլայից անջատվելը, և՛ աննորմալ ընթացքը հանելուկային մի բան եր: Բոլորը գլուխները դեպի վեր եյին բարձրացել և դիտում եյին սավառնակի խելագար ընթացքը: Ի՞նչու այդ մեքենան անջատվեց մնացածներից: Ի՞նչու նա թռչում ե անդամալուծ յեղած թռչունի նման: Վոչ վոք այս հարցերին պատասխանել չեր կարող: Նրանք միայն հանդիսատեսներ եյին և յեթե հասկանային ել, վոչ մի կերպ ոգնել չեյին կարող: Ի՞նչպես ոգնել: Կրակե՞լ դավաճան ողաչուի վրա, բայց չե՞ վոր նույն մեքենայի վրա նստած եր իրենց բոլորին սիրելի կոմիսարը: Սպանեն ողաչույին, բայց չե՞ վոր կոմիսարը մեքենան վարել չգիտե: Յեվ նրանք յերկուսով պետք ե գլորվելին Սև ծովի անդունդը: Յենթադրենք, նրանք կարող են կրակել, բայց չե՞ վոր մեքենան այնքան ել ցածր չե: Տվյալ դեպքում միայն լավագույն հրացանաձգի գնդակը կարող եր նպատակին հասնել:

Այո, այն ինչ կատարվում եր ողում, գետնի վրա նույն պահին հասկանալ չեյին կարող: Նրանք տեսան թե ինչպես մեքենան քիթն իջեցրած արագություն ե ձեռք բերում: Ահա նա, մեջքից ասես կորացավ, քիթը վեր բարձրացնելով գնաց պտտվելու: Հենց ճիշտ այն պահին, յերբ մեքենան յերեսնիվայր դրուծյան մեջ եր, հետեվի կաբինից ինչ վոր բան ցած գլորվեց:

Սառսուռը պատեց ամենքին:

Ափուս կանգնածներից յերկու հոգի փոքրիկ նավակ նստելով, սլացան այն կողմ։ Բայց սա լինչ ե։ Մովի ջուրը պատուվեց, ասես մեկն այդ համատարած հայելուն գորեղ մի բռունցքով հարվածեց։ Գոյացավ ջրի հսկա ձագար, վերացավ այն, բայց սա լինչ ե, այն լինչ մնաց ջրի յերեսին։ Նավակի վրա նստածները լարելով բոլոր ուժերը, հասան ընկած տեղը, ջրի վրա լողում եր կաշիից պատրաստած փոքրիկ մի բարձ, վորին ողաչունները չվելու, կամ մեծ թռիչքների ժամանակ տակներն եյին գնում... Ուրիշ վոչ-ինչ այստեղ չկար։ Միայն բարձի շուրջը ջրի ողակներ եյին գոյանում և այնպես ել ողակաձև հեռանում։ Նավակի վրա նստածները վերև նայեցին։

Կոմիսարը հասկանալով ողաչույի հրեշավոր միտքը, իսկույն և հետ վտանները գցել եր կաբինի միջից կապած թուկի ողակը, իսկ յերկու ձեռքով, վորոնց մեկի մեջ ամուր բռնած ունեւ ատրճանակը, պինդ, կպել կաբինից։ Յերբ մեքենան գլխիվայր դուրսից դուրս յեկավ, նա նորից կորացավ մեջքից և նորից ամուր հարվածելով ողաչույին, կանչեց։

— Տես, վերջին ըրպեններդ ես ապրում, փոխիր ուղղութիւնդ...

Այդ պահին ութ սավառնակները, վոր վերցրել եյին գիծը դեպի հյուսիս, հետ դառնալով պտտվում եյին կոմիսարի շուրջը։ Ինչպես յերեւում եր նրանք նպատակ եյին դրել խանգարել ողաչու Սոկոլովի ընթացքը։ Նրանք նույնպես գուրկ եյին կրակելու հնարավորութիւնից։ Եսկադրիւիայի պետը մի գարկով կջախջախեր Սոկոլովի գլուխը, բայց լինչպես անի, չե վոր իր լավագույն ընկերը գտնվում ե նրա մոտ։

Ողաչու Սոկոլովը ցանկանում եր նորից պտույտ գործել, բայց այդ պահին կոմիսարը հարվածելու փոխարեն ատրճանակի փողն ուղղեց ողաչույի ծոծրակին։ Յեւ կոկորդով մեկ կանչեց։

— Չեմ թողնի, սրիկա, չեմ թողնի...

Յերբ ողաչուն սավառնակի քիթը նորից իջեցրեց, կոմիսարը նայելով ընկերներին, վորոնք մի քանի տասնյակ մետրի վրա չորս կողմ շրջում են, ցուցամատն ատրճանակի ձգանին աստիճանաբար հպեց։ Մի քանի ըրպեյից հետո

ողաչուն գլուխը դրեց կրծքին։ Մեքենան շանթահարված թռչունի նման վահանաձև ուղղվեց դեպի ծովը։

Կրակոցից հետո, շարժիչի աղմուկի միջից լսվում եր։

— Չեմ թողնի, չեմ թողնի...

Այդ «չեմ թողնի» լսվում եր մինչև ջրի մակերեւոյթը։ Սավառնակը հսկա ուղմբի նման խփեց ծովի մակերեւոյթին։ Ջրի ճերմակ շերտերը ծառս յեղած ցրվեցին չորս կողմ։

Իննից մնացած ութ սավառնակները նորից փոխեցին ուղղութիւնը, խորտակման ուղղութիւնը որում հրաժեշտի շրջան գծեցին և նորից վերցրին — չիծը դեպի հյուսիս։

Վորոշելով դրա Բագու
1935 թ.

ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Փոքրիկ սենյակի դուռը բացվեց. յերիտասարդ մի կին գլուխը հանելով հարցրեց.

—Ո՞վ ե.

Նրա ձայնը թարմ եր, ինչպես 18 տարեկան աղջկա ձայն: Աչքերն ասես ուռել էին յերկար քնից: Այդ դուռը թյամբ նույնիսկ նա գեղեցիկ եր—գրավիչ: Յերկար մազերն անկանոն թափվել էին թե՛ կիսաբաց կրծքի և թե՛ ուսերի վրա: Ճերմակ թափանցիկ ներքնահագուստի տակից յերեւում եր նրա թարմ լիքը կուրծքը, մարմարե մարմինը: Դեռ դուռը բանալիս նա ձեռքով տրորում եր աչքերը և ըստ սովորության չեր կասկածում, վոր դռան հետևում ուրիշ մարդ կարող ե լինել: Բանալուց հետո յերիտասարդ կինը հանկարծակի յեկած, դուռն ամուր թափով հետ փակեց: Դրա հետ միասին այնպիսի մի ճիչ արձակեց, վոր յերիտասարդ հյուրն ստիպված եր շրջվել:

—Ա՛խ, սատանան տանի, Սաշա, սպասիր, յես մերկ եմ — դռան հետեւից կանչեց յերիտասարդ կինը: Այդ ձայնին հետեւեց սովորական այն շրջյունը, վոր լսվում ե հագնվելու ժամանակ:

Յերիտասարդը, վորը հագին ունեւր ռազմական ողաչույի հագուստ, շրջվելով սկսեց պատերին նայել:

—Յես տեսա, վոր մերկ ես, հագնվիր խնդրեմ—պատասխանեց նա և շարունակեց մոխրագույն պատերին նայել: «Յես տեսա»-ի մեջ նա կարծես առանձին մի շեշտ եր դնում:

Դռան հետեւից այլևս վոչ մի ձայն չեր լսվում: Մի քանի րոպեից հետո յերիտասարդ կինը դուռը բանալով, մեղավորի ժպիտը դեմքին հյուրին ներս հրավիրեց.

—Ճնդրեմ:

Հյուրը ներս մտնելով, հետախուզի նման աչքերը մանածեց փոքրիկ սենյակում և ըստ յերեվույթին վոչինչ կաբեվոր չտեսնելով, ձառեցավ հայելուն:

—Չափազանց շատ ես քնում, Ժենյա, իսկ Քւր ե Վալոդիան,

Ժենյան մահճակալը կարգի բերելով նույն ժպիտը դեմքին պատասխանում եր յերիտասարդի—Սաշայի հարցերին: Նա մերթ ընդ մերթ ձեռքի գործը թողնելով, նայում եր Սաշային և նորից շարունակում այն: Նրանց խոսակցությունը վերաբերվում եր առորյա խնդիրներին: Բովանդակությունը հետաքրքիր չեր, վորովհետև քաղաքից հեռու այս շենում (պասյուկայում) Սաշան շատ ծանոթներ չունեւր, իսկ Վալոդիայի մոտ, վորի կնոջ հետ հիմա խոսում եր, շատ հաճախ եր լինում: Թերևս դա յեր պատճառը, վոր խոսակցությունն ընթանում եր դանդաղահոս գետի նման: Ժենյան հարցրեց Սաշայի գործի չգնալու մասին, իսկ Սաշան յերեկվա անց ու դարձի մասին: Յերկուսն ել միմյանց պատասխանեցին և թվում եր թե՛, հյուրը ձանձրույթից պետք ե վեր կենա ու գնա: Սակայն թե՛, հյուրը և թե՛ տանտիրուհին իրենց մեջ մի բան ունեյին, վորին յերկուսն ել սպասում էին: Դա յեր պատճառը, վոր Ժենյան կանացի խորամանկ աչքերը զաղտագողի պատեցնում եր հյուրի ամեն մի շարժվածքի շուրջը, ցանկանալով իմանալ նրա ամեն մի Ժեստի իմաստը: Ի հարկե այդ րոպեյին նրանք միմյանց չեյին հասկանում: Այն, ինչի մասին ստածում եր յերիտասարդ տանտիրուհին, թերևս Սաշայի համար մինչև գերեզման մնաւր անկարելի և անհասկանալի մի բան: Ժենյան գուցե և ընդհանրապես կարողանում եր թափանցել յերիտասարդի ներքինը, սակայն այդ պահին նա դիմացինին չեր հասկանում:

Նրանց լուռությունն աստիճանաբար փոխվեց, տեղի տալով յերկուսի համար չափազանց հետաքրքիր կրքոտ խոսակցության:

Սաշան իր ընկերոջ Վալոդիայի մոտ գալիս եր այն նկատառումով, վորպեսզի հանդիպի Վալոդիայի քրոջը—Նի: նային: Այսօր նույն նպատակով յեկել եր, սակայն վոչ սովորական ժամին, յերբ ընկերը նույնպես տանն եր լինում, այլ առավոտյան: Նրան թվում եր թե՛, Նինան ասան ուր վոր ե, պետք ե ներս մտնի և միասին գնան զբոսնելու:

(Սաշան ձախ թեի բուլ մատը վիրավորել եր և դրա պատճառով թուխքներին չեր գնում)։ Ապաստողական դրուժյունից դուրս գալու և անհարմար լուծթյունը խզելու համար, Սաշան նորից ասաց այն, ինչ ասել եր մի քանի րոպե առաջ։

— Ժամը 10-ն ե, իսկ դու նոր ես զարթնում, թափուհու նման ես ապրում։

Ժենյան նորից բազմիմաստ ժպտաց, միաժամանակ թեերը լայն ծավալելով։

— Յերեկ ուշ ենք քնել, նինային ճանապարհեցինք, մինչև քաղաքից տուն կհասնելինք, արդեն ուշ եր։

Սաշան ասես անգիտակցաբար ասեղների վրա յեր նըստել, տեղից վեր թռավ և գնաց դեպի Ժենյան։

— Ուր գնաց նինան։

Ժենյան վորպեսզի ազատվի Սաշայի տարված հայացքից, տեղից վեր կենալով ասաց.

— Սպասիր, թեյ տաքացնեմ, բոլորը կպատմեմ...

— Վոչ, հիմա պատմի, — այս ասելով Սաշան բռնեց Ժենյայի թեը, թույլ չտալով, վորպեսզի նա տեղից շարժվի։

— Դու դեռ չդիտեմ։ Մոսկվա գնաց, «այստեղ, ասում ե, ձանձրույթից կմեռնեմ; բացի դրանից վոչինչ չես սովորի...»։

— Մոսկվա, մեքենայորեն կրկնեց Սաշան — դա, իսկ ինձ դրա մասին վոչինչ չի ասել...

Նրանք յերկուսով նստեցին։ Այս անգամ միմյանցից այնքան մոտիկ, վոր Սաշան զգում եր խոսակցից փչող անուշ ոճանելիքի հոտը։ Նա ուժեղ, թարմ յերիտասարդ եր, վորի համար բառի բուն իմաստով ամուսնական կյանքն շատ խորհրդավոր մի բան եր թվում։ Այդ կյանքի բոլոր գիտեան կողմը նրան հայտնի յեր, այնուամենայնիս վոր հարցում նա ուրիշ կարեվոր բաներ եր վորոնում։ Բացի դրանից, նա յերիտասարդության այն հասակն եր ապրում, վորին կանացի մերկ թեփն իսկ ընդունակ եր գոգոել...

— Իսկ դու կարծում ես մեզ հետ բացսիրտ եր — Ժենյան ավելի կորացավ, ասես, զաղտնիք եր ասում — նա իրեն մեծ իդեանների տեր մարդ եր հաշվում... Նրան դուր չեր գալիս մեր շրջապատը, վորովհետև այստեղ ֆեդաբոտ, առավրա, վայլա, տանգո պարելու հնարավորություն չկա։ Այդ դու տեսնելիք թե ինչպես յերը գրականություն, յերաժշտության և պարերի մասին խոսք եր լինում, նա իրեն ամենազետ եր համարում։ Մի որ նույնիսկ պատմ ե

«ողաշունեքը հերոսներ են — դրա համար նրանց սիրում եմ, սակայն նրանք լուրջ խնդիրների մասին մտածելու ընդունակություն չունեն...»։ դրա համար նրանց հետ դժվար ե ժամանակ անց կացնել... բոլորն ել, ասում ե, — ինձ նայում են վորպես կնոջ, զգվելի յե...»։

Սաշան խոսակցուհու վերջին բառերից զուլիսը քարշ եր զցել ու յերկու ձեռքով բռնել։ Նա դեռ չեր կարողացել վորոշել՝ յերա՞յ ե այդ, թե՞ իրականություն։ Ի՞նչու նինան գնալու մասին իր հետ գեթ մի անգամ չխոսեց։ Փահ մի նա կարծեց թե այս բոլորը մտածված խոսակցություն ե։ Այս բոլորի մեջ մեղավոր ե Վալոդյան, — մի քիչ հետո մտածում եր — նա չի ցանկացել վորպեսզի բուլը մնա այս «մութ» անկյունում։ Նա յե քրոջ մեկնելու պատճառը...։ Յեվ մի թե՞ Վալոդյան կարծել ե թե Սաշան քրոջ հետ հետին մըտքերով ե բարեկամանում։ Միթե նա չեր նկատում այն անկեղծ բարեկամությունը, վոր ստեղծվում եր իր և նինայի միջև։ Վոչ, վոչ, այստեղ ուրիշ, Վալոդյայից կախված ուրիշ բան կա, վորն ըստ յերեվույթին միշտ ել իրենից թագցրել են։

Քաղաքից կտրված անապատի մեջ, այս մի քանի տնեում միակ կինը նինան եր, վորի հետ անց եր կացնում իր ազատ ըրպեները։ Հիմա նինան չկա և յերեվի ընդ միշտ նրան չի տեսնի։ Սաշան այլևս չեր խոսում, նա չեր կարող հասկանալ այն ամենը, ինչ կատարվել եր։

Ժենյան թափանցում եր Սաշայի — կոստյուկովի ապրումների խորքը։ Նրա կանացի աչքերը կարողանում եյին թափանցել մարդկային հոգու խորքը, դիտել, հասկանալ այն ապրումները, վորոնք այս կամ այն պատճառով չեն արտահայտվում։

«Յես վրեժխնդիր կլինեմ» — մտածում եր Սաշան։ Այդ ըրպեյին Ժենյան կիսամերկ թեը Սաշայի վզով պատ բերելով, ասաց.

— Մի փքվի, տխուր չի լինի...

Յերիտասարդն առաջին անգամն եր տեսնում կնոջ, վորն իրեն այդքան մոտ նստած գուրգուրի։ Կանացի ջերմությունն ելեքտրականության նման հոսեց Սաշայի ամբողջ մարմնով։ Նույնիսկ նինայի հետ այդպիսի դուրալի զգացմունքներ չի ունեցել... նա զուլիսը բարձրացրեց և նրանց հայացքնե-

լը միմյանց հանդիպեցին: Սաշան կարծես առաջին անգամն էր զգում, վոր իր ընկերոջ կինն այդքան թարմ է, փափուկ և յերիտասարդ: Նա մինչ այդ չէր նկատել ժենյայի գեղեցկությունը: Գուցե այդ բոլորը ծածկված է յեղել Նինայի ներկայությամբ և գեղեցկությամբ: Նա զգում էր, վոր ժենյայի թևից յեկող տաք հոսանքից բոլոր մկանները ձգվում են: Սակայն այս բոլորն յերազ է, թե իրականություն:

Լուս, առանց վորև ե խոսք ասելու թևերը լայն տարածելով պատ բերեց ժենյայի մարմնով: Կոստյուկովն այսպիսի քաղցր ընկերներ վայելելու հնարավորությունից դուրկ է յեղել, իսկ առնական ուժը տարիներին ընթացքում կուտակվել է նրա մկաններում:

— Լսիր, Սաշա, դու գժվել ես...

Դիմադրելով բողոքում էր ժենյան: Սաշան ճիշտ վոր գժվել էր: Այդ պահին նա մոռացել էր, վոր գրկինը յուր լավագույն ընկերոջ կինն է: Նա մոռացել էր, վոր իր բոլոր զգացմունքները կապված էյին Նինայի հետ, վորը յեբեկ միայն ճանապարհովեց: Ժենյան բոլոր ուժով ցանկանում էր ազատվել «խելագար» հյուրի գրկից, սակայն նա բաց չէր թողնում: Ի վերջո գազազված, բուժ մատով ամուր ճգմեց Սաշայի քիթը: Սաշան ստիպված բաց թողեց գրկինը և չզիտեր ինչ անի: Կարմրած կինը գրկից ազատվելով մի քանի քայլ հեռ-հեռ գնալով, ցուցամատով դուռը ցույց տալով, հրամայեց.

— Դուրս:

Հյուրն ասես ապուշ էր դարձել:

— Դուրս—նորից դայրութով կրկնեց ժենյան—դուրս, առանց դանդաղելու...

— Եդ ի՞նձ ես դուրս վունդում—ապշած հարցրեց Սաշան:

— Այո, այո, ահա դուռը, դուրս ասում եմ թե չե... ա-վելի վատ կլինի...

— Ժեն...

— Վոչ մի ժենյա, դուրս, ասում եմ...

Լուսթյունը վորպես գիշերային թևավոր մուկ նստեց սենյակում: Սաշան տեղից բարձրանալով վերցրեց գլխարկն

ու շինելը, առանց մի խոսք ասելու դուրս յեկավ: Հենց այն ընկերին, յերբ հյուրը դռան հետեմն էր, ժենյան ժղպտաց, մազերը կարգի բերելով ականջ դրեց գնացողի քայլերի ձայնին: Յերբ Կոստյուկովը արդեն ներքևի հարկումն էր, ժենյան շտապ դուռը բանալով կանչեց նրա հետեմից.

— Սաշա... Սաշա...

Կոստյուկովը կարող էր չպատասխանել, սակայն նրա գլխում հանկարծակի մի միտք ծագեց. «Ի՞նչ ե ուզում նա...»

— Լսիր Սաշա, առանց նրան ել տխուր չի լինի, դու մի մտածիր...

Յերիտասարդը պահ մի մնաց կանգնած: Նա ցանկանում էր նորից վեր բարձրանալ: Վտռն արդեն դրել էր առաջին աստիճանին, յերբ վերեվից լսեց հրամայող ձայնը:

— Նո՛ւ, նո՛ւ—ժենյայի ցուցամատը դուռն էր ցույց տալիս: Նա քարացած մնացել էր կանգնած տեղում: «Արի ու հասակացի այսպիսի կանանց», ինքն իրեն ասաց նա և դուրս յեկավ փողոց: Ժենյան լիաթուք ծիծաղելով դուռն իր հետեից փակեց...

* * *

Սաշա Կոստյուկովը ժենյայի մոտ գնալու որից շտաճի նման էր շրջում: Ժենյայի յերկվությունը յերիտասարդի գլխում սեպի նման ցցվել էր: Վերջերս նա խուսափում էր Վալդիային հանդիպելուց, կարծելով, վոր իր ստոր վերաբերմունքի մասին նա արդեն դիտե: Լավ էր, հազար անգամ լավ, վոր վիրավորված մատի լավանալու սրտցե-սը ձգձգվում էր: Ուրիշ կերպ ամեն ոք նա պետք է հանդիպեր Վալդիային, տաներ նրա ծանր, ճնշող հայացքը: Ե՛հ, անտանելի յե այդ բոլորը:

Սակայն մինչ այդ պետք է ժենյայից իմանալ, ասել և նա: Նրա մոտ գնալն ավելի հեշտ էր, քան Վալդիայի աչքին յերևալը: Պետք է գնալ ժենիայի մոտ, ուրիշ յեղ չկա:

Սաշայի գլխում այս մտքերը շուրջպար եյին բռնել: Ահա ինչքան ժամանակ է, բացի սանրաժնից ուրիշ տեղ չէր

գնում: Նա խուսափում էր ծանոթներից: Նրանց հայացք-
ների մեջ ինչ վոր հետախուզող, գննող բան էր տեսնում:
Նրան թվում էր թե, բոլորն ել միաբերան ասում են՝ «կեղ
տոտ գործ ես արել...»:

«Վոչ, վոչ, պետք է գնալ ժենյայի մոտ, ասել, վոր ին-
քը, Սաշա կոստյուկովը մնում է նույն հին բարեկամը:
Վոչինչ չի փոխվել, ամեն ինչ նույնն է... Այս մտքերով
ծանրաբեռնված, նա չնկատեց թե ինչպես տնից դուրս յե-
կավ:

Նոր, թարմ ձյունը նրա վտարների տակ խշխշում էր:
Անցորդների դեմքին նա չէր նայում: Ջյան ձայնն ասես
ասում էր «շտապիր, հիմա ժենյան քեզ է սպասում...»:
Գուցե դա յեր պատճառը, վոր նա քայլում էր արագ: Յերբ
նա բարձրանում էր իրեն շատ լավ ծանոթ սանդուխտնե-
րով, նրա սիրտն այլ կերպ էր թփում: Ասես վերահաս ինչ
վոր մի վտանգ էր սպառնում:

Անլսելի ձայնով նա ծեծեց դուռը:

— Ա՛, Սաշա... եղ լի՛նչ քամին քեզ բերեց...

Ժենյայի ձայնը նույնն էր: Նրա հագի վերնագգեստը
հիմա կապույտ նախշերով չթից էր: Թեև, նա առաջվա նը-
ման մերկ էլիս:

— Դու, լի՛նչ ե, մեղնից խոռվել ե՞ս, քո Նինան գնաց
թե չե, ել մեզ մոտ չես գալիս...

Սաշան չգիտեր ինչ ասի: Նա ուրիշ հանդիպման էր ըս-
պասում: Դրա պատճառով ել նրա սիրտը սովորականից
տարբեր էր աշխատում: Նա պատրաստ էր աղաչելու, խընդ-
րելու, վորպեսզի ժենյան ների, միջնորդ... Ո՛, դժվար է,
դժվար է մարդկանց հասկանալ: Մի գուցե ժենյան կեղ-
ծում է, կամ՝ ծաղրում: Սաշան դրանից վոչինչ չէր հաս-
կանում:

Վոչ, վոչ այստեղ ուրիշ բան կա:

— Նո՛ւ պատասխանիր, լի՛նչու ես լուում:

— Ի՞նչ պատասխանեմ:

— Ե՛խ Սաշ, Սաշա, բանից դուրս ե գալիս, վոր դու
դեռ շատ յերիտասարդ ես, և յերեխայի նման կարող ես
խոռվել...

Այս ասելով ժենյան իր թեղ աստիճանից Սաշայի վզով:
Այդ վերաբերմունքով նա կարծես փաղաքշում էր մի պա-
տանու, վորը դժբախտ է, վորը կյանքում անհաջողություն-
ներից բացի վոչինչ չի ունեցել: Հայտնի էլեքարական
հոսանքը նորից իր ամբողջ զորությամբ անցավ Սաշայի
մարմնով: Նորից նրա կանացի բուրմունքը Սաշայի որջա-
նիզմի, աշխատանքի ընթացքը փոխեց: «Մատանան տանի,
լի՛նչու ժենյան այդպես է վարվում», մտածում էր նա և
նրա բոլոր մկանունքները կծկվում էին...

Ժենյան դեպի Սաշա կոստյուկովը՝ կուցավ: Նրանց
դեմքերն այնքան մոտ էլին, վոր թվում էր թե միմյանց
բերնից են շնչում... Իյդ դուրսից ասես ժենյան հրա-
վիրում էր յերիտասարդին համբուրել իր թարմ թշերը:
Մակայն Սաշան դրա համար չէր յեկել: Նա յեկել էր նե-
րողություն ինչդրելու:

— Լսիր ժենյա, անցյալ անգամ լի՛նչու ինձ դուրս վուրն
դեցիր:

— Հա՛, հա՛, հա՛, հյ, ծիծաղելի հարց ես տալիս: Ի՞նչու
դուրս վոնդեցի՞ք:

— Այո, այո...

— Վորպեսզի ուրախ լինի, հա՛, հա՛, հա՛...

— Այ քեզ բան, դրա մեջ լի՛նչ ուրախություն ես տես-
նում:

— Հա՛, հա՛, հա՛... Ժենյան խեղդվում էր ծիծաղից—դու
բողոքում եիր, վոր տխուր կլինի:

Այս ասելով նա Սաշայի գլուխը հպեց իր կրծքին: Նրա
կուրծքը փափուկ էր և տաք:

— Յես քեզ ասացի, վոր քեզ համար տխուր չի լինի...
— հետո նա նայեց մի այնպիսի հայացքով, վոր նշանակում
էր՝ «միթե՞ չես հասկանում»:

Այդ հայացքը թաղվեց Սաշայի գրկում:

Սաշան ամուր սեղմեց նրան և սկսեց համբուրել այտե-
րը: Նրանք յերկուսով նստեցին մահճակալի վրա: Սաշան
բաց արեց նրա մարմարի կուրծքը և սկսեց համբուրել:

Հենց այդ պահին պատահեց այն, ինչի մասին յերբեք
չէր մտածում վոչ ժենյան, և վոչ ել Սաշան: Վորողյան —
Ժենյայի ամուսինը ներս մտնելով, մնացել էր քարացած:

— Ա՛ — լավեց ականջ ծակող կանացի ծվոցը:

— Ինձ թվում եր թե, դուռը պետք է փակեցիք:
Այս խոսքը կացինի նման հարվածեց նրանց յերկուսին
ել:

Ժենյան կրկնակի ծվոցով վեր թռավ տեղից գրկեց ա-
մուսնուն, կարծելով վոր նա ատրճանակը պատյանից պետք
է հանի:

— Ահա... սաստիկ, զայրուծի շեշտը դեմքին բղավեց
Վալոդյան—ահա դուռը:

— Բայց մենք վոչինչ...—կմկմաց Սաշան:

— Սրիկա:

— Վալոդյա... Վալոդյա... — կրկնում եր Ժենյան և
յերևի ինքն ել չեր հասկանում ինչի համար:

Վալոդյան նայեց կնոջ դեմքին, հետո թքեց:

— Թ՛հէ, անգործությունից սրիկայությունն ես անում:
Յեւ ինքը ևս տնից դուրս չեկավ:

Վալոդյան դեաց իր ընկերներից մեկի մոտ, վորպեսզի
չմնա այն չորս պատերի մեջ ուր այդ դեպքը պատահեց:

Այդ դեպքից հետո յերկու ընկերների մեջ բարեկամա-
կան կապը վերացավ: Նրանք խուսափում էին միմյանց
հանդիպելուց: Չնայած վոր միասին էլին աշխատում,
միմյանց հետ խոսում էին շատ ծայրահեղ դեպքում, այն ել
յերբորդ մարդու ներկայությամբ: Թվում եր, վոր նրանք
այնպիսի թշնամիներ են, վորոնց մոտեցնելը բոլորովին
գովար ե և յեթե հարմար մի դեպք լինի, միմյանց կվոչըն-
չացնեն: Նրանց թշնամության մասին դիտեր միայն մի
մարդ, Վալոդյայի ընկեր Կոստյան, վորին նա պատմել եր:
Ուրիշ վոչ վոք չգիտեր:

Իսկ Կոստյան պատմությունը լսելուց հետո խորհուրդ
եր տվել: — Դա նրանից ե, վոր Ժենյան չի աշխատում,
նրան մի գործի դիր:

* * *

Ձոկատում ուր մեքենա էլին ստացել: Հարկավոր եր
մեքենայի վորակն ողում ստուգել: Ձոկատի հրամանատարն
այդ աշխատանքը հանձնարարեց Կոստյուկովին և Վալոդ-
յային: Սրանք յերկուսով պետք է թռչեին—մեկը մեքենան
պետք է վարեր, իսկ մյուսը շայեր:

Այդպես և ստուգվում մեքենայի վարակի ողում:

Կոստյան, վոր գիտեր յերկու ընկերների մեջ պատահած

դեպքի մասին, ինքն իրեն ասաց. «անպատճառ մի բան
կպատահի. դրա մասին բարձր հայտարարել նա իրավունք
չուներ, դրանով նա խայտառակ կաներ յուր ընկերներին,
Ջոկատի հրամանատարը վոչինչ չգիտեր և առանց հետին
նպատակների այդ աշխատանքը հանձնեց նրանց:

Անբողբոմում ցուրտ եր: Ձյան գույնը կորչում եր հո-
րիզոնի մոտ, ուր կապույտ յերկինքը միանում եր յերկրի
հետ: Հեռվում գործարանների ծուխը սյուների նման
բարձրանում եր դեպի լազուր յերկինքը:

Բոլոր մեքենաների անիվները փոխել էին սահնակնե-
րով: Յերբ մեքենան նստում եր, նրա անիվները տակից
ձյունի մի քանի կտորներ ցելի նման ցրվել էին տալիս
չորս կողմ և մեքենան գետնով սողում եր...

Վալոդյան և Սաշան մոտեցան ուր մեքենային: Առաջի-
նը նստեց առաջին խցիկում, իսկ յերկրորդը՝ յերկրորդում:

Յերբ յերկուսով նստած պատրաստ էլին թռչելու, Վա-
լոդյան մեքենայի գաղն ավելացրեց: Մեքենան փոնչաց և
պոչը բարձրացնելով առաջ սլացավ...

Մինչ այդ վոչ-վոք չեր նկատել, վոր ստարտում ձյունի
մեջ թաղված եր մի դատարկ տակառ: Տակառը դեռ յե-
րեկվանից եր մնացել. գիշերը քամին մեծ խնամքով այն
ծածկելիք ձյունով: Յերբ ստուգվող մեքենան գետնից ան-
ջատվել եր և կես մետր բարձրության վրա յեր գտնվում,
աջ սահնակը ուժեղ հարվածով ընդհարվեց տակառին:

Ողաշունները բարձրացան, իսկ գետնի վրա գտնվողները
տեսան, վոր ինքնաթիռի սահնակը վերավոր թռչունի
վոտքի նման կախ ե ընկել:

Կոստյան, վոր նույնպես գետնի վրա յեր գտնվում, շըր-
թունքները կծելով, ինքն իրեն ասաց. «գիտավորյալ կերպով
արեց գետնից սկսվեց...»:

Այս, վորքան սրտառուչ ե նայել ողում թռչող վերա-
վոր ինքնաթիռին: Նման դեպքում, յեթե վոչ մարդիկ, գոնե
մեքենան փշուր-փշուր ե դառնում: Դրա պատճառով ել
գետնի վրա գտնվողներն անհամբեր և տխուր պառսում էին
վերահաս վտանգին: Կոստյան սարսափում եր այն մտքից
վոր ողում գտնվողներն հարմար առիթ են գտել վրեժ-
խնդիր լինելու:

Թռչողներն կարող են և չնկատել, վոր ինքնաթիռի սահ-
նակը կտրված ե, մինչև գետնից նշանով ցույց չտան:

Յերբ նրանք ողոււմ փորձեցին մեքենան, և իջնոււմ ե-
յին, գետնից հասկացրին պատահածի մասին: Արդեն իջ
նող մեքենան նորից խոյացավ դեպի վեր: 800՝ մետր
բարձրանալով, Վալոդյան ցուլց տալով կոտրված վոտքը
հարցրեց.

— Ի՞նչ անենք.

— Հարկավոր է նորոգել պատասխանեց Սաշան:

Յերկար դատելու ժամանակ չկար: Վալոդյան նայեց
իր նախկին ընկերոջը, ինքնաթիռի արագութիւնը նվա-
զեցնելով բղավեց.

— Վերցրու ղեկը ձեռքդ, յես դուրս եմ եմ գալիս նորո-
գելու...

Ողուժ՝ դուրս գալ, թեի վրա կանգնել, կռնալ մեջ-
քից և նորոգել կոտրված վոտքը դա հերոսութիւն էր (Մա-
նավանդ վոր նրանք իրենց հետ պարաշոտ չունեյին): Սա-
շան առանց մի խոսք ասելու գլխով համաձայնութեան
նշան արեց: Վալոդյան դուրս յեկավ, հասակով մեկ մեկն-
վեց թեի վրա և գոռաց.

— Բռնիր պինջակիցս...

Քիչ լռելուց հետո ավելացրեց.

— Պահիր մեքենան, վորպեսզի չտատանվի:

Սաշայից ինքնաթիռը վարելու մեջ վարպետութիւն էր
պահանջվում: Նա պետք է մեքենան վարեր նվաղ արագու-
թեամբ և այնպես աներ, վորպեսզի չտատանվի:

Վալոդյան կորացավ նայեց կոտրվածքին և մի քիչ բարձ-
րանալով. նստելաւեղի կայմից բռնելով ասաց.

— Լսիր, հանիր գոտիդ...

Գետնից բոլորը դիտում էյին յերկու ողաջուլի հերոսու-
թիւնը: Միայն կոստյան լարված, սրտատրոփ սպասում էր.
«ահա մի բան պիտի պատահի, ահա մեկը պետք է ներքե
գլորվի...»: Նա սոսկում էր այն մտքից, վոր յերկու լավ
ողաջուններ, անձնական նեղ հաշիվներից յեղնելով կարող
են վտանգի տակ դնել իրենց և մեքենայի գոյութիւնը:

Ով էլ լինե՛ր՝ պետք է վոր, սոսկար այդ մտքից: Նա
համառ նայում էր ողուժ աշխատողների ամեն մի շարժված
քին: Մի րոպե թվաց թե, ահա մեքենան ղեկը կորցրած
դեպի յերկիր է գլորվում, սակայն դա միայն թվաց նրան:

Վալոդյան դոտին վերցնելով նորից պառկեց մեքենայ,
թեի վրա, կռացավ, նորից լավեց նրա չափազանց լուրջ
ձայնը:

— Պինջակիցս բռնիր:

Կոստյուկովը մի ձեռքով ղեկն էր բռնել, իսկ մյուսով
ընկերոջ պինջակից և այնքան ամուր, վոր հինգ մարդ էլ
չէր կարող անջատել:

Մեքենան բարձրութիւնը կորցնում էր:

— Նո՛ւ, ի՞նչ դռավ հարցրեց Սաշան:

— Սպասիր, անտերը մի քիչ դժվար է գալիս... այ ես
քո... Հայտնում էր Վալոդյան և աշխատում:

— Նու՛, բարձրութիւնը քիչ մնաց, շուտ արա...

— Վերջացնում եմ մի քիչ էլ...

— Շուտ արա ել բարձրութիւն չմնաց:

Վալոդյան կոտրված սահանակը գոտիով կապեց վոտ-
քին, և նստելով խցիկում կանչեց.

— Պատրաստ ե՛, ի՞ջնենք:

Մեքենան քիթը քաշացրած գնաց դեպի գետինը:

Գետնին մոտ ինքնաթիռը հավասարեցնելով նրանք նըս-
տեցին «յերեք կետի վրա». դա նստելու ամենալավ ձևն
է: Մեքենան գետնով սողալով կորցրեց արագութիւնը և
կանգնեց: Յերկու ողաջունները իրենց կաբինայից դուրս
յեկան և միմյանց նայելով ժպտացին...

Կոստյան վազեց Վալոդիայի մոտ և հեմալով ասաց.

— Կեցցես դու Վալոդիա, ինձ թվում էր թե դու վրեժ-
խնդիր լինելու համար կոտրեցիր...

— Ի՞նչ վրեժխնդրութիւն, խենթ ես ինչ ե՛լ է վոր
մենք մարտական խնդիր էյինք լուծում:

ՀԱՅՐԱԿԱՆ ՍԵՐԸ

Կրտսեր հրամանատարների դպրոցն ավարտելուց հետո, մեզ մի խումբ առույգ յերիտասարդներին, ուղարկեցին Լ. քաղաքի ողախին դպրոցը: Մեր խմբից բացի այդտեղ էլին յեկել և ուրիշները:

Սկզբի որերը ծանոթության որեր էլին: Ուրիշ քաղաք-ներից յեկածները պատմում էին իրենց տպավորություն-ները և լսում մեր պատմածները: Վորոհետև բոլորս էլ այս քաղաքում նոր մարդիկ էլինք, ապա միմյանց մոտե-նալու, ընկերանալու գործը մի քանի անգամ հեշտանում էր: Բացի դրանից—չէ՞ վոր բոլորիս այստեղ գալու նպատա-կը նույն եր՝ թռչել սովորել, ողաշու դառնալ...

Հենց այստեղ էլ առաջին անգամ ծանոթացանք մի շատ հետաքրքիր անձնավորության—Կամարովի հետ: Մեր խմբից Աշոտ Ղազարյանը, վոր քարին անգամ կխոսեցներ, շուտ մտերմացավ Կամարովի հետ և նրան արդեն Իվան Ի-վանիչ եր կանչում: (Կամարովի իսկական անուն և հայ-րանունն այդպես եր):

Կամարով ազգանունը, վորպես այդպիսին, գոյություն ուներ հրամանատարների և ուսուցիչների համար, իսկ մեզ բոլորիս համար՝ նա Իվան Իվանիչ եր: Ասենք մենք էլ հրամանատարների ներկայութեամբ նրան ուրիշ կերպ կան-չել չեյինք կարող: Բայց և այնպես Իվան Իվանիչ կան-չելը նրան շատ եր դուր գալիս և ամեն անգամ այդպես կանչելիս նա ժպտում էր: Ժպտալիս նրա ներքին ծնողը վերինից բաժանվում եր, իսկ աջ աչքի ունքը վերև բարձ-րանում... Լուրջ մտածելիս ճակատին բազմաթիվ կնճիռներ էլին գոյանում, աչքերը միահավասար կկոցվում...

Աշոտը և Չերնով Իլյուշան պնդում էին, վոր այդ դիրքում նրա աչքերը կրիայի աչքերից վոջնչով չեն տար-

բերվում, մինչդեռ Կովիան հաստատում եր վոր նրանք ա-վելի շուտ նման են տիպիկ ավստրալիացու բյուզուտի կիսա-բաց աչքերին:

Չերնովը մի անգամ կատակով ասաց, վոր Իվան Իվա-նիչը վատ հրաձիգ է դուտ իր աչքերի պատճառով:

— Են որը հրաձգության ժամանակ պառկել եր իմ աջ թևից: Յես դեռ մի փամփուշտ չեյի արձակել, նայեմ ի՞նչ, Իվան Իվանիչը գլուխը դրել հրացանին, սպասում ե... Ար-դեն վերջացրիք Իվան Իվանիչ-հարցնում եմ:

— Այո, ի հարկե...

— Այլ քեզ հարվածայլն, յերևի բոլորը «կաթի հետե-վից» ես ուղարկել: Հենց վոր ասացի «կաթի հետեից» ես ուղարկել, աչքերը կկոցեց, ճակատին նորից բազմաթիվ կնճիռներ գոյացան, այստեղ դեպի ականջները քաշվեցին, մի խոսքով դեմքին մի մկան չմաց, վոր չարժվեր...

Յերը գնացինք ստուգելու, ջոկատի հրամանատարի տե-ղապահը մտեցյավ նրան «նո՛ւ ընկեր Կամարով, ի՞նչպես է ձեր...» Իվան Իվանիչը կարմրեց, թվում եր թե, ամոթից փքվում ե... Կարծես իր հիմար դրությունից դուրս գալու համար, նա սկսեց սրախոսություն անել:

— Անվրեպ է, ընկեր հրամանատար սե շրջանակում վոչ մեկը:

Ջոկատի հրամանատարը բարկությունից բորբոքվեց:

— Անմիտ սրախոսում եք, լաց լինել է հարկավոր... Շատ անուշադիր եք, ցրված եք... Դրա պատճառով էլ սե շրջանակում վոչ մեկը չկա: — Դրանից բացի շատ բան ա-սաց, հիմա միտս չի գալիս, բայց հետո դառնալով ավա-զին հրամայեց:

— Տվեք նրան յերեք փամփուշտ ևս...

— Հրացանն իմա չի, յես առաջին անգամն եմ նրանից կրակում...—Կմկմաց Իվան Իվանիչը:

— Վատ հրաձիգները միշտ մի վորևե պատճառ են վորոնում...—Բնա, այսպես է յիդել, վերջացրեց Չերնովը:

Այդ պահին նրա ապրումները հարուստ են յիդել, շատ հարուստ: Չէ՞ վոր դա յերևում եր անգամ նրա դեմքի մկանները շարժումից:

Աշոտը ասաց, վոր ամենատրագիկ դերասանն իր բոլոր

դերերում այնքան միմիկա չի ունեցել, վորքան իվան
իվանիչն այդ բոլորներին:

Չերնովը վոզեվոդությամբ, ու վարպետությամբ եր
պատմում էր յերկրորդ հրաձգության մասին:

— Առաջին փամփուշտը բաց թողեց, հետո կրիայի
աչքերով նայեց իմանալու համար՝ վորն է մեկն իրեն չի
նայում: Յես նկատեցի՝ այդ պահին ճկույթը մորթած
հավի վոտքի նման թփրտում էր: Վախից թե ինչից, չեմ
կարող ասել, աչքերը կկոցվում էին, նեղանում... Նա խորը
շնչելով թոքերը ողով լցրեց: Հայացքս նրանից տեղափո-
խեցի նշանին: Ճկույթի հետ միասին, նրա ցուցամատը
նույնպես դողում էր: Ուզում էի կանչեմ, վոր չհուզվի,
հանգիստ կրակի, բայց դու հո գլխիս, վոր կրակի գծի
վրա խոսեին արգելվում է: Բայց նա չկրակեց: Դիտարկը
հանեց, դեն շարտեց և նորից հրացանի փողն ուղղեց նշա-
նին: Հիմա յեկ հրացանի մասերից արտացոլող շողերն
ասելի նման տնկվում էին նրա աչքերում: Ինձ թվում էր
թե, գլխարկը նորից պետք է դնի, այլ կերպ լինչպես կարելի
է կրակել... Բայց դա միայն թվում էր, նա նորից գլուխը
թեքելով, նշան դրեց: Հա, նրա գլխի մասին: Գիտեմ, նրա
գլուխը մեր դարաշրջանի մարդու գլխի նման չէ, ավելի
շուտ— Չերնովը մի քիչ մտածելուց հետո շարունակեց— ավելի
շուտ դա ուրիշ պատմություն ունի... Այ լսե՛ք պատմեմ:
Հոլանդական բժիշկ Դեպուան պեղումների ժամանակ Յավա
կղզու վրա յերրորդական դարաշրջանի մի մարդու գանգն է
գտել: Նա պապոցուցել է, վոր դա *pithecanthropus rectus*¹⁾,
այսինքն առաջին յերկվոտանի մարդու գանգն է: Հա, հե-
տագայում այդ գանգն ավելի մեծ հեղինակություն է ստա-
ցել քան ինքը Դեպուան: Ահապաղովախան²⁾ գրքերում
յերեմի կարգացած կլինեք: Տես իվան իվանիչի գանգը
ճիշտ *Pithecanthropus rectus* ի գլխի նման է, ճակատի
մասը սեղմված, յետևի մասը ցածր, ասես մեկը հարվածով
նստացրել է: Ունքերի աղեղը բարձր... Չե, չե, հետաքրքիր
է, յես դա կնկարագրեմ...

Աշտուր, վոր մինչ այդ նստած էր ճյուղագնդի վրա, տե-
ղից վեր թռչելով ձեռքի մի շարժումով սաստեց.

¹⁾ Լատիներեն—մարդադիտություն:

²⁾ Լատիներեն—իբիսկանթրոպոս ռեկթուս - յերկվոտանի կապկա-
մարդ:

— Թող քո եղ անտրոպոլոգիան, կլսի կվիրավորվի:
— Նո՛ւ, թող. նա ի՞նչ է հասկանում վոր...

— Ո՞վ, նա, է հե՛յ, դուք մասին մեծ կարծիք ունես
իլյուշա, կուսգտման ժամանակ լսելիք նրա կենսագրու-
թյունը: Անգրագետ կոմունար է յեղել, մինչդեռ հասել է
Մոսկվայի նախկին համալսարանին: Ինձնից և քեզնից
շատ է իմանում, միայն թե՛ քաշվում է, չի ուզում ասել...
Վերջերս մտա լենանկյուն—տեսնեմ՝ սեղանի մոտ նստած
բարձրագույն մաթեմատիկայի մի գիրք է կարգում: Բա՛ս,
հրաձգությունից խնդիրներ լուծելիս դու անքում ես, իսկ
նա վորոշում է բարձրագույն մաթեմատիկա «հավանակա-
նության թեորիայի» հիման վրա: Իհարկե յես այդ բոլո-
րից հասկանում եմ ճիշտ այնքան վորքան խոզը նարնջից:
Բայց հավատում եմ...

— Ե՛, թող խնդրեմ,—հակաճառեց Չերնովը,—յես էլ
եմ տեսել այդ գիրքը: սակայն յես մոտեցա նրան և հարցրի:

— Իվան իվանիչ, դա ի՞նչ էս անգիր անում:

— Անգիր չեմ անում, վերհիշում:

— Բերնիցս ակամայից դուրս թռավ «այ կեցցես, ուրեմն
իմանալիս եմ յեղել, վոր հիմա կրկնում ես... Նայեմ և
ի՞նչ, ազնիվ խոսք, դիֆֆերենցիայի, ինդեգրալի բարդ
ֆորմուլաներ հը՝—հեղնորեն շարունակեց Չերնովը նա-
նույնիսկ թվաբանությունը հանրահաշվից տարբերել չգիտե-
մը: Գնաց բարձրագույն մաթեմատիկան...

— Թո՛ւհ—ավելի բորբոքվեց Աշտուր:

— Ի՞նչ էս պառավի նման թքոտում, դե թող պատ-
մեմ: Յես հո ապուշ չեմ, յես դրանցից բան եմ հասկանում
սակայն ինձ հիմարի տեղ դրած հարցնում եմ.

— Իվան իվանիչ, եղ ինտեգրալը վորպես մաթեմատի-
կական դիսցիպլինա, ի՞նչ պատմական անցյալ ունի: Փոխա-
նակ կարգին պատասխանելու, այտերի մկանները դեպի
ականջներն ուղարկելով, սկսեց փչել, փչե՛լ, անվերջ փչել...

— Ինտեգրալը դիֆֆերենցիալի հակապատկերն է, ինչ-
պես կովը ձիու: Սակայն—ասում է, գյուղացին յերկուսից
ել ոգուտ է ստանում... Այսպես ասած, ինտեգրալը դա ա-
րաբական ճիշտագ է, վորի վրա նստած մաթեմատիկոսը
արշավում է մաթեմատիկական աշխարհում...—վերջում ել
սյուպիսի յեղարակացություն հանեց, ինտեգրալը մաթեմա-
տիկոսի համար նույնն է, ինչ ողը՝ ողաջվի համար:

Մինչ նա պատմում էր, մեր շուրջը հավաքվում էին նոր տղաներ, Չերնովի վերջին խոսքերն ընդհանուր ծիծաղ առաջ բերեց:

Աշտուր այլևս համբերել չեր կարողանում:

— Գոնե դու մի ստիր, համարյա թղավեց նա:

— Ի՞նչու պիտի ստեմ — մեղավորի ժպտը դեմքին պատասխանեց Չերնովը — համենայնդեպս, յես ձեզ գեղարվեստորեն պատմեցի, իսկ գեղարվեստը, յես մի գրողից լսել եմ, վորոշ չափազանցություն է պահանջում:

Այո, դու չափազանցում ես և ստում:

— Ի՞նչու պիտի ստեմ:

— Սատանան գիտե, մի գուցե դրա համար ել ծնվել էս, համենայն դեպս Իվան Իվանիչը խելոք մարդ է, բայց նրան մի բան է խանգարում:

— Խենթությունը — վրա բերեց Չերնովը:

— Թե՛, դու լավ խմացիր, վոր նա նույնպիսի կուսակցական է, ինչպես և դու, հետեւապես նրան ծաղրի առարկա դարձնելու իրավունք չունես: Ճուտերն աշխան են համում, տեսնենք ձեզնից ով լավ կթուչի...

Վեճը սուր բնույթ կստանար, յ' թե յես չմիջամտեյի:

— Ի՛նչ, ավելի լավ է, պատմիր թե յերկրորդ անգամ ինչպես կրակեց...

Վեճի խոր ազդեցություն տակ, նա այլևս չցանկացավ խոսել: Գրգռված լինելով նա շրջվեց, ու նայում էր հեռուն: Հենց այդ պահին լավեց ջուկի ավազի հրամանը:

— Շարվե՛լ...

Մի քանի րոպեյից հետո շարքասույունը շարժվեց դեպի հանրակացարան: Արևը հրացած պողպատի կաթիլի նման արևմտյան հորիզոնի մոտ անհետանում էր դեղնադուրյա ամպերի թանձր շերտերում: Ուկրաինական լայն դաշտեր յերեկոյան խաղող նիրհը չէին ապրում: Մի րոպե թվում էր, վոր յես թե Գոգոլը կենդանանար, ապա չեր ասի, վոր «Ուկրաինական գիշերը շատ խորհրդավոր ե...»: Մեր յերգի ձայնը հոսում էր հեռու, այնտեղ միաձուլվում բազմաթիվ տրակտորների փնչոցին և վեր սլանում...

Իվան Իվանիչը քայլում էր վերջին շարքերում և մի տեսակ մտազբաղ էր: Մտքի մեջ խորանալով, նա չնկատեց թե ինչպես շարքից անջատվեց: Ավագը նկատելով այդ բարկացած կանչեց:

— Կամարով, չլինի մի բան եք կորցրել:

Կամարովի տեղը շարքից մեկը պատասխանեց:

— Այո ընկեր ավագ, աշկներն ե հաշվում...

Իվան Իվանիչը հանկարծակի յեկածի նման վազեց կանգնեց իր տեղը և այնպիսի մի հայացքով նայեց ավագին, վոր կարծես նա նրան կանչելու մեջ հանցավոր էր: Վոչ վոր այդ պահին չեր կարող ինանալ, թե ինչի մասին ե մտածում Իվան Իվանիչը:

Տղաների մեջ շուրջով մի լուր անցավ: Առաջին շարքերում մեկը փսիսաց, վոր Իվան Իվանիչը սիրահարված է ճաշարանում աշխատող Տանիայի վրա: Շարքից շարք այդ լուրը անցավ վերջինին և յերբ Կամարովի ականջին հասավ, նա առանց մտածելու կանչեց:

— Ընկեր Ավագ թող ինձ չխանգարեն...

Բարձրացավ ընդհանուր քրքիջ և յես զգացի, վոր նա նոր հասկացավ ասածի բավանդակությունը: Այս անգամ նա գլուխն ավելի իջեցրեց ու խոր մտածմունքների մեջ ընկավ:

2.

Բոլորս ել առաջին անգամս էյինք սավառնակի հետ գործ ունենում: Նա, ով գեթ մի անգամ ող է բարձրանում ողաչու դառնալու նպատակով, այդ աշխատանքին կպչում և ճիշտ այնպես, ինչպես ուղեթ խաղացողն իր խաղին:

Մեզնից յուրաքանչյուրն ել անհամբեր սպասում էր այն որին, յերբ ող կբարձրանա և այնտեղից կդիտի շքեղ շրջապատը, տները, մարդկանց...

Մեր հրահանգչի ծանոթությունը մեզ հետ չափազանց պարզ էր: Նա հարցրեց մեր ազգանունները, և նշանակեց փոքրիկ գրքույկի մեջ: Կամարովի մասին ըստ յերեկոյ թիւն վաղուց եր լսել, ուստի կատակով հարցրեց:

— Նո՛ւ, ի՞նչպես եք զգում ձեզ ընկեր Կամարով, չե՞ք վախենում թոչնուց...

Իվան Իվանիչն աջ ձեռքի մատերով սավառնակի թեղ թմբկահարելով պատասխանեց:

— Ի՞նչու, ի՞նչու ընկեր հրահանգիչ...

— Նո՛ւ լսվ, լավ:

Հրահանգչի պարզությունից սրտապնդված, Իվան Իվանիչը գլուխն ուսի վրա թեքելով սկսեց հարցեր տալ:

— Իսկ յեթե պտուտակն ողում կանգնի, ի՞նչպես պետք է իջնել:

Հրահանգիչը կասկածանքով նայելով Իվան Իվանիչի դեմ ընդ: պատասխանում եր նրա հարցերին և դիտում տեսնելու համար, թե ինչ տպավորություն է թողնում:

— Հիմա 1914 թիվը չե, վոր ամեն մի թռիչքը հուղարկավորություն համարվի: Յես յիրեք հազար թռիչք ունեմ և մի անգամ չե, վոր ստիպված եմ յեղել իջնելու: Վոչինչ, այ տեսնում ես, կենդանի յեմ...

Մեր հրահանգչի աշխատանքի փորձը մեզ համար հարգանքի դրոշ դառավ: Մենք նրան սիրեցինք, ինչպես սիրում են կարմիր բանակայիններն իրենց փորձված հրամանատարին:

Յերբ Իվան Իվանիչն առաջին թռիչքից հետո յետեվի խցիկից դուրս յեկավ, զինվորական պատիվ տալով ասաց.

Ընկեր հրահանգիչ, թույլ տվեք նկատողություններ ստանալ:

Հրահանգիչը ծիծաղը զսպել չկարողացավ.

— Ի՞նչու աչքերդ կկոցում ես, կարծես հրացանից կրակելիս լինես, Գուցե ակնոցներդ քամի յեն բաց թողնում:

— Վոչ, ընկեր հրահանգիչ:

— Ապա ի՞նչ, գուցե վախենում ես...

Վոչ, վոչ ընկեր... ճվ ե...

— Դե լավ, հետևյալը, նստիր...

— Հետեվյալը նստելուց հետո սավառնակը գետնից կըտրվեց, ող բարձրացավ: Իվան Իվանիչը մոտեցավ Աշոտին և սկսեց պատմել իր առաջին տպավորությունները:

— Ինչքան լավ է, Աշոտ, յես Նիկալայիվկա գյուղին նայեցի, տները կարծես լուցկու տուփեր լինեն: Մինչև հի. մա յես կարծել եմ, թե ողաչուն վոչինչ չի տեսնում, թվացել է թե, առարկաները նրա աչքից թռչում են սավառնակի արագությամբ: Ախ վորքան սխալվել եմ: Արագություն ասած բանը միայն արագաչափի վրա յես: Ողաչույի համար դա գոյություն չունի: Նստած ես, ասես յերկնքից կախված լինես: Յերկրի վրա գտնվող առարկաները մոտենում, կամ հեռանում են կրիայի դանդաղկուտությամբ: Իսկ յերբ սկսում ես իջնել, սրտիցդ ասես մի բան կտրվում է և վեր բարձրանում...

Չերնոֆը այստեղ ընդհատեց նրան:

— Դու ավելի լավ է պատմիր, ի՞նչու հրահանգիչը քեզ հայհոյում եր:

— Ինձ բոլորովին՝ չհայհոյեց:

Որերը մեկ-մեկու հեռեվից գալիս, թռչում եյին: Ամեն որ Չերնոֆը Իվան Իվանիչի մասին մի բան եր հնարում և առանց քաշվելու նրա ներկայությամբ պատմում: Վերջերս ա պատմում եր, վոր առաջին թռիչքից հետո Կամարովի անդրավարտիքը թաց է յեղել: Տղաները ծիծաղում եյին... Աշոտի ներկայությամբ նա այլևս վախենում եր վորեւե բան պատմել... Բայց մի դեպքի պատճառով Աշոտը նույնպես սկսեց նախ առել Իվան Իվանիչին: Հրահանգիչը Կամարովի հետ թռչելուց հետո, իր խցիկից դուրս յեկավ և սաստիկ բարկացած կանչեց իր մոտ:

— Դուք զիշերս քնել եք:

— Այո, ընկեր հրահանգիչ:

— Յերկիտյան աղջիկների հետ չեք յեղել...

— Վոչ, վոչ...

— Իսկ ձեզ լավ էք զգում:

— Բոլորովին լավ:

— Կյանքից ոչ չեք ձանձրացել:

— Ի՞նչու այդպես եք ասում ընկեր...

— Ապա ի՞նչու ուզում եյիք վահանաձև գետինը խրվել: Վերջին հարցից հետո Իվան Իվանիչի ճակատին գոյացան բազմաթիվ կնճիռներ: Հրահանգիչը տեսնելով հարցի ազդեցությունը, ավելացրեց.

— Ուզում եյիր ինձ և քեզ խորտակել:

Յերբ Իվան Իվանիչը չեւ խոսում, դա նշան էր, վոր իրեն հանցավոր է ճանաչում... Մի քանի րոպե լռելուց հետո, նա ասաց.

— Հետեվյալ թռիչքների ժամանակ այդ սխալները չեն լինի:

— Չեմ լինի, շատ բարի, գնա թերթի խմբագրին ասա, վոր ուսանող Կամարովը թռիչքների ժամանակ չափազանց ցրված է...

Նա ճշտությամբ կրկնեց հրահանգչի հրամանը և յերբ լսեց՝ «այո, կարող եք ազատ լինել», շարժվեց դեպի տղաները, պատմեց յեղածի մասին: Նրա շուրջը հավաքվեցին ուրիշ ուսանողներ:

— Ելի արկածներ:

— Ելի Իվան Իվանիչի հետ — լավեցին այս ու այն կողմից: Դրանից հետո տղաները միմյանց ականջին փսփսում էին՝ «Նրան իզուր սովորեցնում են, միևնույն է, Նրանից ուղաչու չի լինելու...»:

— Իզուր բենդին, բանվորական ժամեր են կորցնում... Անում էին Նրանք: Աշտը վորպես կուսակազմակերպիչ պետք է իմանար, թե վերջապես ինչու՞մ է գաղտնիքը: Չէ՞ վոր այդ բոլորը մի վորե է բանի հետևանք է: Թռչելու համար, մարդ պետք է չափազանց կազմակերպված լինի: Յեթե վորե է մեկն այսօր մոռացել է կոշիկը սրբել, կամ սափրվել, ապա դա ապացուցում է, վոր նա ցրված է, անկազմակերպ: Այդ բոլորն է հարկե իրենց պատճառներն ունեն: Վճռանք կատակով պատմում էին, վոր Իվան Իվանիչը տաղանդավոր մարդ է լինելու, վորովհետև ցրվածությունը հատուկ է Նրան: Սաշա անունով մի ուսանող պատմեց, վոր իրենց համալսարանում մաթեմատիկայի մի պրոֆեսոր մի որ մինչև տրամվայի կայարանը յեկել է մի վտտին դեղին, իսկ մյուս վտտին սև կոշիկ հագած: Այդ նույն պրոֆեսորը դահլիճով դասի գնալիս ինչ վոր բանի մասին մտածելիս է յեղել և չնկատելով կողքով գնացող ուսանողուհիներից մեկին, բազմաստիճան հայհոյանք է տվել...

Վճռանք ել պնդում էին, վոր նա Տանիայի հետ սիրահարված է և վոր Տանիան Նրան շատ է զբաղեցնում: Չեր-նոֆե եր նման աղբույրների հեղինակը: Նա պատմում էր, վոր մի որ գնացել տեսել է Տանիային և Իվանիչին միասին նստած: Իվան Իվանիչը բուլսի տերե եր կտրում և ճկույթով այն ծակում, դեն դցում, նոր տերե վերցնում: Այստեղ խոսելիս տղաներն այդ գործողությունը զանազան կերպ էին մեկնաբանում:

Այս խոսակցություններն անկասկած հասնում էին Իվան Իվանիչի ականջին: Այդ բոլորից նա ավելի դյուրագոգիւ եր դառնում, սակայն չեր ընկճվում: Բայց և այնպես, մի որ հրահանգիչն այլևս հրաժարվեց Իվան Իվանիչին սովորեցնելուց: Այս դեպքը մի արտասովոր դեպք էր և այդ պատճառով ել ամբողջ ճամբարն իմացավ: Դրա մասին իմացավ և կոմիսարը: Խնդիրը վոր հասավ զորամասի կոմիսարին, ուրեմն սպասիր, մի լուրջ բան է լինելու:

Յերեկոյան, յերբ աղջամուղջը սփռվում եր յերկրի վրա, մենք թռչնները դադարեցնում էյինք: Մեքենաները բադերի նման շարքով, ծավալած թևերը թափահարելով, խլացուցիչ աղմուկով դեպի իրենց հիմնական կանգնելու տեղն էյին ուղղվում: Մեքենաները շարվում էյին չափազանց ուղիղ գծի-քանոնի վրա: Ամեն յերեկո, աջ թևում մի մեքենա պակասում եր: Հենց այդտեղ ել միշտ դրվում եր կոմիսարի մեքենան, վորի վրա թռչում էյին միայն յերկու հոգի — ինքը կոմիսարը և մեկել զորամասի հրամանատարը: Այդ մեքենայի դեկի կենտրոնում կարմիր աստղ եր նկարած: Հենց այդ պատճառով ել մեքենան կոչվում եր — «Աստղավոր»: Կոմիսարը թռչելու ուրիշ շնորք, ճաշակ և տեխնիկա ուներ: Յերբ «Աստղավորը» թռչում եր հողից շատ ցածր, այնպես վոր փոքրիկ բլրակի վրա կանգնածը չեր կարող տեսնել, տղաներն իսկույն ասում էյին՝ «հա կոմիսարը»: Գնում ես վորե է տեղ, մեկ ել տեսար առաջիցդ դուրս յեկավ «Աստղավորը» և աղմուկով թռավ... Տղաներից վճռանք հավատացնում էյին, վոր կոմիսարը 25 քառակուսի մետր տարածություն վրա կարող է իջնել, այն ինչ պահանջվում է 100 քառ. մետր: Մի որ, ձմեռը կոմիսարը սովորականի նման ող եր բարձրացել: Մինչև նա պտույտներ կաներ, այնպիսի բուռ ու բորան բարձրացավ, վոր նրա իջնելը կասկածանքի տակ եր: Հսկա տափաբակի հորիզոններն իսկույն ծածկվեցին ձյան մառախուղի թանձր շերտերով: Տասը քայլի վրա մարդիկ միմյանց հազիվ էյին տեսնում... Քամին դետնից վերցնում եր թարմ ձյան շերտերը, փռիացնում և անխնայորեն խփում պատահած իրերին, մարդկանց դեմքերին: Նման դեպքում հարկավոր է ինքնատիրապետման զգացմունքի ուժ ունենալ: Սովորաբար նման դեպքերում ցավալի հետեվանքներից խուսափելու համար ողաչունները սեփական անբողբոսից հեռանում են և նստելու այլ տեղ փնտռում: «Աստղավորը» վառելիքի պաշար չուներ, վորպեսզի հեռանար, ուրիշ տեղ իջներ: Անբողբոսում բոլոր զսպված հուզմունքով սպասում էյին հետեվանքին: Հանկարծ մեքենայի խուլ ձայն լսվեց: Քամին սպառնում եր «Աստղավորին» հետ շարտել, սակայն նա դիմադրելով, իջնում եր: Ահա նա 11—12 մետր բարձրություն վրա յե: Ամենավտանգավորն

այդ բարձրութիւնն եւ Ողաշուն բարձրում՝ լազուր յերկըն-
քի գրկում յերբեք չի վախենում։ Յեւ վառաստարակ ինձ ծա-
նոթ ողաշուններից և վոչ մեկը մահից այնքան չի վախենում,
վորքան ամոթանքից։ Ամեն մի փոքրիկ կոտորվածք մեքե-
նայի վրա գտնվող ողաշունյին մահու չափ տանջում ե...
Ահա թե ինչու բոլորը լարված ուշադրութեամբ այդ բարձ-
րութեան վրա դիտում են ին «Աստղավորին»։ «Աստղավորին»
արագութեամբ նվազեցնելով դեպի գետին եր իջնում։ Դեռ
մի մետր բարձրութեան վրա յերկու հոգի «Աստղավորի»
թևերից բռնեցին և նա սկսեց իջնել սահելով։ Կոմիսարը
սավառնակից դուրս յեկավ և մոտենալով հավաքվածներին,
ակնոցները սրբելով ծիծաղեց։

— Թվում եր թե պիտի շեղվեմ... անտեր մեքենայի վրա
կոմպաս ել չկար, վորպեսզի վորոշելի թռչելու ուղղութիւ-
նը։ Պետքե թռչելի սատանան գիտե ուր, հավաքվածները
սիրալիր ժպիտով պարզկատրում են ին կոմիսարին նրա
պարզութեան, սառնասրտութեան և խելամտութեան համար։

Նրա սև հոնքերի արանքում, ուղիղ քթի վերևի մասում,
ուղղահայաց կնճիռներից մի փունջ եր ստեղծվում, վոսկե
կտրիչ ատամը պսպղում, և դա նշան եր, վոր կոմիսարը
ժպտում եր։ Նա նույնիսկ սկսեց կատակներ անել։

— Նու ցուրտ Բ...

Տղաներից մեկը ցույց տալով սառած ճկույթը ասաց։

— Սարսափելի ցուրտ ե...

Ե, տղաս դու մատդ սառցրել ես, շփիր, շփիր ձյունով։

— Քերելուց ձանձրացա՝ ընկեր կոմիսար, միևնույնն ե
չի ողնում...

— Իսկ յեթե մի փափուկ աղջկա կուրծք լիներ ինչ
կլավացներ—յերկարացնելով պատասխանեց կոմիսարը և
մի քիչ մտածելուց հետո, ուշադրութեամբ նշարձնելով ընդ-
հանուր ծիծաղին, հարցրեց։

— Իսկ ինչու իմը չի սառչում...

Յեւ իսկապես, ինչու կոմիսարի մատները չեն սառչում։
Չե՞ վոր նա յեւ նույնպիսի ձեռնոցներ ե հագնում ինչպի-
սին և ուրիշները։ Հետո իմացանք, վոր սաստիկ ցրտի ժա-
մանակ կոմիսարը դեկը դնում ե ծկների մեջ, իսկ ձեռքերը
միմյանց շփում այնքան, մինչև վոր հարկավոր ջերմաստի-
ճան ստանա։ Նման հատկութիւնները կոմիսարին ավելի

հեղինակավոր և սիրելի ելին դարձնում։ Նա հիանալի ու-
սուցիչ եր։ Չի պատահել և վոչ մի դեպք, վոր կոմիսարը
վերցնի սովորեցներու վորեւե ուսանողի և նրանից վոչինչ
դուրս չգա, թռչել չկարողանա։ Այդ աշխատանքը նա կատա-
րում եր յուր սեփական կամքով։ Հենց այդ աշխատանքի
համար եր, վոր կոմիսարը մեծ պատվի և փառքի յեր ար-
ժանանում... իր այդ աշխատանքին չգիտես ինչու, կոմիսա-
րը պողպատ տաշելու անուն եր տալիս։

Տղաներն սկսեցին կասկածել, վոր նա Կամարովի նման
պաղպատին կարող ե հղկել... Մինչդեռ կոմիսարն նեղ շըր-
ջանում ասել եր, վոր Կամարովից պետք ե արծվի նման
թռչող ողաշու պատրաստի։

— Լսեք տղերք, մինչև հիմա կոմիսարը փառավորվել ե
յուր աշխատանքով, իսկ Կամարովը նրա գլխին ոյիններ
շատ կռնի... բոլորը ծովը կածի։

4.

Մի քանի շաբաթ եր, ինչ Իվան Իվանիչը թռչում եր
կոմիսարի հետ։ Ուրիշների մոտ կոմիսարը կատակով ասում
եր, վոր նրան հոգեվորդի յե վերցրել։ Տղաների վերաբեր-
մունքը դեպի Իվան Իվանիչը շատով փոխվեց։ Կոմիսարը
հավատացնում եր, վոր նա բոլորից լավ ե թռչելու, միայն
հարկավոր ե նրա մեջ վոչնչացնել թափթփվածութեանը։
Յերբ Իվան Իվանիչը վորեւե մի բան լավ չեր կատարում,
կոմիսարը ստիպում եր յերկրորդ անգամ կատարել և հիա-
նում եր, վոր առանց տրտնջալու վազում ե, աշխատում։
Ինքը կոմիսարը բարկանալու, ջղայնանալու սովորութիւն
չունի։ Ամեն ինչ այնպիսի սառնասրտութեամբ եր կատա-
րում, վոր կարծես չի ցանկանում։ Բայց դա միայն արտա-
քուստ թվում եր։ Նա ներքինով ապրում եր յուր աշխա-
տանքով։

Նա իր սառնասրտութիւնն որեց որ սրսկում եր Իվան
Իվանիչին։

— Քո գլուխը դեռ շատ տաք ե— հաճախ կրկնում եր նա։
Ամեն յերեկո մեծ վրանի մոտ հավաքված տղաները լը-
սում են իվան Իվանիչին։ Նա պատմում եր կոմիսարի
մասին։ Բոլորը մեծ հետաքրքրութեամբ լսում են ին նրան,
վորովհետև նա պատմում եր մի մարդու մասին, վորին բո-

լորը սիրում էին: Նույնիսկ Ջեյնուիլը չէր հրաժարվում լըսել այդ պատմությունները և վերջերս միշտ ել լուռ էր: Իվան Իվանիչն այլևս ավագից նկատողություններ չէր ստանում: Յնրբ առավոտյան բոլորը շարքում կանգնում էին, նրա սապոգները մաքուր էր, յերեսը ածելված: Մի քանիսը նույնիսկ կատակ էին անում.

— Իվան Իվանիչը ցանկանում է կոմիսար դառնալ...

Յեվ բոլորովին զարմանալի չէր, վոր մի քանի որից հետո կոմիսարը սավառնակից իջավ, մոտեցավ Իվան Իվանիչին և սասց.

— Ինքնուրույն պետք է թոչես.

Այս Լուրը կայծակի արագությամբ տարածվեց բոլոր ուսանողների, հրամանատարների մեջ: Վոչվոք դրոն չէր ըսպասում: Իվան Իվանիչը մենակ նստած սավառնակում, պետք է ողբարձրանա: Առաջին թուիչքը դա ամենապատասխանատուն է: Յեթե նա ընկավ շարքվեց, ապա կոմիսարը պատասխանատու չէ դրա համար:

Իվան Իվանիչի ճակատին նորից կնճիռներ գոյացան: Նա մտածում էր: Կոմիսարի ամեն մի խոսքին նա գլխով հավանություն նշան էր անում: Նրան ցուցմունքներ տալուց հետո կոմիսարը գլուխը վեր բարձրացրեց, նայեց յերկնքին և մի տեսակ անորոշակիությամբ ասաց.

— Անձրև հո չի գա:

Քիչ մտածելուց հետո վճռականորեն ավելացրեց.

— Լավ թուր:

Սավառնակի ճակատին կպցրած պտուտակն սկսեց ուժեղ թափով շարժվել: Մեքենան գետնի վրայով քիչ գնալուց հետո անջատվեց և ողբարձացավ: Ողբարձրանալը կեսն էր, ամենագլխավորը նստելն էր, վորին բոլորը սրտատրոփ սպասում էին: Իվան Իվանիչը մի պտուկտ գործելով իջնում էր, յերբ մի ուրիշ մեքենա նրա առաջը կտրելով խանգարեց: Փազն ավելացնելով նա գնաց յերկրորդ շրջանը կատարելու:

Մինչ այդ անձրևային ամպերն ինչ վոր կողմից սողացին դեպի անբողոք: Արևը վաղուց էր շառագունել: Փարթամ բույսերը դեպի արևի վերջին դեղնապուշյան շողերը խոհարված, փսփսում էին: Ո՞վ չի տեսել ուկրաինական փարթամ դալարի սվսվոցը: Անձրևային փոթորկից մի քանի բույսեր առաջ նայեցեք ցորենի, գարու մատաղ հասկերին, կար-

տոֆիլի, արևածաղիկի ճերմակ և դեղին ծաղիկներին, կամ ել՝ խիտ բուսած վայրենի բույսերի կոկոններին—բոլորը, բոլորն էլ այդ պահին ուրիշ, սովորականից տարբեր հայացք ունեն: Գեղազեկներից վոչվոք ուսական աշխարհի այդ զմայլեցուցիչ պատկերը չի տվել:

— Փոթորիկ պետք է լինի—հանկարծ դուրս թույլ զուկատի հրամանատարի բերնից: Ամպերն հանկարծ ավելի խտացան... Չուկատի հրամանատարը կարգադրեց թուիչքը դադարեցնել և մեքենաները շտապ քշել հիմնական կանգնելու տեղը: Մի քիչ հետո քամին սպառնում էր քշել, իր հետ տանել ամբողջ ճամբարը: Մեքենաների թևերի տակ մտնելով, շանում էր գետնից բարձրացնել...

Իվան Իվանիչը դեռ ողուհն էր:

Կոմիսարը ծխախոտի գլանակը կրծոտելով, գլուխը վեր բարձրացրած դես ու դեն էր քայլում: Նրա դեմքն ասես սովորականից սևացավ: Տղաները չեյին իմանում ինչ անել. գրնալ մեքենաների հետեվից, թե տեսնել Իվան Իվանիչին, վորը փոթորկված ովկիանոսի մեջ ընկած անփորձ նավավարի նման ալիքից ալիք է քշվում...

Ճամբարում բոլորը վոտքի վրա էին: Վոմանք վրաններն էին ամրացնում, իսկ վոմանք էլ հեմալով վաղում էին, մեքենաների թևերից բռնում... Միտենան հեծկլտող ձայնով շարունակում էր լալ: Արձրևի հատհատ կաթիլները սավառնակի թևերին սկսեցին թմբկահարել... Յերկնքից կախված՝ սև ամպերն ասես մի հզոր ձեռքում մղվում էին: Վորոտի խլացուցիչ ձայնը քամու թևերին նստած թոչում էր հեռմ, հեռու... Կայծակն ամպերի կուրծքը ճեղքելով դուրս էր սողում և խրվում պատահած իրի կուրծքը: Ողն ելեքտրականությամբ հագեցած էր: Տղաներն այլևս սավառնակների մետաղային մասերից չեյին բռնում: Ճամբարի միակ հրդեհաշեջը մինչև վոսկոռները թրջված կրակմարիչների թիջն էր ավելացնում:

Անձրևը սկսելու վարկյանից վոչվոք այլևս Իվան Իվանիչին ողում չտեսավ: Ասենք անհնարին էլ էր տեսնել: Անձրևի մեծ կաթիլներն մի առ մի փոխվեցին կարկուտի: Յերկրին սպիտակով ներկվեց: Քիչ հետո նորից անձրև էր, սակայն այս անգամ արդեն մանր կաթիլներով:

Յերկիրն բարձրանալն անհնարին էր: Նույնիսկ կոմիսարը չհամարձակվեց ողբարձրանալ: Քամին անձրևի ամեն

մի կաթիլին կրկնակի ուժ տալով, անխնայնորեն հարվածում եր ամեն ինչի:

Չկար իվան իվանիչը: Ընդհանուր սգի նման մի բան փաթաթվեց բոլորի դեմքին: Կոմիսարին խոսեցնել չէր լինի: Նա քայլում եր կաթվածահար յեղածի նման: Այն միտքը, վոր ինքը պատճառ ե դառել Կամարովի և մեքենայի խորտակմանը, նրան հանգիստ տալ չէր կարող: Նա ցանկանում եր տեսնել գոնե մեքենայի փշրտանքները, խմանալ տեղը... Սակայն ուր գնան, ում գիմեն, լինչ ասեն... Այսպիսի յեղանակին շունն անգամ դունչը դուրս չէր հանի: Յերկու ուր շարունակ փոթորիկ եր: Նույնիսկ վտառով մի տեղից մյուսը գնալը շատ դժվար եր: Ճամբարի շուրջը բազմաթիվ գետեր եյին գոյացել: Կավահողը դառել եր լպլըծուն, այնպես վոր ձիերը ճաշարանի համար հազիվ ջուր եյին բերում:

Բոլոր վրաններում տղաներին խոսեցնել չէր լինում: Միայն վոմանք իրենք իրենց ասում եյին.

Ափսոս, տեսնես վորտեղ ե ընկել...

Պատասխան չստանալով այդ ձայները նույնպես լռում եյին: Մեկը մյուսի դեմքին նայելով տղաները հասկանում եյին միմյանց: Բոլորն ել կարեկցում եյին իվան իվանիչին: Չերնոֆը իսկի չէր խոսում: Նա ասես իր ուսերին ինչ վոր ծանր բան ունեւր դրած:

Յերբորդ որն ամպերը քաշվեցին: Յերկինքը պարզվեց: Ողն այնքան մաքուր եր, վոր ցանկանում եյիր շնչել, շնչել... Շուտով արեւելյան հորիզոնից արեւը գլուխը բարձրացրեց: Փոթորկից հետո կենդանի մնացած արտուտները յերկինք բարձրացան և սկսեցին իրենց համերգը: Նրանց ծովուցը նույնպես սովորականից լավ եր, ձայներն ողի նման հստակ: Բայց յերբ արեւը մի քիչ բարձրացավ, գետնից վեր յեւնող գոլորշիները հորիզոնը մշուշով պատեցին:

Հենց վոր գետինը քիչ չորացավ, կոմիսարը և ջոկատի հրամանատարը գնացին գետի սավառնակները: Այստեղ նրանց մոտեցավ զորամասի հրամանատարը, և կոմիսարին ասաց.

— Դու շատ գոգուլած ես, քեզ թուչել չի կարելի: Թող ջոկատի հրամանատարը գնա հետախուզութեան:

Կոմիսարը սկզբում չէր համաձայնվում, ապա քիչ խոսելուց հետո համաձայնվեց:

Ջոկատի հրամանատարը թռավ: Ճամբարում անասելի սպասողական դրութիւնն եր: Շատերն աւում եյին վոր, յերկնքից նրան տեսնել չի կարելի, վորեւէհետեւ սատանան գիտե սավառնակը գետնին խփելուց հետո քանի հարյուր մասի յե բաժանվել...

Կես ժամից հետո ջոկատի հրամանատարը հետ յեկավ: Իջնելուց հետո սավառնակից դուրս պրծավ, հեմալով վաղեց գետի կամիսարը:

— Գտել եմ, գտել եմ, ընկ...

Նա հեկում եր, շնչառութիւնը հատվում: Կոմիսարի շուրջն եյին հավաքվել և ուրիշները: Բոլորը սպասում եյին ջոկատի հրամանատարի խոսելուն: Կոմիսարն այլևս չհամբերելով համարյա ջղայնացած հարցրեց:

— Նու, վորտեղ ես գտել, կենդանի յի...

— Այն այն, շուտ ավտո ուղարկեցեք:

Յերեք րոպեյից հետո, տաս հոգի ուսանողներ, կոմիսարը, դորամասի հրամանատարը ավտոյի մեջ նստած ճանապարհեցինք... Ճանապարհները ցեխ եր: Ավտոյի անիֆները հաղիվ պտտվում եյին: Կես ժամ գնալուց հետո հեմից մի սավառնակ յերկնք: Այդ տեղը Ն... գյուղի հյուսուսային մասն եր, ուղի գետի ափը: Մեր մեքենայի ձայնը լսելով իվան իվանիչը սավառնակի խցկից դուրս թռավ, վաղեց գետի մեզ: Հագին շապիկը և անտրավարտիքը թրջվել եր դունաթափ յեղել:

— Մինչև վոսկորներս թրջված եմ, յեղավ նրա առաջին խոսքը:

Փոխանակ նրան պատասխանելու, կոմիսարը գրկեց նրան և մի քանի իրպե բաց չէր թողնում...

— Դու, դու... հաղիվ կարողանում եր ասել կոմիսարը Յեկաճները ժպտում եյին, ուրախանում: Մեքենայի և վոչ մի մասը չէր կտրված նստելուց հետո նա փայտի սեպ եր տնկել, իր գոտով և յերկաթի փոքրիկ լարով սավառնակի թևերը կապել: Յերկարաճիտ կոշիկները հանել եր, դրել թեմկերի տակ, իսկ ինքը բոբիկ մտել սավառնակի խցկի:

— Լավ լինչպես նստեցիր, արդեն ուրախութիւնը զբաղելով հարցրեց կոմիսար:

— Տեսա, վոր մեր այերողրումում քամին անձրևի հետ խառնվեց... այլևս գետինը չի յերեկում... Նստեղ ել յես մի անգամ յեկել եյի լողանալու և ման գալու... մի խոսքով

գիտեցի, վոր իջնելու տեղ կա, իսկ այստեղ անձրևը դեռ չեր սկսել... Ասացի միակ յեղքը դա յե և յեկա... բա ի՞նչ անեմ, հո ողում չեմ մնալու...

Կոմիսարը նորից նրան գրկեց, կամիսարի գրկից ազատվելով նա բաց արեց մեր բերած կապոցը, սպիտակ հացի վրա դրած մսի կտորները կծոտելով պատասխանում եր բոլոր հարցերին:

— Քիչ եր մնում սովից մեռնելի... Մեկ մտածեցի զնալ ն, գյուղը հաց դտնելու, բայց վախեցա մեքենան անտեր թողնել...

— Իսկ փթորկից չվախեցա՞ր—հարցրեց ջոկատի հրամանատարը:

— Յես իսկի իմ մահից չեմ վախենում, փթորկից ինչու պիտի վախենամ... իմ սիրտը մսից չի, պողպատից ե... Նա կատակ եր անում, ուտում, պատասխանում հարցերին:

— Յես վոր իջա, ինքս ինձ ասացի՝ «հիմա դե, ընկեր կոմիսարի հույսերն արդարացրու...»:

Յեկաճներից մեկին թողնելով սավառակի մոտ, մենք հետ յեկանք ճամբար: Այդ ուր ճամբարում կ'ընծես տոն եր, կամ Իվան Իվանիչի հարսանիքը: Նրա գլխին բաղձաթիվ հարցեր եր թափվում... կարծես չեյին հավատում, վոր ա կենդանի կլինի...

5.

Իվան Իվանիչին պարզեցատրեցին: Նա դպրոցն ավարտեց և մի տարի յեր ինչ չեյի տեսնում:

Մի որ կամիսարն ինձ իր մոտ կանչեց և մի նամակ ձեռքս տալով ասաց.

— Դու խմբագիր մարդ ես, կարդա:

Բաց արի նամակը և կարդացի՝

«Սիրելի ընկեր կոմիսար,

վերջերս յես ընկեր Ստալինի ճառում կարդացի, մեր հարգելի, սիրելի... Իոսիֆ Վիսարիոնովիչն ասում ե թե, կադրերը պետք ե պահել աճեցնել ճիշտ այնպես, ինչպես պատիգպանն իր սիրելի ծառին: Սա Ձեզ ե վերաբերում:

Այսինքն դուք ել այդ պարտիպաններից մեկն եք:

Այդտեղ յերբեմն ինձ թվում եր թե, յես վոչինչ եմ, գրող չարժեմ... Բայց ձեր հմուտ ձեռքն ինձ մշակեց, աճեցրեց... Յես իմ հորը չեմ տեսել: Ինձ թվում ե թե, այնպես, ինչպես յես Ձեզ սիրել և սիրում եմ, վոչ մի տղա յուր հորը չի սիրի: Յես սա ձեզ գրում եմ, վորովհետև մենք մի մյանցից շատ հեռու յենք և հավանական ե, վոր միմիանց չհանդիպենք... դուք ինձ գովեցիք, վոր յես մի անգամ անձրևի ժամանակ կարգին իջա: Հիմա յես բուքի բորանի ժամանակ ուղակի գլուխ առած թռչում եմ, և ամեն անգամ ել Ձեզ հիշում: Ա՛խ, մի մոտս լինելիք, տեսնելիք... Յես կարծեմ շատ յերկար գրեցի: Մրանով թույլ տվեք վերջացնել:

Լավագույն բարևներով

Ձեր՝ կամարով Ի. Ի.

Կարդալուց հետո չգիտեմ ի՞նչու հարցրի.

— Քանի՞ այդպիսի տղա ունեք:

— Փանիսը, վոր իմ ձեռքի տակով անցել են, նրանք սիրում են ինձ: Յեվ յեթե ասեմ կյանքներդ տվեք, կտան: Իսկ կյանքը միայն մեր հայրենիքին տալ արժե: Իմ և նրանց հայրենիքը մեկն ե: Թող ինձ սիրեն, իսկ նրանք պետք ե գիտենան թե վորքան եմ յես իրենց սիրում:

Այո, կոմիսարը նրանց բոլորին սիրում եր ինչպես իր վորդուն: Վորպես լավագույն հայր, նա յուր կյանքը չեթխնայի վորդիներին համար:

ԶՈՐԱՄԱՍԻ ՏՂԱՆ

Զորամասում այն փոքրիկ տղան, յուր չափազանց մեծ, յերկարաճիտ կոշիկներով նոր եր հայտնվել և վոչվոք չեր իմանում, վրտեղից ե նա, ինչու յե յեկել: Նրա դեմքը նիհար եր, աչքերը խորը թագնված: Փոքրիկ, դեռ մանկական դեմքի վրա մեղամաղձության մի շղարշ կար, իսկ աչքերում՝ դժվար եր ասել, այդ աչքերը մանկական էն, թե՛ յերիտասարդի: Այնուամենայնիվ նրա մայրական քաղցր փաղաքշանք վայելելու ժամանակն եր:

Առաջին իսկ որից նա յուր վրա գրավեց զորամասի անձնական կազմի ուշադրութունը: Նրանից չհարցրին վոչ անունը, վոչ ել ազգանունը: Ինչ վոր մեկը նրա կոշիկներին նայելով կանչեց

— Ե՛յ, կամավոր, եդ ո՞վ ե քեզ պարգևատրել այդ սապոգներով...

Ուրիշ մեկը՝

— Խուժան, դու գլխով ել կմտնես այդ կոշիկների մեջ: Վոչ մեկին և վոչ ել մյուսին կամավորը չեր պատասխանում: Բերանի մի անկյունով նա ժպտում եր, իսկ աչքի մեկը կուշ եր գալիս—փաքրանում:

Թող մեկը հարցնեց, հետաքրքրվեց «Կամավոր» ի անցյալով, թող իմանար, արդյոք նա մայրական ծիծ ծծել է, արդյոք նա տեսել է հոր հասակը, զգացել թեկուզ մի տարի, ծնողների խնամքը, առանց վորի մարդը չեր աճի ճիշտ այնպես, ինչպես անապատում ծառը: Ճամբարում վոչվոք լուրջ հետաքրքրվելու ժամանակ չունեի, իսկ ով հետաքրքրվում եր, միևնույն ե «Կամավորը» վոչինչ չեր ասի: Նրա միակ պատասխանը լինում եր.

— Իսկ ձեր ինչ գործն ե:

Վոչ մեկի մոտ նա չեր դժգոհում իր դրությունից, չեր սիրում գանգալովել վորեւ բանի համար: Յերբ առաջին անգամ յեկավ Ճամբար, հարցրեց շտաբի տեղը—գնաց այնտեղ: Շտաբի դուռը բանալով, մեծին հատուկ վորոշա-

կիւթյամբ ձեռքը կարտուզի մոտ դնելով, դիմորական բոլոր կանոններով կանչեց.

— Թույլ տվեք, ընկեր շտաբի պետ:

Շտաբի պետին ըստ յերեվոյթին դուր յեկավ փոքրիկի կտրականութունը:

— Խնդրեմ:

Պետը հրավիրեց փոքրիկին և մեծ հետաքրքրությամբ նայում եր նրա շարժվածքներին: «Կամավորը» մոտենալով (ասես այստեղ քսանհինգ անգամ պետի հետ զրույց եր ունեցել), նորից ձեռքը դեպի կարտուզը բարձրացնելով սասաց.

— Ընկեր պետ, յեկել եմ ձեզ մոտ:

— Բարով ես յեկել, իսկ վորտեղից ես բարեհաճել գալ:

— Ա՞յ Գնդից, ընկեր պետ:

— Այ թե ինչ, իսկ ինչու այնտեղ չմնացիր:

— Յես ուզում եմ ինքնաթիռներ ուսումնասիրել:

— Ո հո, այ թե ինչ--հանկարծակի դուրս յեկավ շտաբի պետի բերնից: Նա հազիվ եր զսպում ծիծաղը: «Հասակը մի թիզ, իսկ ինչի մասին ե յերազուսմ...»: Ինքն իրեն մտածեց պետը: Իր կյանքում թերեւս առաջին անգամ եր տեսնում նման քաջին:

— Բարի, բարի, իսկ ո՞ւմ տղան ես:

— Հորս տղան:

Պետի աչքերի արտևանդները պահ մի դադարեցին միմյանց խփելուց:

— Յես գիտեմ, վոր հորդ տղան ես, դու պատմիր տեսնե՞ք ուր ե հիմա հայրդ:

— Հայրս, ընկեր պետ, հիմա չկա: 192... Թվին զարշելի հակահեղափոխականների՝ շախտեցիների միաստավության հետևանքով հայրս մնացել ե շախտի փվածքների տակ, իսկ մայրս նույն տարին մահացել ե... Ահա փաստաթղթերը, այս թուղթն ել մեր գնդի հրամանատարի գրությունն ե:

Այս ասելով «Կամավորը» աջ ձեռքով մեկնեց թղթերը, իսկ ձախը կիսահուփ մատներով ձգված եր հասակով մեկ: Նրա վերջին նախադասությունից հետո, մի պահ լուրջութուն տիրեց: Լեզուն չեր համապատասխանում հասակին: Շտաբի պետը սկզբում կարծեց թե գործ ունի սովորական յեբեխայի հետ, մինչդեռ սա՝ «մեծի նման ե խոսում-մտա-

ծեց պետը չլինի կառնիկներից ե...» Այս մտքերի մեջ պետը խոսելու ձևը փոխեց «դու»-ի տեղ դիմեց «դուք»-ով:

— Դուք քանի տարեկան եք:

— Տասն և մեկ, ընկեր պետ:

— Ո՛ր րավականին մեծ տղա յես-պետը հավաստիանալով, յերկրորդ անգամ խոսելու ձևը փոխեց: Այս անգամ խանդավառանքի ժպիտը դեմքին ակնհայտորեն երևեց: Նա մոտ կանչեց, ձեռքը պատ բերելով «Կամարովի» վզով, արդեն հայրական տոնով հարցրեց.

— Ի՞նչու վոտքերդ այդքան անճոռնի մեծ են:

— Վոտքերս չեն մեծ, կոշիկներս են մեծ:

— Այո, դե լավ, գնա առաջի ջոկատի ավագին ասա, վոր քո մահճակալդ դնի մեծ վրանում:

— Կա ընկեր պետ:

Պետը փոքրիկի ձևավորված դինվորական շարժումներից, խելոք և կտրուկ պատասխաններից շքեղ երևեց: Յեվ այն ել ի՛նչ լեզվով ե խոսում՝ «գարշելի հակահեղափոխականների շախտեցիկների, ֆեաֆաֆուլիսյան հետևանք...»:

— Բրավո—ինքն իրեն մտածում եր պետը:

«Յես ուզում եմ ինքնաթիռներ ուսումնասիել...»:

— Կեցցես տղա:

Այդպես սկսվեց «Կամավորի» կյանքը գործառույթ:

Ճամբարում միակ կենդանի արարածը, վոր ցերեկն ազատ եր գործից, չհաշված խոհանոցի կատուն, մեծ դամփուն եր, վորին անհայտ պատճառներով ֆոկեր եյին անվանում: Յերեկվա շուկին ֆոկերը ստվերատ տեղերից մեկում գլուխը դնում եր թաթերի վրա և մրափում: Միայն հատ ու կենդ ճանճերը ստիպում եյին նրան բանալ փակ աչքերը: Նման դեպքում նա ժանիքներով փորփորում եր մուգ դարչնագույն մորթը, բռնում ճանճին, կուլ ապրիս, նորից փակում աչքերը:

«Կամավորի» առաջին որբը ճամբարում շատ տխուր եյին անցնում: Զորամասի անձնակազմը թուխները դադարեցնում եր յերեկոյան մոտ: Մինչ այդ նա աննպատակ թափառում եր անկյունից անկյուն և կարծես վոչ մի հետաքրքիր բան չեր գտնում զբաղվելու համար: Յերեկոյան գալիս եյին տղաները և հարցնում Կամավորի տրամադրությունը: Ըստ սովորության նա յերբեք չի գանգատվում: Սակայն նա բարեկամացավ ֆոկերի հետ և այդ բարեկամությունը նրա

հեղինակությունը բարձրացման սկզբնապատճառը դարձավ: Փոքրիկը սկզբում ըստ յերևույթին վախենում եր ֆոկերից: Նրան թվում եր թե ֆոկերը յուր մեծ ժանիքներով ընդունակ ե մարդու վորովայնը պատռել, կամ՝ ձեռքն ու վոտքը պոկել: Այդ իսկ պատճառով նա ֆոկերից հեռու յեր պտտվում, չնայած նրան, վոր ֆոկերը նրան կարգին մարդու տեղ չեր դնում և կողքով անցնելիս նույնիսկ չեր մոռում... «Կամավորը» շատ շուտ ուսումնասիրեց շան թույլ կողմերը և կարճ ժամանակամիջոցում բարեկամացավ նրա հետ... Նա իսկույն հասկացավ, վոր ֆոկերը սիրում ե խոհանոցից վերցրած թարմ մսի կտորները (այնքան կուշտ եր, վոր հաց բոլորովին չեր լափում): Այսպիսով ֆոկերի ախորժակը գրգռելով «Կամավորը» տիրացավ նրան:

Առավոտյան ճամբարը նոր եր քնից զարթնում: Արևի շողերը մեծ ասեղների նման հորիզոնի հետևից դուրս եյին գալիս, խլրտում վրաններում: Գիշերվա իջած ցողի կաթիլները գոհարի նման պսպղում եյին կանաչ տերևների, ծաղիկների վրա: Ամեն առավոտ արևի հետ միասին, հորիզոնի հետևից իր ֆոկերի հետ, դուրս եր գալիս «Կամավորը»: Ճամբարում բոլորից շուտ նա յեր զարթնում: Փոկերը պոչը բարձրացրած ինչ վոր բան տեսնելով վազում եր նրա հետևից, նորից մոտենում «Կամավորին», պտտվում նրա շուրջը, յերկու վոտքերը բարձրացնելով դնում նրա ուսերին... Լեզուն հանած հեծում...

— Նո՛ւ, նո՛ւ...—մոռում եր «Կամավորը»:

— Հաֆ, հաֆ, հաֆ...—ղվարճանում եր ֆոկերը, անջատվում նրանից, քթով հոտոտում այս կամ այն փոսը: Յերը «Կամավորը» թագնվում եր մի փոսում, կամ թուփի հետև, ֆոկերը խելագարվածի նման հոտոտում եր չորս կողմը ու գտնում: Բավական ե «Կամավորը» մատով մի բան ցույց տար, ֆոկերը յուր շնային բոլոր ընդունակությունները և տաղանդը կգործադրեր այն կողմ վազելու և ինչ վոր բան վորոնելու: Զարմանալի բան եր, մինչ «Կամավորի» գալը, նա վոչոքի հետ այնքան չեր մտերմացել, վորքան հիմա: Իսկ «Կամավորը» նրան այնքան ել ուշադրություն չեր դարձնում: Նրա վերաբերմունքը դեպի գամփուր շատ պաշտոնական եր: Մեծին հատուկ լրջությամբ նա շատ խելացիորեն եր վերաբերվում դեպի գամփուր: Յերբեք իզուր տեղը չեր

չարչարում, .. Շան կողմից հայտնաբերված սիրուն ու հավատարմությանը նա նայում էր հենց այնպես, ասես թե այդպես էլ հարկավոր էր:

Առավոտյան, յերբ կամավորը հասնում էր տղաներին վորոնք զարթնելով մեքենաները պատրաստում էին թոփչքներին, նախ և առաջ վողջունում էր, հետո յեթե վորևե մեկին ոգնություն էր հարկավոր, ոգնում էր:

Ճամբարում բոլորը տեսնում և զննատում էին պատահի ենտուղիաստի գործը: Ճամբարի պարեալը մի որ «կամավորին» բռնեց ուղղակի այն պահին, յերբ նա վազում էր դուլով, գործածելու յուղ բերելու համար:

— Լսիր «կամավոր», չէս հոգնում, վոր ալդքան վազվզում ես...

— Այ քեզ հանր, ի՞նչու պիտի հոգնեմ:

— Լավ ի՞նչու վորևե գիրք չես կարդում:

— Ո՞վ ասաց վոր չեմ կարդում—նրա համար հասկանալի չեի պարետի հարցերի նշանակությունը: «Ի՞նչ է ուզում ինձնից» — յերեվի այսպես մտածելով նա ցանկացավ ճանապարհը շարունակել, բայց պարետը նորից առաջը կտրեց:

— Դե լավ, սպասիր, ի՞նչու այդքան շտապում ես, աշխարհս հո կրակ չընկավ:

— Մեքենան սպասում է յե, ի՞նչ ես ուզում...

— Դու վոր այդքան լավ տղա յես, յերեկոյան արի ճամբարի ելեքտրոկայանը, այնտեղ կսովորես:

— Շատ լավ, կգամ:

Ճամբարում գործում էր մի փոքրիկ ելեքտրակայան, վորի տված լույսը հազիվ բավարարում էր մի քանի տասնյակ լամպեր վառելու: Այնուամենայնիվ այստեղ նույնպես, ինչպես և բոլոր ելեքտրակայաններում, ելեքտրակա-նություն ստացվում էր մեխանիքական ուժի գործադրումով: Առաջին անգամ, յերբ «կամավորը» մտավ ելեքտրակայան, նրան հետաքրքրեց գործող մեքենաների կառուցվածքը, մասերը և բոլոր այն կանոնները, վորոնց հիման վրա նրանք աշխատում են: Կաշելով աշխատող տեխնիկի ոճիքից, նա հարցեր էր տալիս:

— Այս դինամոմեքենան քանի ձիու ուժ ունի...

Տեխնիկը «կամավորի» և վոչ մի հարցն առանց պատասխանի չեի թողնում:

— Լավ, ընկեր տեխնիկ, իսկ դու ես այստեղից դուրս յեկող անողները և կատողները:

— Իսկ ի՞նչ ասել է անող և կատող:

— Յես վոր ասում եմ, ընկեր տեխնիկ, հավատացած յեղեք, վոր գիտեմ և հասկանում եմ... Դեռ դա բոլորը չե, յես դիտեմ ինչ ասել է գենատոր, տրանսֆորմատոր... Նաչնիսկ մազնիսականությունն էլ գիտեմ... Դիտեմ, վոր կա յերկու տեսակի մազնիս, մեկը՝ բնական, իսկ մյուսն էլ՝ արհեստական:

— Ո՞ր ներեցեք ինժեներ «կամավոր» — այս անգամ արդեն ուրախությամբ և ծաղրական տիտղոսով ասաց տեխնիկը:

— Իսկ ելեքտրական մազնիսը...

— Դե, դա յե արհեստական է ելի... — Այս ասելով, նա մատներով ինչ վոր բան էր շփում... Նա թողեց այդ վերցրեց մուրճը և ինչ վոր սկսեց փնտռել:

Ի՞նչ է հարկավոր կամավոր:

— Ուզում եմ այս թելերն թիթեղի ողակի մեջ դնել, թե չե՝ հրդեհ կլինի...

— Այ կեցցե՛ս — հիացմամբ բացականչեց տեխնիկը — դու հո կարդին մանտյոր ես: Լավ, այ վերցրու մեխերը, այն փոքրիկ արկղի մեջ է: Կամավորը գտնելով մեխերը և թիթեղի մի կտոր, սկսեց նրանից խողովակ պատրաստել, վորպեսզի ելեքտրականության թելերն առանձնացնի: Մուրճով աշխատելիս պատահում էր, վոր թիթեղին զարկելու տեղ, մատներին էր զարկում, բայց դժգոհության և վոչ մի նշույլ անգամ չեի յերևում նրա դեմքին:

Շուտով նա ճամբարում հայտարարվեց, վորպես ելեքտրակայանի «գլխավոր ինժեներ»: «Ինժեներ» անունը կցելով ընկեր «կամավորին», տղաները ծիծաղում էին, միաժամանակ չկար մեկը, վոր նրան չսիրեր: Մի քանիսները նույնիսկ զարմանում էին նրա ընդունակություններով և այն սիրով, վորով նա կաշում էր գործին: Ինչքան էլ «կամավորը» մեծ տիտղոս չստանար, նա չեի հրաժարվում փոկերից: Յերեկոները, յերբ նա ելեքտրոկայանի ներսում հեքք էր պահում կամ աշխատում, փոկերը միշտ էլ դռանը պառկած գլուխը դնում էր յերկու թաթերի վրա, մրափում, մինչև կամավորը գործը կվերջացներ և միասին կգնային շրջիլու...

Վոչ հեռու գտնվող Ռճ գյուղը զորամասի վրա շեփու-
թյունն էր վերցրել:

Վորպես շեփեր զորամասի համար, նրանք շատ քիչ բան
եյին անում: Ընդհակառակը՝ զորամասը գյուղին մեծ ոգուտ
էր տալիս: Զորամասում ամեն տեսակի մասնագետները կա-
յին: Վորակավորված տրաքտորիստները վարի ժամանակ
շաբաթներով շեփելի մոտ եյին լինում: Բերքի հավաքման
ժամանակ զորամասը հաճախ շաբաթորյակներ էր կազմա-
կերպում: Այդ որերը սովորաբար շատ ուրախ որեր էյին
լինում: Տղաները յերգելով ափսոսանքով թափով եյին աշխա-
տում, վոր կոլտնտեսականներից հազիվ թե մեկն այդպես
աշխատեր: Դրա պատճառով ել գյուղում բոլորը սիրում
եյին զորամասի տղաներին, հարգում նրա ղեկավարներին:
Կոլտնտեսականները մատնեով եյին ցույց տալիս զորա-
մասի տղաներին:

— Եղ շան վորդիքը կյանքներում գյուղի յերես չեն տե-
սել, բայց աշխատելիս մեզնից ել լավ են աշխատում: Ադ-
ջիկները տղաներին տեսնելիս յերգում եյին...

Բայց վերջերս մի թյուրիմացություն պատահեց, վորը
կարող էր խախտել զորամասի ամբողջ կապը կոլտնտեսա-
կանների հետ: Ասենք պահ մի այդպես ել յեղավ: Կոլտնտե-
սականները սկսեցին հիասթափվել: Յեվ յեթե ուրիշ «նըր-
բացուցիչ» հանգամանք չլիներ, զորամասի հեղինակութունն
ընդմիջտ կորած էր: Բայց պատմենք սկզբից.

Ռճ գյուղը, վորը զորամասի շեփն էր, ցանկանում էր
իրանց գյուղում կառուցած ելեքտրակայանից մի քանի
կոլտնտեսականների տներում ելեքտրականություն անց կաց-
նել: Գյուղի մանայորը մի ամիս էր, ինչ հիվանդ պառկած
էր քաղաքի հիվանդանոցում: Վերջերս ել լուր էր յեկել,
վոր մանայորն առողջանալու վոչ մի նշան ցույց չի տալիս:
Կնոջ տարած կերակուրը չի ուտում, միայն յերկու խոսք է
կարողանում ասել, վորից հետո աչքերը բաց միայն առաս-
տաղին են նայում: Կոլտնտեսականները սպասում եյին, վոր
նա «գա և լույս կանցկացնի»... Բայց մանայորի կինը գա
լիս էր տխուր, լաց յեղած... Յեթե վորեւ մեկը նրանից
հարցնում էր ամուսնու մասին, նա ճերմակ թաշկինակն
աչքերին էր դնում և խուլ հեկեկում...

Կոլտնտեսության նախագահը ստիպված դիմել էր զորա-
մասի պետին: «Այսպես, այսպես, ձեզ մոտ հարյուր տեսակի
արհեստավոր կա, մեկին ուղարկեցեք թող լույս անց կաց-
նի...» Առանց յերկար մտածելու Կամավորին դրին մեքե-
նայի վրա և ուղարկեցին: Յերբ ավտոն հասավ գյուղ և
ուղիղ գյուղխորհրդի դռան առաջ կանգնեց, Կամավորը գին-
ված ամեն տեսակի զործիքներով ավտոյից ցած իջավ:
Կոլտնտեսության և գյուղխորհրդի նախագահները սկզբում
չեյին կարողանում հասկանալ ինչու համար ավտոն բերեց
այդ փոքրիկ գինվորին, թողեց ու հետ դառավ: Կամավորը
մեծ լըջությամբ մոտեցավ կոլտնտեսության նախագահին
ու բարեկեց:

— Ասում են այստեղ լույս պետք է անց կացնել:

Կոլտնտեսության նախագահը վոտքից մինչև գլուխ չա-
փեց փոքրին և գյուղխորհրդի նախագահին ասաց.

— Ազնիվ խոսք, այս ողաչունները մեզ ձեռք են առել:
Հետո դառնալով Կամավորին հարցրեց.

— Ի՞նչու ժանտյոր չեն ուղարկել:

— Ինչ են ուղարկել—մեծ սառնասրտությամբ պատաս-
խանեց Կամավորը և խնդրեց, վորպեսզի լույս անց կաց-
նելու համար նախատեսված տները ցույց տան:

Կոլտնտեսության նախագահն ըստ յերևույթին շատ էր
բարկացած: Նա մի կողմ քաշվեց, կանչեց մի կոլտնտեսա-
կանի և կիսա հրամայողական տոնով ասաց.

— Լսիր, գնա Վասկան թամբեր և հասիր զորամաս,
շտաբի պետին ասիր, վոր հիմա ձեռք գցելու ժամանակ
չի... Մենք իրենցից լուրջ կերպով խնդրեցինք, իսկ իրենք
կատակներ են անում:

Կոլտնտեսականը մի քանի բոպեյից հետո ճամբա ըն-
կավ: Յերեկոն համառ կերպով վրա յեր հասնում: Արևի
վերջին շողերը ժամից ավել էր, ինչ թագնվել եյին հեռու
հորիզոնի յետով: Նախիրը յեկավ, իր հետ դաշտերի բուր-
մունքը բերելով ծավալեց գյուղի բոլոր փողոցներում: Կոլ-
տնտեսականները կովերի յերեկոյան կաթն եյին կթում,
վորից նույնպես բազմապիսի ծաղիկների բուրմունք էր
փչում: Թռչուններն ծվլալով թառ յեղան...

Բաղերը, սագերը գյուղի միջով անցնող առվակի միջով յերկար շղթայի նման շարժվում էին դեպի դռները...

Մուժը, բաղերի նման հանգիստ լողալով, հեռու տեղերից յեկավ և նույնպես գյուղի վրա թառ յեղավ:

Առավոտյան Կամավորը կոլտնտեսականներից մեկի տանը նախաճաշելուց հետո վերցրեց բոլոր գործիքները, յեկավ տեսավ գլխավոր գիծը: Ձեռքի աքցանով մերկացրեց ելեք-տրոլարի ծայրը, հաղճապակյա անվակները խփեց պատերին:

— Յերեկոյան ամեն ինչ պատրաստ կլինի— ամենայն-ըջուլթյամբ հայտարարեց Կամավորը և շարունակեց աշխատանքը:

Կոլտնտեսության նախագահը, վոր հետևում էր Կամավորի ամեն մի շարժվածքին, մնացել էր զարմացած: «Ինքը դեռ յերեխա, իսկ հունարին նայիր...» մտածում էր նա և զղջում, վոր յերեկոյան զորամաս մարդ ուղարկեց: Յերեկու ժամից հետո մի կոլտնտեսականի տան միջից ելեք-տրական թելը կախված էր: Մնում էր ելեքտրական լամպը հագցնել և լույսը վառել:

Յերեկոյան մոտ աշխատանքները վերջին էին հանգում: Զորամասից հետ եր յեկել յերեկվա ուղարկած կոլտնտեսականը հետևյալ գրությամբ:

«Հարգելի ընկ. նախագահ!»

Մենք յերեք ձեզ հետ կատակ չենք արել և վոչ ել ծաղրել: Ուղարկած տղան զորամասի լավագույն մանտյորներից մեկն է: Հասակին, շատ եմ խնդրում, չնայեք:

Բարեններով՝ Շտաբի պետ...

Առանց այդ գրության ել Կամավորը գործով ցույց էր տվել, վոր ինքը կատակի առարկա չէ: Կոլտնտեսականները նայում էին փոքրիկ մանտյորին և զարմանում:

— Հասակին նայիր— կատարած գործին...

Յերեկոյան, յերբ մթնեց, խճիթներում լույսերը վառվեցին: Գյուղի կոմյերիտկազմակերպությունը ժողով հրավիրեց և ստիպեց Կամավորին պատմել, թե ինչպես նա մանտյորություն է սովորել: Վոչվոր չէր ծիծաղում, ժողովականներ ժպտում էին: Նրանք բոլորը խանդավառանքով նայում էին փոքրիկ մանտյորին, վորը հագին

ողաչույի շորեր ունեւր: Նրա կապույտ կոճկառները սպիտակ թոչնակների հետ միասին բոլորի մեջ ել համակրանք էին առաջ քերում դեպի պատանի արհեստավորը:

Կամավորը խոսելում շատ ժլատ էր: Միայն ասաց, վոր սովորել է այս ինչ տեղն՝ այսպես:

Առավոտյան Կամավորին դրին մի սայլի մեջ հետն ել մի վոչխար տվին.

— Ձեր զորամասին նվեր տար, վոր քեզ նման տղա յե պահում:

Կամավորը յեկավ իր նվերով: Ճամբարում անասելի ուրախություն էր: Տղաները նրա մոտով անցնելիս կատակ էին անում, ծիծաղում, բռնում վեր բարձրացնում... Վոմանք ել հարցնում:

— Յ՛ճրք ենք վոչխարիդ միսն ուտում:

— Հենց արի քեզ շաբաթական մի անգամ մի գյուղ ուղարկենք, ամեն տեղից ել մի մի վոչխար բեր— ասում էին տղաները և ձեռքով շոյում Կամավորի գլուխը:

Կամավորը բոլոր կատակներին պատասխանում էր և դրանով իսկ տղաների աշխուժությունն ավելի բարձրացնում:

Շտաբի պետը նրան կանչեց իր մոտ, հարց ու փորձ արեց, հետո թե՛

— Վաղը ստարտ կգնաս, քեզ կթոցնեն:

Կամավորը դրանից մեծ նվիրատվություն չէր սպասում: Նա պետք է թռչի: Գիշերը յերազում տեսավ թե ինչպես բարձրացել է կապույտ յերկինք, ինչպես արևը վերևից փայլում է... Յերկրի վրա մարդիկ գլուխները բարձրացրած դեպի իրեն են նայում... իսկ ինքը բարձրանում է վեր, վեր, դեպի արևը:

Առավոտյան նորից ամենաշուտ զարթնողը նա յեր: Այդ գիշերը նրա համար շատ յերկար թվաց: Հիմա նրա միտքը զբաղված է իր մոտալուտ թռիչքով: Դրա պատճառով ել Ֆոկերի վողջույնին չպատասխանեց: Չոյից նրա գլուխը վազեց մեքենաների մոտ: Պտտվում էր նրանց շուրջը և սպասում էր, վոր ողաչունները դա՛ն:

Յեկան ուղաչունները, մեքենաները գործի գցեցին: Պտուտակները շտապ-շտապ պտտվել սկսեցին: Կամավորի արյունն ել պտուտակների նման շտապ շրջանառություն էր

կատարում: Դրա պատճառով ել սիրտն արագ բաբախում
եր... Զոհատի հրամանատարը կամավորին իր հետ դրեց:
Առաջին ոգ բարձրացողը նա յեր: Ներքևում կանաչը գորգի
նման փովեց: Մեքենայից հեռու արտուտները պտույտներ
եյին գործում, վողջունում նորածագ արևի անդրանիկ շո-
ղերին: Շուտով ճամբարն ել սունկի կույտի նման փովեց
ներքևում: Կամավորը վեր եր թռչում... Աշխարհը կարծես
լայնացավ: Գետնից յերևացող հորիզոնները չքացան, նրանց
տեղերը յեւան նորերը սակայն՝ շատ հեռվում:

Կամավորի սիրտն ել հորիզոնների նման լայնացավ:
Ինչ վոր դուրեկան հոսանք սրտից սկսեց հոսել դեպի մարմ-
նի մյուս մասերը: Արևն ավելի բարձրացավ: Բայց ահա
սավառնակը քիթը քաշացրեց, իջնել սկսեց: Շուտով կիջ-
նեն և կամավորը բարձրաձայն կպատմի բոլորին: Յերը
իջան, կամավորը վազեց փաթաթվեց շտաբի պետին և
ասաց.

— Ընկեր պետ, յես ել եմ ուզում ողաչու դառնալ:

— Դու վոչ միայն ողաչու, այլ և ողաչունների պետն ես
դառնալու միայն մի քիչ մեծացիր:

Այս եղ ճեծացիր, մեծացիր... Ինչու հիմա վոչ, ինչու
հիմա մեծ չի: Կամավորի գլխում հազար ու մի հարց եր
ծագում և մնում անպատասխան: Այնուամենայնիվ այդ ուր
բոլորին նա ասում եր

— Յես ել եմ ուզում ողաչու դառնալ:

Վորոշիլոգրադ—Բագու 1934 թ.

Կ Ա Մ Ք Լ

Յերեք որ շարունակ յես մի բառ գրեցի: Ցանկանում
եյի այդ բառի հետևից մտքերս շարել և հասցնել վերջակե-
տին: Սակայն յերեք որն ել շարունակ այդ բառը ջնջեցի:
Ջնջեցի—վորպեսզի ընթերցողը կարդալուց հետո այդ բա-
ռը ինքը գրի:

Հիմա յես մտքերս՝ մարդկանց և չուգունի մասին պիտի
շարեմ, առանց այդ բառի:

* * *

Առավոտվա լուսածագին, յերբ գործարանի բակում խը-
տացած առթափանցելի մշուշը ծակոտվում և լույսի փոք-
րիկ գնդասեղներով, այդ ժամին խումբ-խումբ բանվորների
հետ գործարան և գալիս և մի մարդ, բանվորական հասա-
րակ պինջակ և խանձված, հողոտ կոշիկներ հագած, Նրա
հասարակ գլխարկը հիշեցնում և մալական ծերուկների սի-
րած գլխարկը: Նա գալիս և քիչ կորացած մեջքով, փոքրիկ
սուր միրուքը հաճախ դես-դեն ծռելով: Նրա յերկու սևա-
գույն աչքերն իրենց կոպերում հանգիստ չեն մնում, 52
տարի նրանք իրենց դիրքից նայել են ամեն ինչի, իսկ 36
տարի հախուռն կերպով դիմադրել չուգունի հալվածքի
լույսի հրե ասեղներին և ելի չեն հոգնել, նայել առարկա-
ներին: Այդ կովի սկզբում նրա աչքերը շատ պարտաթյուն
ներ են կրել. պատահել և, վոր որերով նրանք լաց են յե-
ղել, կարմրել, կարմրել... վերջում նրա աչքերը սովորել են
չուգունի հալվածքին, սակայն իզուր չի անցել նրա սկզբը-
նական հաղթանակները: Այդ աչքերը կուչ են յեկել և դա
արդեն մատնում և մի բան—ծերուկություն:

Ահա դա, այդ մարդը 52 տարի ապրել և, վորից 36-ն
այստեղ. ահա այս չուգունաձուլական ցեխի մեջ, այս հա-
վիտենական մշուշի, հալվածքի հրեշային կայծերի մեջ...

Այդ մարդը քայլում է մի կաղապարից դեպի մյուսը:
Միշտ հսկում է չուգունի հավաքած թափելուն, հսկում է,
վորպեսզի կաղապարից հանելուց հետո ասեն.

— Խուլվա՞յ... — Ինչպես դա ասում է պարտիզանը, յերբ
կտրում էր իր սեփական պահած, պահպանած ձմերուկը և
նրա միջուկը վարդի գույն է ունենում...

Այդ պատկանելի մարդը, կորացած, միահավասար քայ-
լելիս միշտ ել տարված աշխատանքով, հիշում է որերն ան-
ցյալ, «որերն անիծյալ»...

* * *

«Գործարանի վրայով անցնում են փոթորկալից որեր...
1920 թիվ: Բազմի գլխին դրվում է կոմունարկա գլխարկը.
գործարանը հիվանդի նման է շնչում... Բ, վորքան նման է
թոքախտավոր հիվանդի...»

Ֆերկրի բոլոր անկյուններից կանչում են՝

— Նավթ նավթ...

Նավթահորերն ասեն որ զգալով իրենց սրտի թույլ բա-
բախումները, կանչում են.

— Գործիքներ, գործիքներ, մեքենասարքեր...

Ամերիկայից մեքենասարքեր ստանալու համար հարկա-
վոր է այդ յերկարավիզ պարոններին գլուխ թեքել, վոսկի
ռուբլիներ տալ... Բալշևիկները գլուխ թեքել յերբեք չեն
սիրում:

Հարկավոր էր գործարանի թոքերը բժշկել, նոր շունչ
տալ... հարկավոր էր չուգունից մեքենա ձուլել սովորել...
Ահա այդ գործը դրվում է Բարսեղյանի վրա: Նա նշանակ-
վում է չուգունաձուլական ցեխի պետ:

Սկզբում նա չեմ ու չում է անում, պատճառ բոնում իր
տեխնիկական կիսազրադրությունը, բայց նրան կուսակ-
ցությունը պատվիրում է՝

— Սովորել...

* * *

Ազգային կոտորածներն ի զուր չեն անցել: Այստեղ գոր-
ծարանի ներսում նույնիսկ զգացվում է նրա անախորժելի
հետքերը: Վազրանկան նույնիսկ դառել է դատարկված ցո-
րենահոր, վորից միայն խոնավության հոտ է փչում:

Վազրանկան մինչև բերան լցվել էր քարածուխով և չու-
գունով: Վազրանկան հեղում էր... Վազրանկան շիկացած
յերկաթ էր դառել... Նրա մեջ տոններով չուգունը հավել,
սոսնձի թանձրության էր հասել...

Չուգունաձուլական ցեխում փոշու անթափանցելի մշուշ
է: Ողբ լցված էր գրաֆիտի պսպղուն հատիկներով: Առա-
տաղով սլացող կրանի խլացուցիչ աղմուկ... Բանվորների
բարձր խոսակցություն, հարայնոց...

Անփորձ նայողին կթվար, թե ցեխում պատրաստվում
են ինչ վոր դադից պատասպարվելու... Վոչ, նրաք, այդ չու-
գունի մարդիկ պատրաստվում են հարձակվելու չուգունի
հավաքածի վրա, նրան յենթարկելու իրենց կամքին...

Վազրանկայից չուգունի հավաքածը թափվում է մի հսկա
կիսախողովակով՝ շիկացած ավազանի մեջ, իսկ ավազանը
գրվում է կիսախողովակի տակը փորած փոսի մեջ: Առա-
տաղով խլացուցիչ ձայներով սլացող կրանը վերցնում է
հսկա կաթսան և մոտեցնում ամեն մի կաղապարին՝ վորը
բերանը բաց, սպասում է չուգունի հավաքածին:

Առաջին հավաքածն էր դա:

Բանվոր Սարգսյանը մտել էր կիսախողովակի տակ գտնը-
վող փոսի մեջ, վորպեսզի բերնի վրա դանվող փականքը
բաց անի: Չեղավ, չկարողացավ, փականը կոտրվել էր և
ժանգոտել... Նա ոգնության կանչեց և իր ընկերներին: Բա-
ցի Սարգսյանից փոսը մտան յերկու յերիտասարդ բանվոր-
ներ ևս: Տոթը նեղել էր նրանց յերեքին ել: Սակայն այդ
բոլորը վոչինչ—հարկավոր էր կոտրած փականը հանել,
վորպեսզի վառարանի բերանը բացվի, հակառակ դեքավում՝
վազրանկայի լցված վորովայնն այնպես ել կմնա... Տղաներն
սկսեցին վոգեվորվել իրենց աշխատանքի սկզբնական ար-
դյունքներով: Կոտրված փականը շարժվում էր—դա հան-
վելու նշան էր:

— Հը, Գուրգեն, մի քիչ դեսը...

— Արա Բաբա, բիր ալ բու յանա, բու յանա, (մի քիչ
այս կողմ, այս կողմ)...

— Հը, հը—վոգեվորվում եյին նրանք...

Այդ ժամանակ ցեխի մյուս անկյունից դեպի նրանց էր
գալիս Բարսեղյանը: Տղաներին փոսում տեսնելով նա սար-
սափեց: Նա չգիտեր ինչ անի, միայն սարսափելի ձայնով
բղավեց.

—Ե, հէյ...—Նրա ձայնը շոգեմուրճի ձայնի նման շոքնդաց...—

Ի՞նչ կա վոր, վարպետ,—զարմացած հարցրեց բանվորներից մեկը:

Ի՞նչ, զահրումար կա, չէ՞ք տեսնում, վոր փականը հանելուց հետո յերեքդ եւ սատկելու յեք,—զայրացած ասաց նա:

Յերեք բանվորները մի րոպե սարսափով իրար նայեցին: Շիկացած հալվածքը պետք է նրանց յերեքի մարմինը խանձեր...

— Դե, դե, քանի կենդանի յեք, դուրս յեկեք...
Յերեքն եւ միանգամից փոսից դուրս թռան, կարծես պայթուցիկ նյութից փախչելիս լինեին:

Բարսեղյանը պինջակը հանեց, ավեց բանվորներից մեկին, վստահանալով իր փորձառությանը՝ մտավ փոսը: Նա ցանկանում էր կտրած փականը ափսպես հանել, փորպեզի հալոցքը չթափվի:

... Հալոցքից, չուգունի արևագույն շիթեր թռան:
Անթափանցելի մշուշն պայծառացավ հրե շիթերով...
Մարդու, կենդանի մարդու մարմին խանձվեց...

Յերեք բանվորներն աչքերը բանալով տեսան Բարսեղյանը այրվող մարմինը...

— Անդրեյ, Անդրեյ, — գոռացին նրանք և հարձակվեցին փոսի վրա...

Յեխում բանվորների սարսափալից դեմքերը հառվել ելին Անդրեյի վրա... Նրան փոսից հանելով, դանակով շոքերը պատռեցին, վորպեսզի այրած տեղերին չկպչի:

— Կմեռնի՛ր,—ափսոսանքով ասաց նրա հին ընկերներից մեկը:

Չգիտես ինչու՞ մինչև Անդրեյը փոսում գտնվող բանվորներից մեկը սկսեց յերեխայի նման հեկեկալ... Յերեկի նա զգացվել էր Բարսեղյանի անձնագոհութունից... Մյուս յերկուսը փայտացած մնացել էին կանգնած: Յերեկի նրանք մտածում էին այն մասին, վոր այդ պետք է էր իրենց հետ պատահեր:

Անդրեյը հազիվ շրթուքները միմյանցից ազատելով ասաց:

— Ղաղանը դրեք հալվածքի տակ, ԽՓ... ջուր, այրվում եմ...
Յերեք նրան դրեցին մեքենայի վրա և ուղարկեցին շտապ օգնություն կետը, փայտացած բանվորներից մեկը ծանր, յերկաթի չափ ծանր բռնեցով ասաց:
— Մեր յերեքիս տեղ նա պետք է մեռնի...

Նա չմահացավ: Չորս ամիս միայն բացակայեց չուգունաձուլական ցեխի հավիտենական մառախուղից:

* * *

Առաջին օրը, նա վոտք դրեց գործարանում, ձեռքը տարավ զրպանը, հանեց իր հին, կիսախանձված տետրը և կարդաց «խոտանքին վերջ տալ և հետո...» Գործարանի րոլոր ցեխերում բողոքում են:

— Վորակը վոչինչ չարժեք...
Բարսեղյանի համար դա ամթանք է. չե՞ վոր նա ցեխի տերն է, ցեխի վարպետը: Չե՞ վոր չուգունը նա յե՞ ձուլում, ի՞նչու՞մն է գաղտնիքը: Ահա այս խնդիրները նրա գլխում մեխվել էին...

Գիշեր, ցերեկ, ամեն օր Բարսեղյանը շրջում է գործարանում, նստում ժողովներին, մոտենում րոլոր դադահաններին, վորպեսզի իմանա, վորպեսզի գտնի գաղտնիքը: Պոտանք բառը ցեխի նման կպչում է նրա դեմքին և, վորքան խայտառակ բան է...

Յերեկոներն Անդրեյը գլուխը գծագրություններից, տեխնիկական գրքերից չե՞ր վերցնում: Նրան հարկավոր էր լավ սովորել մետաղի ամբողջ տեխնալոգիական պրոցեսը, հարկավոր էր մեքենան լավ սովորել...

Յեվ ահա յերկար պրպտումներից հետո նրա համար պարզվում է խոտանքի գաղտնիքը—պեխ է բանվորներին ամրացնել առանձին կաղապարներին, պեխ է բրիգադներին ամրացնել վագրանկաներին:

* * *

Վոչ, վոչ դա փոքր հաղթանակ է. Անդրեյին մտատանջում է մի ուրիշ խնդիր՝ մենք ինքներս չէ՞նք կարող «ինգլեսոյի կոմպրեսորներ» պատրաստել, ի՞նչու՞ այդ մեքենա սարքը մենք բերում ենք հեռավոր յերկրից... և տալիս դեղին վոսկի, դեղին վոսկի...

Նորից գծապրուծյուններ, նորից անքուն գիշերներ... Հարկավոր ե հաղթել ամեն ինչ, հարկավոր ե տիրապետել մեքենայի ուժին և նրան ստիպել, վորպեսզի աշխատի, աշխատի... Մեքենան պետք ե պատրաստել մեր, խորհրդային յերկրի չուգունից, պողպատից...

Իր ազատ ուրը գալով ցեխ, նա իր մոտ կանչեց ոգնա-կանին, քաշեց պատի տակ և իր անքուն գիշերվա աշխատանքի արդյունքը պատմեց: Ոգնականն աչքերը լայն բա-նալով ժպտաց... կարծես ինքն ել նրա հետ գիշերն անքուն, եր լուսացրել:

— Ես րոպեյիս սարքիմ—ասաց Անդրեյի յերկար ու չիգ տարինների ընկերը և վաղեց համապատասխան կաղա-պարը պատրաստելու համար:

Հալվածքը թափելու ժամանակ նույնիսկ ինժիներ «մաս-նագետը» ձեռքը թերահավատորեն թափ ուղղով ասաց.

— Միևնույնն ե, դրանից բան չի դուրս գա, իզուր հալվածք են փչացնում, բանվորական ուժ կորցնում...

Սակայն Անդրեյը յերեսուն յոթ ուրի շնչել եր այդ ցե-խի մրախառն ծուխը, յերեսուն յոթ տարի նա այդ հուր ջրի ալիքների կամքը յենթարկել եր իրեն, կաղապարել և նրանից մեքենայի մասեր պատրաստել... Այդ բոլորը նրան չուգունի չափ ամուր հաստատակամություն ե տվել... Դրա համար ել նա համառելով, իր մտատածը կատարեց:

Կաղապարներում լցրած կարմրագույն հալոցքի աչքերը լուսածագի աստղերի նման մարվեցին: Յերեկոյան յերը «իմզեխուլի կոմպլեքսների» մի քանի մասերը կաղապարից հանեցին, Անդրեյը յերկար նայելով, խանդաղատանքի ժպի-տը դեմքին բացականչեց

— Դա, սա այսպես...

Ինժիներ «մասնագետը» նույնպես ստուգելով կաղապա-րից հանած մեքենամասերը, նախանձոտ ժպիտը դեմքին ա-սաց.

— Համենայն դեպս դա բոլորը չե, միայն մի քանի մասերն ե...

Բանվորներից մեկը ծաղրանքով կրկնեց ինժինների ա-սածները.

— Համենայն դեպս... հա-մե-նայն-դեպս...

Անդրեյ Մասեյիչը խոհեմությամբ պատասխանեց.

— Ամեն ինչ կամաց կամաց կլինի, սպասեցեք մնացածն ել կպատրաստենք...

* * *

— Բուլշևիկի խոսքը—դա կենդանի գործ ե: Բարսեղ-յանն իր այդ գույտերի վրա այնքան ե տանջվել, վորքան ալեխառն միրուքով ծերուկն իր հաստափոր վեպերը գրե-լիս: Նա անքուն, բայց ստեղծագործական գիշերներ ե անց կացրել, համոզված լինելով, վոր չկա մի ամեղ. վորին բոլ-շեվիկները չկարողանան իրապեսել... Այդ մարդը դեռ շա-րունակում ե ստեղծագործել... Նրա միտքը զարգանում ե սոցիալիզմի հայրենիքում...

Այդ մարդուն, չուգունի շիկացած շիթերով խանձված այդ մարդուն, յես կուզեյի մի անուն տալ, վոր կարողանար հավասարվել նրա մտքի ուժին, վոր ունենար նրա արժե-քը... Չկա, վոչ մի լեզվում, չկա իմ ընտրած բառը: Դա պետք ե ստեղծվի, իսկ յես յերեք ու չկարողացա գտնել և գրել այդ բառը:

Գրածս միշտ կարդում ե իմ մոտիկ ընկերներից մեկը: Այս կտորը կարդալուց հետո, նա նայեց դեմքիս և զարմա-ցած հարցրեց.

— Ի՞նչու չես գտնում, այ...

Հետո նա մատիտը վերցնելով գրեց—հետո:

Իմ քթով դուրս յեկող ողը հեգնեց նրան. հասարակ շատ հասարակ բառ ե: Նա քիչ մտածեց, հետո գրածը ջրն-ջելով, նորից գրեց—ախառանքի հետո: Բայց չէ՞ վոր նա ստեղծագործող տաղանդ ե, ի՞նչու միայն այդքանը: Ծիշտ ե, նրա կուրծքը, վորի մսերը հալվածքով այրված են, զար-դարված ե Ախառանքի կարմիր դրոշի շխանակով: Ո՛ր, ինչ-քան արժանի տեղ ե դրված դասակարգի արյան գույնի այդ պատկանելի կարմիր դրոշը:

Այդ ջրանշանի մոտ, տաղանդավոր գյուտարարի կրծքին յես դնում եմ և բոլոր ընթերցողների հարգանքի դրոշը:

Բագսլ—1931 թ.

ԻՆՉՊԵՍ ԲԵՋ ԱՆՎԱՆԵՆՔ ՀԱՐՍՁՈՍՏ

Պարաշյուտով թռչելը սովորական բան է դարձել: Բայց և այնպես ամեն ուր թռիչքը շրջապատի մարդկանց ուշադրութիւնն է գրավում: Յեթե սպորտային հրապարակում խաղի ամենահետաքրքիր վայրկյանը լինի — միևնույնն է, բոլորը թողնում են խաղը և կկոցված աչքերով հետևում ինքնաթիռին, վորն արագութիւնը նվազեցրած, ձախ թևի վրա բեկվելով, ջանում է դուրս ձգել թանկագին բեռը: Նման դեպքում թվում է, թե ինքնաթիռը յերկունքով հերոսութիւն է ծնում:

Ահա քարի արագութեամբ դուրս պետք է ձգվի այս մեկը կամ՝ այն մյուսը: Բոլորը մեր ընկերներն են և բոլորին ճանաչում ենք ինչպես մեր հարազատին: Ավելին — վոմանք իրենց հարազատին այնքան չեն ճանաչում, վորքան մենք այս ընկերոջը, վորը հիմա պետք է յոթ հարյուր մետրի վրա թողնի ինքնաթիռը և՛ քարի արագութեամբ ցած գլորվի, մինչև թանկագին մետաքսե հսկա զանգակը փրկարար ուժով կմեղմացնի նրա ընթացքը: Չէ՞ վոր բոլոր մարդիկ ինքնաթիռը միատեսակ չեն թողնում: Մեկը հպատակվում է ողաչույի առաջին իսկ հրամանին — բաց թողնում ձեռքը և մեջքի վրա գլորվում, մի ուրիշը՝ տատանվում է — թողնել, թռչել, թե՛ հետ գնալ խցիկում նստել: Այդ րոպեյին վրէժ ամոթանքը և վոչ էլ ընկերների կշտամբանքը նրա գլուխը չի պալիս:

Նա տեսնում է գետինը, վորն այնքան հեռու չէ, հանկարծ պարաշյուտին չհավատալու հանցավոր միտքն ասես սուր չիղքով ճանապարհ բանալով մտնում է նրա, այդ րոպեյին ուժեղ թափով գործող, ուղեղի կենտրոնը: Նման դեպքում ապրելու ցանկութիւնը հաղթահարում է նրա հերոս լինելու ցանկութեանը:

Մեկ ուրիշը քիչ տատանվում է, կատվի նման կուչ գալիս, նորից ուղղվում, սակայն թռչում է...

Վոմանք էլ թռչում են, սակայն փոխանակ նրան, վորպեսզի ձգեն ողակը և բանան պարաշյուտը, շփոթվում են, ահա փշալարի նման ցանկապատում է նրանց: Ահա նա թռավ առաջին, յերկրորդ տասնյակ մետրները — մինչ դեռ պարաշյուտը չի բացվում: Տասնյակները մեկ ակնթարթում հետ են մնում: Մի քիչ ևս նա պետք է հանդիպի յերկրագնդի կոշտ զանգվածին: Նման դեպքում կողմնակի նայողները պահ մի դադարում են շնչել: Համատարած լռութիւնը մարդկանց տիրապետում է: Բայց վրէժ, ընկնողի խելքը գլխին է, ահա սպիտակ պարաշյուտն արվի նման դեպի վեր է ձգվում — ծավալվում: Թափով բացվելուց լսվում է՝ «Փը՜ՂՁ...» Դրանով կարծես մետաքսե հսկա զանգակը վերահաս, ահն է արտահայտում... Դրա հետ միասին հանդիսականները ծիծաղում են, կատակ անում:

— Իրենից վոչինչ չեր մնա բացի թրջված տեղից:

— Հիմա նրա սիրտը վոտներ է մատներումս է. բանալուց հետո տեսնում եմ, նույնիսկ վողջունում է...

Դա, և միայն դա յե պատճառը, վոր ամեն մի թռիչք շրջապատի ուշադրութիւնը մեխում է իր վրա:

Ամեն մի թռիչք մի մեծ արկած է, իսկ Մաքսուդ Ավդալիմովի թռիչքն ավելի հետաքրքիր արկած էր: Մաքսուդը զորամասի անձնական կազմի սիրած տղան էր: Չկար մի մարդ, վոր նրան չճանաչեր: Բոլորն էլ գիտեյին, վոր նա դադատանցի նավթային բանվորի տղա յե, իսկ ինքը վորակավորված խառատ: Սակայն նրան սիրում էյին, վորովհետև աշխուժ էր, խելոք: Դա յեր պատճառը, վոր նրա և՛ անունը, և՛ աղգանունը հազար տեսակ հոլովվում էր: Մեկը կանչում էր Մակիչ կամ Միշա, մյուսը՝ Ավդալիմիչ... Յեթե մի տեղ տղաները յերգում էյին կամ պարում, այս ու այն կողմից կանչում էյին՝

— Միշային, տուր...

— Թող Ավդալիմիչը դուրս գա.

«Լեզգինկա»...

— Շամիլն թող պարի...

Նրա թռիչքի ժամանակ բոլորը յեռապատիկ հետաքրքրութեամբ հետևում էյին այն ինքնաթիռին, վորի մեջ նստած, նա բարձրացել էր ող: Ահա նա դուրս է յեկել և մոտենում է թևի ծայրին: Ահա կռացավ դեպի ողաչուն,

վորպեսզի ուստինս ողակը թեին հագցնի: Յեւ վերջապես
ահա նա թողեց ինքնաթիւը և պարաշյուտը բացեց: Յերբ
նա թողեց ինքնաթիւը և պարաշյուտը բացեց, այլևս դեպի
գետին չէր իջնում: Նրանից հետո թռչողները գետին հա-
սան, պետին գեկուցեցին իրենց թռչելի մասին, մինչդեռ
Մաքսուդն ասես զորավոր ինչ վոր մի ձեռքով բռնված,
դեպի յերկիր իջնելու վոչ մի նշան չէր ցուցաբերում:
Այդպես ե, յերբ քամին իբ անտեսանելի թե վերի վրա
վերցնում ե թղթի մի կտոր և քշում ով գիտե ուր:

Այն ուղղությամբ, վորով գնում եր Մաքսուդը, գտնե-
լում եր Զ... գյուղը, իսկ նրա մոտերքն անհարթություն-
ներ, ձորեր... Դ. գետը հսկա ժապավենի նման հոսում եր
նույն գյուղի մոտով: Գետը մեծ եր, խոր և յեթե թղթի մի
կտոր գցեյիր նրա գիրկը, հազիվ թե նկատեյիր հոսանքի
ուղղությունը:

Ահրողորմում սկսեցին անհանգստանալ: Յերկու դեպ-
քում՝ յիթե Մաքսուդն ընկներ գետի մեջ, կամ մոտակա
ձորը, յեթե վոչ մահը, ապա մարմնի վորեւ մասի ջարդ-
վածք անխուսափելի յեր: Բացի դրանից նա կարող եր ընկ-
նել Զ... գյուղի կտուրներից մեկի վրա, վորը նույնքան
վտանգավոր եր, վորքան և գետի մեջ ընկնելը:

Յերկրին գուգահեռ հոսանքն Մաքսուդին իր գիրկն ա-
ռած, ասես դիտավորյալ տանում եր այդ վտանգավոր տե-
ղերը: Ծիշտ Զ... գյուղի մոտ նա ընկավ ուրիշ մի հոսան-
քի մեջ: Դա յերկնքից դեպի յերկիր հոսող անհավոր ողային
մի գետ եր, վորը վոչ միայն մարդուն, այլ և ուժեղ ինք-
նաթիւին սպառնում եր գետին շարժել, ջարդ ու փշուր ա-
նել: Առհասարակ մթնոլորտը խաղաղ եր լինում մինչև արևի
ջերմացնելը: Յերբ արևը բարձրացնում ե իր գլխուը և
կենսատու ճառագայթներով ջերմացնում յերկրի անհարթ
կողովը, մթնոլորտում զանազան ուղղությամբ և ուժի հո-
սանքներ են սկսվում: Թերևս դա յե պատճառը, վոր ար-
տուտները, ծիծեռնակները, ընդհանրապես թռչուններից
շատերը թռչում են միայն վաղ առավոտյան և յերեկոյան
խաղաղ ժամանակ: Կես որին թռչելը նրանց համար նույնն
ե, ինչ մարդու համար շորերով լողալը: Այս «գաղտնիքնե-
րը» գիտեն ողաչունները և թռչունները, վորովհետև ողը

նրանց համար նույնն ե, ինչ գրաշարի համար տառերը
վարդի համար հողը, լողացողի համար ջուրը և վեջնապես
զրոյի համար թուղթը:

Ուղղահայաց հոսանքի մեջ ընկնելուց հետո անողորմից
յերևաց՝ Մաքսուդը, ընկնող քարի արագությամբ ցած գը-
նաց: Ահրողորմում պահ մի լռություն տրեց: Այդպիսի
լռություն ե լինում բազմամարդ դահլիճներում, ուր վորեւ
մեկի հիշատակը հարգելու համար վտաքի յեն կանգնում:
Պահ մի լռելուց հետո ով ինչքան ուժ ունեւ վազեց դեպի
Մաքսուդի իջնելու տեղը: Իզուր, Մաքսուդն անողորմից
հեռու յեր, հեռու...

Պարաշյուտային թռչեքները ղեկավարողը, ջղայնացած
կարողացավ միայն հրամայել.

— Ավտոմեքենա ուղարկեցեք.

Մաքսուդն ընկավ Զ. գյուղի մոտ հսկա դեզի աջ կողմը:
Գյուղացիները, վոր դեզի շվաքում ճաշում եյին, տեսնելով
պարաշյուտով իջնողին, վազեցին դեպի այն կողմը: Առա-
ջին շարքերում յերեխաներն եյին վազում: Բայց ամենա-
հետաքրքիր յերկու ծերուկի վազեցն եր: Նրանք գուցե յե-
րեսուն տարի յե, ինչ մոռացել եյին վազելը, գուցե և իրենց
կյանքի վերջին որերն եյին ապրում: Վազում եյին շատ
հետաքրքիր: Թվում եր, թե նրանց վտաքերը հինգ անգամ
նորոգվել են. այնքան ծանր եր նրանց շարժվածքը: Ծերուկ-
ները լսել եյին, վոր պարաշյուտով շատ մարդիկ են թռչում:
Նրանց միշտ ել թվացել ե, թե պարաշյուտով թռչողները
սովորական մարդկանցից ինչ վոր բանով տարբերվում են:
Այլ կերպ, ինչպես կարող ե «ծախ սիրտ» ունեցող մարդը
յերկնքից ներքև գլորվել...

Յերկու ծերուկն ել համարյա միասին հասան Մաքսու-
դի ընկած տեղը: Մաքսուդը շատ հաջող իջնելուց հետո
կանգնել, պարաշյուտի յերկար թելերն եր ծալում: Ծերուկ
ներից մեկը, վորի սպիտակ բելները թութունից դեղնել
եյին, հուզմունքից արցունքներն աչքերում, մոտեցավ Մաք-
սուդին և մի քայլի վրա մնաց կանգնած:

— Ա՛խ, հարազատս, ինչպես քեզ անվանենք, չգիտեմ,
չգիտեմ, մի սպասիր քեզ նայեմ...

Մաքսուդն ուրախ նայեց ծերուկին, միակ բանը, վոր
կարող եր անել, ժպտալն եր:

Սև ունքեր, դեմքը լիքը, ուրախ յերիտասարդ ե: Ծերուկը շփոթվեց, նա չգիտեր ինչպես անվանի այն մարդուն, վոր հերոսի նման թռչում ե բարձր-բարձր յերկնքից: Ընկեր, թե՛ ընկեր աղաչու անվանել: Վճի, յերիտասարդը հասարակ ընկեր չեր (ասենք իրենց գյուղի կոոպերատիվի վարիչի նման, վորին նույնպես ընկեր են անվանում) վոչ ել ողբալով, վորովհետև ողաչունները մեքենայից դուրս չեն թռչում: Ուստի ծերուկը նորից հարցրեց.

— Ի՞նչպես քեզ անվանենք հարազատս, մի պատմիր, թիկ ես դու... չցավեց վտառդ, եդ կտորն ինչպես ե քեզ պահում...

— Հայրիկ ինձ Մաքսուդ են կանչում:

Մաքսուդ, Մաքսուդ, ծերուկը դրանից վոչինչ չհասկացավ: Նրան թվաց թե բոլոր պարաշուտով թռչողներին «Մաքսուդ» են անվանում:

— Ուրեմն հարազատս, ով եդ հովանոցով թռչի նրան Մաքսուդ են կանչում...

Մաքսուդը լիաթոք ծիծաղեց: Մինչև ավտոն կգար, նա ծերուկներին պատմեց պարաշուտով թռչելու մասին: Սակայն հարցասեր ծերուկը չեր դադարում հարցեր տալուց:

— Իսկ, հարազատս, ամեն մարդու կթողնեն, վոր թռչի... Յես որինակի համար եմ հարցնում: Յես, որինակ, վախկոտ չեմ յեղել... Սրանից 15 տարի առաջ Կլիմ Յեֆրեմովիչի հետ եստեղ կռվել ենք կազակների դեմ... Դրա պատճառով վոտս հինգ տեղից ծակած ե... Նույնիսկ թռչեթ ել ունեմ... Այս ասելով ծերուկը հանեց մի կարմիր գլուխ, շատ խնամքով փաթաթված, ցույց տվեց Մաքսուդին և շարունակեց.— Յես որինակի համար ուզում եմ, վոր փոքր տղաս ել ձեզ նման հերոս լինի... Այ հենց այս տարի Կարմիր բանակ ե գնալու... Ի՞նչպես կլինի, ձեզ մոտ կընդունեն, պարտիզանի տղա յե, հը՞... նա կարող է թռչել...

Ծերուկը մեջքից ավելի կորացել եր և սպասում եր Մաքսուդի պատասխանին: Յերբ ավտոն յեկավ, Մաքսուդն ասաց.

— Ամսի 6-ին մեր ազատ որն ե հայրիկ, կգամ ձեր կոլտնտեսութեան անդամներին կպատմեմ թռչելու մասին... Ավտոն շարժվեց թե՛ չե, Մաքսուդի ընկերները հետաքրքրվեցին ծերուկի խոսակցութեամբ:

— Ասում ե, ով հարազատս «Ի՞նչպես քեզ անվանենք»... Ե՛ ծերուկ, ծերուկ կարծում ե, թե յես յերկնային ինչ վոր մարդ եմ հա, հա, հա...

Տղաները նույնպես ծիծաղում եյին: Մմիթնով Կոլիան, վորպեսզի ծիծաղն ավելի եֆֆեկտավոր դարձնի, ասաց.

— Խելառ, նրան ասեյիր, վոր դու նախկին կոշիկ սըրբող Մաքսուդն ես, իսկ ներկայի ողաչուն... հա, հա, հա...

Մաքսուդի հետ պատահած այս դեպքը ճամբարի վրան ներում պատմում եյին ու ծիծաղում:

— Հա, հա, հա...

Կհավատար ծերուկը, վոր դա նախկին խառատն ե, իսկ մինչև խառատ դառնալը կոշիկ սըրբող Մաքսուդը:

— Ի՞նչպես քեզ անվանենք հարազատս...

Անվանի, ծերուկ ինչպես կցանկանաս, վաղը քո վորդին ել մեզ պես կդաւնա...

1934 թ. Դոնբաս

Ն ՈՒ Ն Ե Ն ՈՒ Տ Ա Փ Ը

Կուսընթացի մի քարտուղարը յուրահատուկ բավականությամբ և հպարտությամբ պատմում է իր շրջանում տարած աշխատանքների հետևապես և մարդկանց, մեքենաների, հողի մասին:

— Հա, եղ Կտոր հողը շատ տրակտորների յետ տվեց. «Փորզոնը» մարտում հաղթվածի նման թնչալով փախուստի դիմեց. միայն «Կարմիր Պուտիլովեցի» Խեբրնացիոնալը հուժկու կերպով ձեղքեց սև հողի կուրծքը...

Յես վորես բանի վրա չեյի կարողանում կենտրոնանալ, վորովհետև շրջկոմի քատուղար Սաֆարովը փոքրիկ ընդամիջումից հետո խոսելու նոր թեմա յեր գտնում և իրեն հատուկ վոզևորությամբ շարունակում պատմել:

Յերբ մենք մի փոքրիկ լանջով իջնում եյինք, հանդիպեցինք մի գոմեշի սայլի, վորը քաղաք եր գնում վառելիք բերելու: Սաֆարովը հրճվանքով կռացավ, ձեռք տվեց սայլապանին հետո թե՛

— Քանի փութ պետք է բերես Մախմուդ դայի:

Ըստ ըբերույթն Մախմուդ դային չհասկացավ հարցը, դուրսը թեքեց, վորպեսզի մյուս ականջով լսի: Իսկույն և յեթ աչքի ընկավ այն, վոր Մախմուդ դայու ականջի մեկը բալորովին չկա, իսկ մյուսը կիսատ է:

— Վորքան վոր քեֆդ տա, հարյուրից ավել, հեյվանները տանում չեն:

— Հա լավա, լավա, մղայիթ կաց պարան չի տաս, տեսնում եմ գոմեշներդ լաֆն են: Դյուղում թաղա խաբար բան չկա:

Մախմուդ դային ձեռքի ափը խողովակ շինած, դրել եր ականջին, վորպեսզի լավ լսի: Դուրալի ժպիտով պատասխանեց բոլոր հարցերին, հետո նայելով մեր ձիերին, կարեկցաբար առաջարկեց:

— Եղ հեյվանները ծարավ են, Սուրանլու գյուղով անցնելիս ջուր տվեք:

Սաֆարովը ծիծաղելով պատասխանեց:

— Ջան է, ջան Մախմուդ դայի, մեր ձիերի հոգսն էլ ե քաշում... Վոչինչ քիչ ա մնացել, հիմա Գուռի ջրից կլխահն:

— Տեսնո՞ւմ ես, քիչ ճանապարհ գնալուց հետո ինձանից հարցրեց Սաֆարովը—տեսնո՞ւմ ես Մախմուդ դայու ականջները—խանչալով ե կտրած: Ե՛խ, Մախմուդ դայու ականջներն իր պատմությունն ունի...

— Խանչա՞րվ

— Խանչալով. մեկ-մեկ, է՛խ, Մախմուդ դայու ականջների պատմությունը զուլում պատմություն է...

2

Ջաքաթալայի մառախլապատ լեռների կորացած մեջքից սկիզբ է առնում լայնածավալ անհրապույր մի տափաստան, վորի հարավային սահմաններով Գուռը խորհրդավոր լուսթյամբ, անանցանելի, մութ անտառի պատյանով ձգվում է հեռու—արևելք: Անտառը՝ տափաստանից բաժանվում է մի գծով, վորն ասես բնության քմահաճույթն արդյունք չի, այլ ճարտարապետի մտածած, քանոնի ուղիղ գիծ:

Տափաստանն իր դաժանությունը վաղուց է մարդկանց ցույց տվել: Արևի կիզիչ շողերն այստեղ դաժանաբար այրել են ամեն ինչ և միայն մի քանի փշատերև բույսեր են մնացել, կարծես զուտ նրա համար, վորպեսզի իրենց շվաքում պահեն այստեղ թագավորող խեղճերին ու կարիճներին: Սա յե յեղել շրջապատի գյուղացիների ձմեռվա միակ արոտատեղը: Այդ տափաստանը ասպատակել են բեկերի ու աղաների հորդաները և հյուժված, անոգնական ցրիվ յեկած չքավոր գյուղացիներին զրկել իրենց մի կրտոր հողից:

Արյճն, անվերջ արյուն է հոսել ձմեռվա այդ արոտատեղիի համար:

Արյունով և յերկաթով հաղթել են Իբադուլա և Հասան բեկերը: Իբադուլա և Հասան բեկերի հովիճները քիչ են գյուղացիների հոտը, խառնել իրենցին և վաճ նրան, ով կհամարձակվի կրունկն անգամ դնել այդ հողի վրա...

Պատմում են վոր, նույնիսկ ամառը, յերբ անդորր անապատը մեն մենակ խանձվում եր արևի դաժան կրակի տակ մարդն այստեղով անցնում եր անը սրտում: Այսպես եր անապատի պատմութիւնը:

Ինչեւ չեն պատմում կապված Սամուխի անվան հետ. պատմութիւններ վոր նույնիսկ այսօրվա ունկնդրի մեջ վրեժի և ցասման զգացում են վառում դեպի այդ անապատի հին տերերը:

Պատմում են.

Պատահել է դեպք, վոր 20 տարեկան յերիտասարդ տա. վարածը ընդհարվել է Հասան բեկի թոռների հետ, փախեանտառ և այնտեղ մնացել մինչև խոր ձերուծիւնը: Խոր նալ անտառի թփուտները, դարձել են նրա բարձը, իսկ հավատարիմ ընկերը՝ բերդանկան:

Այս բոլորը մաղձի պես դառը հիշողութիւն է...

Աստեղեկ ապրել, մեծացել Մախմուդ դային, ռայոնի այսօրվա լավագույն կոլխոզնիկը, վորի ականջներն անցյալ տարի խանչալով կտրեցին...

Ե՛ր, Մախմուդ դայու ականջների պատմութիւնը գուլում պատմութիւն է...

3

Այժմ դիտիր Սամուխի նախկին անհամբուր անապատը: Առաջին իսկ հայացքից քեզ փթվա, թե ինչ վոր մի գետ Զաքաթալայի հեռավոր սարերից սկիզբ է առնում և խառնվում Քուռին: Բայց... ներիւր չի վոր մեր աշխարհագրական քարտեզներն այդպիսի գետ չեն գծել: Կամ գուցե Սամուխի տեղ գուլ ուրիշ շրջան էս դիտում: Դու կսկսես քրքրել քարտեզը, վորպէսզի վորոշես քո աշխարհագրական դիրքը: Ի՞նչու ջանքեր:

Բայց... Զաքաթալայի լեռներից, Սամուխի տափաստանով վոչ մի գետ չի հոսում: Այստեղ անտառի կուրծքը ճեղքում է հսկա գետի նման մի ջրանցք, վորը հոսում է դեպի դարերով ծարավ անապատը, շունչ տալիս նրան:

Ահա այդ ջրանցքը բուռնիկյան մտքի արձանն է: Այդպէս դարեր շարունակ ջրանցքը պետք է հոսի, սերունդները կհիշեն անապատի ջրանցքի պատմութիւնը, իսկ ինքը, անապատը լերքեք չի մոռանա, վոր նրա տոչորված կըրծքում կենդանի սիրտ դրին բուռնիկյան ձեռքերը:

Ո՛ր, գեղեցիկ է, յերբ հիմա նայում ես այդ բուռնիկ տարթալայրին: Այժմ այլևս իժերի, կարիճների ապաստարան չէ նա:

Նա աշխարհը շուտով կծածկվի լիաթոք ու փարթամ քամակի կնգուղները ձյունափայլ սպիտակ սավառակ:

Այստեղ բամբակի կնգուղները շուտով ժպտացող դեմքերով, ճերմակ գլուխները միմիանց մոտեցրած չտեսնված սիրո յերգ կհույսեն...

Իսկ հիմա, վաղ առավոտյան արոտուտները չտեսնված համբը են ստեղծում և ուղեկցում տրակտորիստներին, վորոնք գնում են հողի կուրծքը ճեղքելու, նոր սերմ գնելու համար:

* * *

Ձնայած յերեք որ եր անցել, բայց մենք Մախմուդ դայու հետ հին ծանոթներ եյինք:

Նրա հետ գնում եյինք կոլտնտեսութիւն վարեւահողերը:

Նայում ես այդ նախկին անապատին... քեզ համակում է մի անուր հրճմանք: Վորքան լայն են այս դաշտերը, վորոնց վրա այսօր բեկերի հրոսականներ տեղ գոփում է «Ինտերնացիոնալ» տրակտորը: Շագանակագույն հո՛ւլի կուրծքը ճեղքում է կոլխոզային գութանի խոփը:

Անականջ Մախմուդ դային կենդանի շրջող փաստ է մեծ հեղափոխութիւն, վոր շրջեց Սամուխյան անապատը: Նա գիտե, վոր այս բոլորը ձեռք է բերվել հրոսական զորաների գնով, բազմաթիւ դժվարութիւններով: Մախմուդ դային ինքն է պատմում այդ զորաների մասին: Ինքն է մասնակցել նրանց մեջ: Նա իր սևագույն աչքերը հռում է հորիզոնին, վորտեղից արեւը պղնձի կլոր շիկացած ափսեյի նման բարձրանում է: Հետո ձեռքի յերկար ճիպոտը գոմեշներից մեկի փորով պատ բերելով ասում.

— Զը, տուրուր յեկ ե, որը կես որ դառավ:

Գոմեշները ծանր քայլելով, գլուխները դեռ դեն թեքելով առաջ եյին գնում: Մեր շուրջը դարչնագույն հողը կարծես ժպտում եր, հպարտանում իր մոտիկ ապագայի տեսքով, յերբ բամբակի վարդագույն ծաղիկները հպարտ գլուխներով կթեքվեն դեպի արեւը, յերբ աղջիկները, հարսները յերգելով քաղահանի կգնան:

— Ներեր, վոր խնդիրքդ լավ չեմ կատարում, վոր իմ ականջները պատմութիւնն այսքան հեռվից եմ սկսում. սկսում եմ Մախմուդ դային:

— Են եմ ասում, ցանքսի յեռացող ժամանակ եր, եդ որերից մեկումս՝ սենց մի բան պատահեց: Մեր գութաններից մինը կորավ, ասես տափը ծակեց, մեջը մտավ, չկար, վոր չկար: Ել տեղ չի մնաց, վոր ման չգանք: Թարս ժամանակ եր, պլանը հալա չենք կարողացել կատարել, եստեղ ել ես դժբախտութիւնը:

Դրանից հետո կոլտնտեսութեան նախագահ Կուլին սկի տուն չեք գալիս, ասում եր ֆնացածով գործը մինչև ճանդը պիտի հասցնենք, խայտառակ չգաճանք: Մի որ ել սայլը լծած գնամ տեսնեմ մեր կոլտնոյի կանցեւարի դռնն առաջ մեծ դալմադար: Խալիսը հավաքվել ա, խոսում ա, ճղճղում, վոչ վոք, վոչ վոքի չի հասկանում: Մեր կոլտնոյի անգամ Հյուսիսից բարձր գոռում եր՝ «մենք, ասում ա, այսպիսի հարամ աշխատանք տանիլ չենք, ամեն մարդ, վոր իր համար քաշ տա, բա ել ո՞վ կլինի, վոր կոլտնոյի աշխատանքը կատարի: Հետո հալա, մեր մեծերն ել ռայոնից թե՛ պլանը կատարեցեք հա կատարեցեք, ախպեր եսպես աշխատել չի լինի», ասում ա նա: Մոտեցա Հյուսիսից, հարցնում եմ՝

— Հյուսիսից եդ ի՞նչ ա պատահել, վոր դալմադար եք սարքել, ես խի՞ չեք ամենքդ ձեր գործին գնում:

— Մախմուդ դայի, ասում ա, բարով յեկար դու գնա կալտնոյի համար տանջվի, իսկ Կուլին գնա իր հողը վարի...

— Արա, ասում եմ, ի՞նչ եք ախմախ-ախմախ դուրս տալիս, ի՞նչ հող ունի, վոր վարի:

— Զանք, դու դժվար հասկացող մարդ ես, գնա գործիդ—պատի տակից ասում ա Աղալար Զավադ ողլին:

— Յանի խի՞ յեմ դժվար հասկացող Աղալար բեկ, բա յես չիմանամ ի՞նչ ա կատարվում մեր կոլտնոյում. եդ վոր բոլորդ չեք ուզում աշխատել, բա յես խի՞ պետք ե աշխատեմ բոլորիդ համար հը...:

— Բա կոլտնոյի բանն ել նրանումն ա, վոր մեկը բոլորի համար աշխատի, յեթե քեզ համար ես աշխատելու ել խի՞ ես մտել կոլտնոյ: Դե վոր եդպես կրակ ես ընկել, ջանք, Ասկեր հասկացրու. դրան, թող գլխի ընկնի, — ասաց Աղալարը նորից նստեց քարի վրա:

— Մենք հալա աշխատանքի մասին ենք խոսում, մենք ասում ենք, վոր հարամ աշխատանքով չենք ուզում ապրել, մենք արդարութեան մասին ենք խոսում, հասկացմոր Մախմուդ դայի—վրա տվեց Ասկերը:

— Զանք վոչինչ չեմ հասկանում, խի՞ մենք մինչև հիմա հարամ աշխատանք ենք տարել:

— Արա դրան լավ հասկացրու յե, լավ, վրա բերեց մեր Սաթլարը:

— Այ տնաքանդ, բանից բեյխաբար, խաբար ա յեկել, վոր կորած գութանը գտել են մեր նախագահ Կուլու Նոննե-նու տափում: Կուլին, վոր գիշերն երը տուն չի գալիս, կարծում ես թե քեզ համար ա աշխատել: Մի գնա տես Նոննե-նու տափն ինչպե՞ս ե վարել ե՞:

Եգուց քեզ հետ վարած բամբակը բաժանելու ա, կեսն ինքը վերցնի, համ ել գնա իր տափի բերքը բերի... ինքը ձմեռս խանի նման ապրի, իսկ դու յեկ ջանդ դուրս գա, աշխատիր:

Եստեղ, քեզ ասեմ, վոր արյունս գլխիս տվեց: Զերմի նման մի բան ջանովս անցավ: Յեթե այդ բոպեյին Կուլին մոտս կանգնած լիներ, կթքեյի յերեսին: Ինձ ենպես թվաց, թե պատերը չորս կողմս պտտվում են: Բա՛ն շատ փիս խաբար եր:

— Եդ մարդկութուն չի—ասում եմ յես:

— Հարամութուն ա, բա, վոր յես ասում հմ: Ուրիշները գիշեր ցերեկ կառավարութեան վորոշումով են աշխատում, պլանը չեն կատարում, դուռ յեն գցում, իսկ այստեղ մարդիկ իրենց համար հող են վարում...» ասում ա Աղալարը և չփով հողը քրքրում:

— Մենք այսպես աշխատանքը տանիլ չենք, ավելի լավ ա, ամեն մարդ իր համար աշխատի: Եսպես եր ասում Ասկերը, վոր կոլտնոյում միմիանց վրա հաշված յերկու ամիս չի աշխատել: Հենց վոր վարելու ժամանակը գալիս ա, Ասկերը քաղաքումն ա, հենց վոր բաժանելու ժամանակն ա, կոլտնոյումն ա:

Ջրավոր Յուլին ել գլուխը քաշ գցած, ինք իրեն ասում եր.

— Կնկանս ձեռքին սաղ տեղ չմնաց, եդ դյուզերում փուշ չմնաց, վոր նրա ձեռքը չմտնի. յես մինչև մեջքս ցե-

խում խրված արև եմ մաքրել, մաճ բռնել, արևի տակ խանձվել, ես տարի յեւ ելի եղպես եմ անում, անջախ Կուլին իր տափն ա վարում: Մեզ եւ հալա ասում ա բոստանը վարից հետո կշինենք, սհենց աշխատել չի լինի:

— Աղալար, հարցնում եմ, բա գութանը հենց գութան, բա Կուլին ինչով ա վարել իր հողը, յեղները դու ես պահել: Ես իմ հարցը, ինչպես յերևում ա, սկի սպասելի չեր: Աղալարը ձեռքի չոփը թողաց տափին, վեր կացալ եւ ասում ա.

Արա, ախմախ գութան տանողը հալբաթ յեղներ եւ կըտանի, ինքը չի քարշ տալու:

— Յանի վորտեղից կտանի հարցնում եմ յես:

— Արա Ասկեր, հասկացու զբան յես գնամ մի կտոր հաց ուտեմ, առավոտվանից բերանումս բան չեմ դրել...

Հա, յես տեսա, վոր Աղալարն այս խոսքից փախչում ա: Նրա գնալուց հետո ասում եմ.

— Բալամ, Սաթլար, յես ես բանին մի տեսակ չեմ հավատում: Կուլին իսկի կոլխոզից առաջ իր տափը չի վարել, եդ թնչ պատահեց, վոր հիմա պետք ա վարի հը: Բա են շան վորդին իսկի խիղճ չունի, խի՞ չի իմանում, վոր դա կոլխոզը կքանդի, ցրիվ կտա...

Դե Սաթլարը խելճ մարդ ա ելի, գլուխը քարշ գցած ասում ա.

— Ո՞վ ա իմանում դուներայի բանը: Սհենց խոսելով սպասում եյինք, մինչև վոր Կուլին վարելատեղից գա, ժողով հավաքի:

Մութ ե...

Յերկու քայլի հեռավորության վրա առակաները չեն նշմարվում, ճնշելու չափ մութ ե... Ժողով եր—պատմում ե Մախմուդ դային: Խալիք գնում եր վորպեսզի Կուլիի յերեսին թքի: Մեր տան ճանապարհը գյուղի կոռպերատիվի դռնով ա անցնում: Մեն-մենակ ժողով եմ գնում, մեկ եւ հանկարծ ականջներիս մի փսփսոց հասավ:

— Սամուխում, աղալար, մարդ չպիտի մնա, վոր չհավատացնենք:

— Սը, մեր գյուղում եւ մարդ չմնաց, վոր չհավատա, են Մախմուդը, մեկ եւ նրա պես գյաղա գյուղաներ մի քիչ

բան են մտածում, անջախ հեչ, կհավատացնենք, ցրիվ կըտանք: Մեր գյուղն եւ կոլխոզ չի տեսնի: Կուլին վոր մեջ տեղից վերցնենք, վերջացավ:

Յեթե ինձ կախաղանի առաջ կանգնեցնեյին, սիրտս ենքան չեր դողա, ինչքան եդ սհաթին: Չեմ իմանում վախ եր թե ինչ, վորտեղս եւ տեղից չեյին շարժվում, ենպես թվաց, թե վորտեղս մի սուր բանով կտրեցին: Չեղքս պատին դեմ տվի ե չեմ իմանում ի՞նչ անեմ. հետո խոսակցությունը կտրվեց:

— Մնաս բարով Աղալար, յես գնացի Քյանդարլի:

Աղալարը դրանից հետո ինձնից մի քանի վոտք հեռու գնաց ժողով: Յես սպասեցի, մինչև նա հեռացավ, հետո տեղից շարժվեցի...

Ժողովին մինչև անգամ խոխեքն եւ եյին յեկել: Խոսք վերցրեց Կուլին, քիչ եր մնում լաց լինի, ձեռքերով եր խոսում, բարկանում... Յես նայում եմ չորս կողմս, բոլորն եւ կարծես նույնն եյին մտածում՝ «հավատում չենք»: Դուս յեկավ Ասկարը, եւ փիս խոսք չմնաց, վոր չասի Կուլիին: Ասում ա, Կուլիի նմաններին պետք ա արքայի, Հետո թե, մենք, ասում ա չենք ուղում նրա նմաների հետ ապրել, վար անել, ավելի լավ ե, ասում ա, ամեն մարդ իր համար աշխատի, իմանա իր վատն ու լավը: Աղալարն եւ անկյունում նստած, համաձայնության նշաններ ե անում, գլուխը հետ ու առաջ թեքում:

Եստեղ յես նկատեցի, վոր առաջվա քյասիրները դեմքի կնձիռները շատացան: Ախր կոլխոզում նրանք հացի տեր եյին դառել, իսկ հիմա Ասկերն ասում ա. «Մենք մարդ իր համար աշխատի»: Ինչպէս իր համար աշխատի, ախր եդ քյասիրը վոչ տրակտոր ունի, վոչ յեղ, վոչ գութան, եւ վորտեղից կարող ե մի կտոր հաց ձարել:

Ե, ջանք, ինչէր ասես, վոր գլխովս չեր անցնում, անջախ յես սուս եմ անում, ասում եմ թող խալիք խոսի, տեսնենք ինչ ա ասում, հետո սրտիս մաղձը կթափեմ: Տեսնում եմ, Կուլին մաղերը բռնած, քիչ ե մնում քանդի: Հենա հենց եդ սհաթին մատս բարձրացնում եմ ե ասում՝ մի ձայն ել ինձ տվեք:

Խալիք դարմանում ա: Հալա ժողովում կյանքուս խոսած չկամ: Խոսք եմ վերցրել, չեմ իմանում ինչից սկսեմ, միտս ա դալիս, սկսեցի եսպես:

— Ա խալիսը, ասում եմ, Կուլին աշխատավոր նամուսով մարդ ա: Մեզ հետ քրտինք թափելով աշխատել ա: Հոգին տվել ե կոլխոզին, գիշերը մեր վարելու տեղից տուն չի յեկել, եդ ինչպես դառավ, վոր իր Նոնենու տափը վարեց, չէ՞ վոր, ասում եմ, եդ մարդը կոլխոզ կազմելուց առաջ սկի եդ հողը շատ ժամանակ չի վարել: Եդ ինչպե՞ս դառավ, վոր հիմա բամբակի վարելատեղից գիշերը գնաց Նոնենու տափը վարեց, հետո հետ յեկավ: Ձե, չե, սա դուզ խոսակցութուն չե: Խալիսը տեղից բողոշում ա, ասում ա, յես ել եմ հետը յեղել, ինձ ել ա բաժին տալու: Թամբալ Ասկյարը, վոր միշտ արեւի շօքից փախչում ա, սարին տեղի յե ման գալիս, ես ժողովի գլխավորն եր դառել: Հն, հենա շարունակեցի՝ ասում եմ՝ ա խալիս, սա թշնամի մարդի գործ ա: Բամբակի խաթրու կոլխոզի չքավորներն անջախ սկսեցին ապրել, հենա հիմա դա թշնամու աչքը վեր չի ունում, մեզ ուզում են ցրիվ տալ, ելի հզուց սոված խալիսը գնա թըշնամու դուռը, նյոքարութուն անի:

— Ա ժողովուրդ, ասում եմ, յես ես հասակին մարդ եմ, հալա սուտ չեմ ասել, մի բան ասեմ, հավատացե՛ք: Ես խոսքից հետո ճանձի տղոցն ել կլավեր: Բոլորն ել աչքերը դեպի ինձ հառեցին:— Ես սարքած գործ ա, ասում եմ, յես հիմիկս լսեցի, վոր մեր յեզնարած՝ Աղալարը ինչ վոր մեկին մթին եր, աչքս չտեսավ, բայց բոյից և ձայնից հենց լինեի Բյանգյարլի գյուղի կուլակ Ռահիմը, ասում ա «Ենպես պիտի անենք, վոր Սամուխը հավատա, մեր գյուղն ասում ա, բոլորը հավատում ա...» Ես մասլահաթը հենց մեր կովի մասին եր: Յես իմ ականջներով լսեցի, յիթե չեք հավատում, մեղքը ձեզ վրա:

Ասես սառը ջուր թափվեց ժողովրդի վրա: Բոլորը գուլաները թեքեցին դեպի Աղալարը: Իսկ նա եդ բոպեյին ասես լսելը գլխից թռած լինեի: Ձեր իմանում ինչ անի: Անջախ մի քանի խոսք կմկմաց.— Յես, յես ասում ա, յես չեմ յեղել, սուտ ա, խաբում ա, դյուշմանութուն ա...

Իձնից հետո խոսեց Սաֆարովը, հոգի տղա յա, խոսքերը մեկ մեկ գիլաններով, քաղցր, ասես ընկերի հետ զրից ա անում...

— Ձեր գյուղում ապում ա, մենք յերեք կուսակցական ունենք, նրանցինց մեկը Կուլին ա, աշխատասեր, գործին

նվիրված մարդ: Եդ սարքած թշնամութունը հիմա բացվում ա, յես Կուլին մի ուրիշ բանում եմ մեղադրում: Եդ Աղալարն ուրիշ տեղից յեկած մարդ ա, մինչև հիմա Կուլին չի կարողացել իմանալ նրա ինչ մարդ լինելը, կոլխոզի ամենաթանգ ապրանքը տվել ա, վոր նա պահի... Ասկերը վոր դիմում ա տվել կուսակցության մեջ մտնի, փոխանակ կարգին գործ անելու, թամբալութուն ե անում, վերջն ել թշնամու հետեվից գնում: Պարզ ա, վոր եդպես մարդուն ել կոլխոզում պահելը չարժե: Հենց վոր վարի, ջրելու դժվար տեղն ա գալիս, Ասկերը քաղաք «գործի» յա գնում... Բայց հենց վոր բերքը բաժանելու ժամանակն ա, մեկ ել տեսար՝ ըհը, յեկավ՝ ինձ ել բաժին ունեմ... Հալա վերջն ել եսոր ասում ա «ավելի լավ ա, ամեն մարդ իրա համար աշխատի»: Յես ձեզ բոլորիդ և Կուլին մեղադրում եմ, վոր մինչեվ հիմա, ասում ա, չեք թողել, վոր Ասկերի նմանները գնան մենակ իրենց համար աշխատեն: Որինակ, ասում ա, են Ռասուլն Ասկերից հետ չի մնում քաղաքի բարիշնաների նման վախենում ա, թե արևը յերեսի գույնը տանի—ստեղծի՞ծաղ ա բարձրանում... Իսկ ասում ա, Մախմուդ դային, Սուլայմանը, Հաջին, Յուլին և դրանց նման աշխատավորները դրանց համար պիտի աշխտեն:

Վերջը գուլադ ինչ ցավացնեմ, հոգի տղա յա եդ Սաֆարովը: Խալիսը թշնամու գործն իմանալով «գժվեց» համարյա: Հենա հենց եդ որն ել բանտարկեցին Աղալարին, մի վորոշում ել հանեցինք Ասկերին և Ռասուլին դուրս անելու մասին:

Եսպես ա բնա. Աղալարն ենքան աշխատեց, նրա թշնամի լինելը չկարողացանք իմանալ մինչև եդ որը: Հետո պարզվեց, վոր գութանն ել, յեղներն ել նա յա տարել Նրոնենու տափը, Բյանգյարլի գյուղի կուլակների հետ վարել:

* * *

Դե ինչպես տեսնում ես, յես կոլխոզում արաբաչի¹⁾ յեմ: Վորտեղ ուղարկեն, ենտեղ ել գնում եմ: Եդ բոլորից մի քանի որ հետ Գյանջայից բամբակի սերմ բեռնած արաբային, գալիս ելի:

¹⁾ Մալապան:

Արաբի չարխը¹⁾ ճանապարհին խարաբ ելավ, ահա-
գին ուշացաւ: Գիշերն ել մի տեսակ թուխպ եր նստել, ա-
սես մեջքին հինգ փութ բան լիներ դրած: Անտեր լուսնյակն
եւ չեր յերևում, վոր առաջդ տեսնես: Գոմեշները յալմշ-
յալմշ իրանց ճանապարհով գնում եյին: Սիրտս մի տեսակ
անհանգիստ եր: Ո՞վ ա իմանում, մարդ ես ելի, վոր մենակ
գիշերը ճանապարհ ես գնում, գլխումդ հազար տեսակ մտ-
քեր են պար գալիս, Համ ել վախենում եյի արաբան պա-
րան տամ, յես ել փխսվեմ, գոմեշներն ել: Յեթե ընկերով
լինես, ելի մի բայաթու հաքվից բռնում ես, ճանապարհը
շոտ ա անցնում, եդ գիշեր թարսի նման մենակ եյի...

Քուռն անցաւ: Ծմակով անցնելիս մի մեծ կաղնի ծառ
կա ճանապարհին, յերեւի գալիս տեսած լինես, եդ ծառի մոտ
յերկու մարդ առաջս կտրեցին...

— Քի՞մ սյան²⁾—հարցնում ա մեկը:

— Արաբաչի յամ—ասում եմ:

— Անունդ ասա...

— Մարդ եմ ելի.

Մեկը մոտենում ա, յախիցս բռնում և հարցնում.

— Մախմուդն ես հա՞...

Ել խոսում չեմ: Արդեն ճանաչել են, ել լիճ խոսամ,
մտքումս ասում եմ, հետա խանչալը փորս ա կոխելու...

— Դու յէս ասել թե Աղալարն ուզում ա կոխողը ցը-
րիվ տա: Դու յէս ասել, թե նրան խոսելիս լսել էս, հը...
խոսա յէ, յես քու...

Են մեկն ել առանց խոսալու ենպես մի սիլա տվեց,
վոր վոտքիս վրա չկարողացա կանգնել: Ինձ բարձրացրին,
մեկը հանեց խանչալը, իբր թե փորս ա կոխում, շորերս
ճղեց և ասում ա.

— Մենք քեզ հիմա պետք ա սպանենք, յեթա խոսք ես
տալիս, վոր կգնաս, գյուղում կասես քո ասածը սուտ ե
յեղել, թշնամության պատճառով ես ասել, են ժամանակ
պատիժդ կթեթեացնենք, կգնաս քեզ համար կապրես: Ան-
ջախ յեթա գնացիր, չասեցիր, վորտեղ ել լինես սպանելու
յենք:

Խեղքս գլխիցս թռածի նման հարցնում եմ.

— Հիմա յես լիճ անեմ.

¹⁾ Անիվը:

²⁾ Ո՞վ ես:

— Դու քե՛... գնա գյուղում բոլորին ասա, վոր դու
թշնամության պատճառով ես ասել, Աղալարը բան չի ա-
րել, ասա նա կնոջս մոտ ա գնացել, դրա համարե ել մեր
մեջ թշնամություն ա ընկել:

Մտածում եմ, լիճ անեմ, մեռնեմ թե սուտ ասեմ: Հետո
գլուխս միտք ա մտնում, մտածում եմ՝ թող ստեղից ազատ-
վեմ, դրանից հետո սրանց հետ խոսալը հեշտ կլինի:

Լավ, ասում եմ, կասեմ, թողեք կենամ, յերեխոցս պա-
հեմ...

— Մենք քեզ կենդանի յենք թողնում, գնա, իսկ յեթե
մեր խոսքը չկատարեցիր, են ժամանակ մեզինից չենդանաս,
տանդ կենդանի շունչ չի մնալու: Դե վորպեսզի, ասում ա,
սրանից հետո թեկուզ կենդանի, ել վոչինչ չլսես, արի ես-
տեղ: Յես ել չհասկացա, թե ինչ են ուղում ասել, յախիցս
բռնած քարը տոլին ճանապարհի ծերը, մեկը ձեռքերս բռ-
նեց, իսկ մյուսը խանչալը հանած՝ ասում ե.

Կկատարես հա, յեթա մեր ասածը չկատարեցիր, յեթա
Աղալարը հետ չեկավ, ել տանդ շունչ չի մնալու: Անջախ
սրանից հետո դու դունչայում վոչինչ չպիտի լսես, պա-
տիժդ թեթեացնում ենք...

Հետո՞ չգիտեմ ինչ պատահեց, յես զգացի, վոր մյուսն
ականջիցս բռնեց, հետո խանչալն աչքերիս առաջ պըսպը-
ղացնելով տարավ դեպի ականջս: Ուշքս գլխիցս գնաց, ել
վոչինչ չիմացա...

Ե՛լս, շատ գուլում գիշեր եր այդ գիշերը:

Յես գյուղում ասացի, վոր յեթա աչքիս մեկը հանած
լինեյին, են մեկով թշնամուն պիտի գտնեյի, գյուղան
կրծքումը թաղեյի:

Եսպես կռիվներով մենք հողը վարեցինք, պլանը կա-
տարեցինք, յերեկվա չորան մարդը հիմա կարգին ապրում
ա՛, եսպես ե իմ ականջների պատմությունը:

Ե՛լս, գուլում պատմություն ե...

* * *

Այսօր Սամուխի լայնածավալ դաշտերում բամբակենու
գեղնավուն ծաղիկները գլուխները մեկ-մեկու տված չլըս-
ված յերդ են հյուսում... Ձլաված յերդ, վորը միտխառ-
նվում ե այդ նոր մարդկանց յեռանդի հետ, մարմնանում

այդ յեռանդով: Այդ նոր մարդիկ նախկին անապատի տո-
չորված կրճքի նոր ու բաբախուն սիրտը կապում ե մի-
լիոնավոր իլիկներին հետ...

Անականջ Մախմուդը լսում ե կռուցվող սոցիալիզմի
թինչե ախոր չլսված սինֆոնիան ե իր հաղթանակի յերգն
ե յերգում նրա մեջ:

Մոսկվա 1933 թ.

ԴԱՇՏԵՐԻ ՎՐԱՅՈՎ

Ըստ պապական սովորության՝ Ալեքսեյ Կուզմիչ Տարա-
սովը ես միբուք եր թողել ե խոսելիս նրա միբուքը հետ
ու առաջ եր շարժվում ինչպես հասուն հասկերը քամու թե-
թե արեքներից: Խորն ընկած աչքերով հետևում եր հետը
խոսողին: Դիմացինի պատմելու դեպքում ուրախության,
տխրության կամ համակրության ցույց անգամ չեր յերևում
այդ աչքերում: Առաջին անգամ յերբ հանդիպում եք այդ-
պիսի մարդուն, թվում ե թե, ծայրահեղ սարսափը կամ
սիրտ պայթեցնող ուրախ լուրերն անգամ անընդունակ են
նրա դեմքի կնճիռներից վորհե մեկը շարժելու: Սեփական
զգացմունքներն արտահայտելու ժլատություն, միաժամա-
նակ խզի մաքրություն, անբիժ հատկություն դեպի հանձ-
նած գործը, անա Ալեքսեյ Կուզմիչի հատուկ դժերը, վորի
մասին պատմեց կոլտնտեսության նախագահ Անդրեյկը:

Յերկար, մինչև կրունկները հասնող շինելը նրա ծեր
դեմքի հետ բոլորովին չեր ներգաշնակվում: Մինչդեռ հետե-
վից դիտելիս շինելը ձուլվում եր լայն թիկունքի, աշխույժ,
հաստատ քայլվածքի հետ ե յերիտասարդ զինվորականի
տեսք տալիս: Գուցե դա նրանով եր բացատրվում, վոր
Ալեքսեյ Կուզմիչը նույնիսկ ծերության հասակում, չեր հը-
րաժարվել հավատարիմ հրացանից: Չե վոր նա ստանիցա-
յում առաջին կարմիր կազակն ե յեղել: Նման մարդիկ իրենց
ամբողջ եյությամբ հետաքրքրվողից հարգանքի պատշաճ
բաժին են կորցում: Յեվ միտք ե ծագում՝ ինչո՞ւ նրա դեմ-
քը չի համապատասխանում իր ներքինին, ի՞նչու նրա աչ-
քերը չեն ժպտում, չեն արտահայտում ներքին բուռն ու-
րախությունը: Չե վոր մարդու դեմքը նրա ապրումների
բարոմետրն ե: Յեվ վոչվորի համար գաղտնիք չե, վոր ցա-
վը, կսկիծը ե ուրախությունը բոլոր մարդկանց մոտ, կա-
րելի յե տեսնել նրանց դեմքի վրա: Դրա համար մանրա-
դիտակով զինված աչք չի հարկավոր: Ծերությունն այդ
յերևույթին արգելք լինել չի կարող:

Այստեղ, այս դահլիճում հավաքվել են շրջանի անվանի կոլտնտեսական ծերուկ հարվածայինները: Նրանք հողագործության վարպետներն են: Հողագործության սկզբի որերից մինչև մեր որերը դա առաջին դեպքն է, յերբ ծերուկները ավաքվում են և իրենց փորձի մասին պատմում:

Դարեր ի վեր, սերնդից սերունդ փոխադրված այդ փորձը մարդիկ իրենց մեջ են ծծել: Յեվ նրանք պատմում են այդ կաթիլ առ կաթիլ կուտակված փորձի մասին: Միաժամանակ յուրաքանչյուր խոսող պատմում է Ալեքսեյ Կուզմիչի — վորպես շրջանի ամենահայտնի անվանի մարդու մասին:

Իսկ նա լուռ, նստել է պատի մոտ: Նախազահությունում նստածները նայում են նրան: Ալեքսեյ Կուզմիչը հուզմունքի նշան անգամ ցույց չի տալիս: Փոքրիկ գրքուկի մեջ նա ինչ վոր նշանակումներ է անում: Տառերը փայտի կտորների նման շարվում են թղթի վրա և նրանց նշանակությունը թերևս կհասկանար միայն ինքն Ալեքսեյ Կուզմիչը:

Գյուղատնտեսության անվանի ծերուկների այդ հավաքին յես վորպես հյուր եյի գնացել: Յերբ ամբիոնից այդքան խոսեցին Ալեքսեյ Կուզմիչի մասին, ակամա հետաքրքրվեցի նրա անցյալով: Գուցե և չհետաքրքրվեյի, սակայն նրա խորհրդավոր լռությունն իմ մեջ առաջ բերեց այդ հետաքրքրությունը:

Ալեքսեյ Կուզմիչից այնքան ել հեռու չեյի նստած, ուստի յերիտասարդը, վորին հարցրի, շուկով, վորպեսզի Ալեքսեյ Կուզմիչը չլսի, սկսեց պատմել:

— Նրա պատմությունը ծովից մեծ, Վոլգայից ել յերկար է, բայց յես կարճ կպատմեմ: Բուլշևիկները դեռ չեյին յեկել, յերբ Ալեքսեյ Կուզմիչին յերկու անգամ բանտ են նստացրել: Հենց վոր բուլշևիկները մեր ստանիցային մոտեցան, Կուզմիչը բանտի հսկիչին սպանեց, հրացանը վերցրեց ու փախավ կարմիրների մոտ: Դեռ չեմ պատմում, թե մաքոս յեղած ժամանակ ինչ ոյիններ է սարքել: Դե, դրանք հենց դա ջահել ժամանակն է յեղել: Հա սպիտակները, դե յերևի լսած կլինեք, են ժամանակ մեզ մոտ առաջան բեզդոլբնովն եր, դրա փախչելուց հետո, Կուզմիչի տղին գլխատել են...

Ոոսակիցս պատմեց, թե ինչպես այդ դեպքից հետո, Ալեքսեյ Կուզմիչն անխնա յե յեղել դեպի թշնամին: Սպիտակներին ջարդելուց հետո, կռիվը չի դադարել: Կուլախում կուլակները տարիներ շարունակ զանազան ձևերով պայքարել են Ոորհրդային իշխանության դեմ: Պատահել է նորածիլ արտերի վրայով հոտ են քշել, դեղերը վաճել, նույնիսկ թունավորել: 1924 թվին կռիվով են կազմակերպել, վորի մեջ է մտել և Ալեքսեյ Կուզմիչը: Սկզբում նա առանց զենքի կոլտնտեսության արտերը չի գնացել:

Ե՛ր, ինչե՛ր չի անցել «Սոցիալիզմ» կոլտնտեսության գլխով: Ոոսակիցս Անդրեյակը նրա նախագահն եր և դրա մասին շատ բան պատմեց: Ամեն մի դեպք կապված է այսօրվա բրիգադիր Ալեքսեյ Կուզմիչի անվան հետ:

— Ես տարիների ընթացքում — շարունակում եր պատմել Անդրեյակը — կուլակովը մեծացել է, աճել, հզորացել... Բերքը շատացել է, կոլտնտեսականներն սկսել են պայքարել վորակի համար: Դե Կուզմիչն ել ենպես մարդ է, վոր հեռ մնալ չի սիրում: Նրա բրիգադի ամեն մի անդամը մի որականի համար 18 կիլոգրամ հացահատիկ է ստանում... Ախր չե՞ վոր Ալեքսեյ Կուզմիչի բրիգադը հայտնի յե ամբողջ շրջանում:

Անդրեյակը ձայնն ավելի իջեցնելով շարունակեց.

— Նրանք իրենց պլանը կատարում են 140-150 տոկոսով, բնա:

2.

Մի ծերուկ, վորի կտրիչ առամները թափված եյին, ամբիոնին մոտենալով սկսեց առանց նախաբանի և շատ տարրինակ: Ոոսելիս նա կարծես ինչ վոր բան եր ծամում: Բառերը հազիվ հազ եյին հասնում վերջին նստարաններին: Ամեն մի բառից հետո յերկար հազում եր, այնպես վոր տպավորություն եր ստացվում, իբր թե նա դուրս է յեկել ամբիոն հազալու և վոչ թե խոսելու համար: Համենայն դեպս նրա ասածները ժողովը հասկացավ և այդ պատճառով սկսվեց մեծ իրարանցում: Ահա նրա ասածները.

— Յես որինակի համար, կուզեյի վոր եստեղ... որինակի համար, մեր Ալեքսեյ Կուզմիչը, պատմի իր գործերի մասին: Ըստ յերևույթին ծերուկի ասածը, բոլորի ցանկու-

թյունն էր, ուստի դահլիճում իրարանցում սկսվեց: Այս ուսյն կողմից լավեց.

— Հա, թող Կուզմիչը պատմի...

— Կուզմիչ մի խոսա տեսնենք...

Ալեքսեյ Կուզմիչը պահպանում էր նույն լուսթյունը: Լուսթյամբ նա տեղից բարձրացավ և մատը բարձրացնելով ասաց.

— Թույլ տվեք, ընկեր նախագահ.

Այս կարճ նախադասությունն այնպիսի կարևորությամբ ասաց, կարծես իրեն չեն խնդրում, այլ ինքն և խոսք ուղում: Նախագահի հրավերից հետո նա մոտեցավ ամբիոնին: Դժվար էր հասկանալ նրա ապրումները: Դեմքն անտարբեր էր և ապրումների ցուր անգամ չունեի: Դահլիճում տիրեց խորին լուսթյուն: Պիտի խոսի այն մարդը, վորի մասին շատ են լսել և քիչ տեսել:

Նա յերկար պատմեց վարի, ցանքսի վորակի մասին: Իր մասին վոչինչ չասաց: Խոսում էր ընկերների, իր բրիգադի անդամների մասին: Վերջում կանգ առավ բերքի հավաքման վրա:

— Ցորենի բերքը դեղեղու համար իմ բրիգադին որեկան 11 հեկտար էյին տալիս: Մի յերկու որ բան դուրս չեկավ, տեսնում եմ պլանը չենք կատարում, յեղանակն ել թարսի նման վատանում եր: Ամպերը յերկնքում հավաքվում էյին, յերկնքը սևանում էր, իսկ բերքը ցաք ու ցրել է յեղել...

Ուրիշ բրիգադի հետ սոցմրցման պայմանագիր կնքեցինք, բան դուրս չեկավ: Մտածում եմ մտածում, հետո Մերգեյ Վասիլիչին. մեր բրիգադի լավ աշխատավորներից մեկին կանչում մոտս. «Մերգեյ Վասիլիչ, մենք եդ 11 հեկտարը պիտի մեր բրիգադի մեջ բաժանենք: Ամեն մարդ պետք է որեկան մի հեկտար հավաքի, այս միտքը դուր յեկավ վոչ միայն Վասիլիչին, այլև Անդրեյիին... Այդպես ել արինք: Հետևանքը շատ արդյունավետ դուրս յեկավ, 11-ի տեղ 14 հեկտար հավաքեցինք: Հիմա ձիերի մասին յերկու խոսք: Ճիշտ է, մեր ձիերը բոլորից լավ են: Յես անցյալ տարի յեմ դրանով զբաղվել... Դուք լավ իմանում եք, վոր ընկ. Բուդյանին մեր նվերած ձին ընդունեց: Մեր կոմյերիտ Բոգդանովը գիշերը յերեք անգամ մանում էր գոմը, մաքրում տակերը, կերն ստուգում, ջուր տալիս...

Նա պատմում է շատ հաղթանակների մասին և իրեն բոլորովին քիչ և հիշում: Պատմում է Սոնիկովի, Վոլկովի կոմյերիտ Բոգդանովի մասին: Ինքը դրանց հետ միասին, ինքը դրանց ընկերը:

Ալեքսան միբուքների ծփուն դահլիճը ծափահարում է Ալեքսեյ Կուզմիչին: Բուռն ծափահարություններից նրա աչքերը քիչ պսպղում են: Այդ անշշան ցուրից իսկ կարելի էր նկատել Ալեքսեյ Կուզմիչի խորը հուզմունքը:

3.

Մեր եսկադրիլիայի հրամանատարն ի պատիվ անվանի ծերուկ կոլտնտեսականների վորոշել էր նրանց ոդ բարձրացնել: Շատերը, իհարկե, հրաժարվել էյին այդ հաճուքից: Բոլորովին զարմանալի չեք, յերբ իմ մեքենային մոտեցավ Ալեքսեյ Կուզմիչը, վորին յես լսել էյի և ծափահարել: Նա ձեռքերով շփում էր ինքնաթիռի թևերը և ինչ վոր բան ասում ինքն իրեն: Ըստ յերևույթին նա ցանկանում էր իմանալ ինչ նյութից են շինած թևերը: Յերեկի չհասկանալով, դարձավ դեպի ինձ և հարցրեց.

— Թևերն ինչից են շինած:

— Պերկալից*), և վերևից ել գույն է տված:

— Իսկ յես մինչև հիմա կարծել եմ թե յերկաթից է շինած.

— Յերկաթից չե, բայց ալյումինից շինում են ուրիշ մեքենաների թևեր...

Յես հետևում էյի նրա ամեն մի շարժվածքին: Դեմքի կնճիռներից վորեք մեկի վորքադույն շարժումը, ինձ համար մեծ նշանակութուն ունեի: Յանկանում էյի իմանալ, արդյոք, Ալեքսեյ Կուզմիչը, չնայած իր համաձայնության չի վախենում ոդ բարձրանալուց:

Միևնույնն է, ոդում առաջս դրած հայելու մեջ պետք է տեսնեյի նրա ամբողջ ապրումները:

Մինչև սավառակ նստելն Ալեքսեյ Կուզմիչը չորս անգամ պտտվեց մեքենայի շուրջը, հետո յեկավ մոտս ու խորին լրջությամբ հարցրեց.

— Բա եդ թևերը, վոր չթից ա շինած, չի պատուհում:

— Յեթե պատուվեր չեյինք թռչի ելի...

*) Դործվածք.

— Սատանան տանի, մարդիկ ամեն ինչի յեւ ընդունակ են:

Նրա դեմքի վրա զարմանքի գծեր եյի նկատում: Դրանից հետո նա մի շարք հարցեր տվեց: Յանկանում եր իմանալ ամեն ինչ, որինակ՝ ինչի համար ե ծառայում սավառնակի ճակատին կպցրած պտուտակը, թեքը: Վորտեղից պետք ե կրակել պատերազմի ժամանակ: Վորպես դարմանքի նշան, նրա գլուխը թեքվում եր մեկ աջ, մեկ ձախ: Խըցրիկում նստելուց հետո նրան ծանոթացրի «հեռախոսի» հետ, վորի միջոցով ողում հնարավորութիւն կունենար ինձ լրտելու:

Ալեքսեյ Կուզմիչի աչքերն ավելի լայնացան, յերբ պլտուտակը պտտվեց ե հողը հսկա ժապավենի նման ձգվեց դեպի հետ: Յերկինքը մաքուր եր, միայն յերկու կտոր ամպ, փակագծերի նման կանգնել եյին միմյանց հանդեպ: Արեւ տաքացրել եր գետինը ե դրանից առաջացած ողի հոսանքը նկատվում եր հասարակ աչքերով:

Յես դիտավորյալ սավառնակն ուղղեցի դեպի Ալեքսեյ Կուզմիչի ստանիցան: Յերբ մենք թռչում եյինք «Սոցիալիզմ» կոլտնտեսության արտերի վրայով, նրա աչքերը սովորականից լայնացան: Շրթունքները միմյանցից անջատվեցին: Ալեքսեյ Կուզմիչը ժպտում եր: Նա նայում եր արտերին, վարելատեղերին, վորոնք գույնզգույն թերթիկների նման փովել եյին յերկրի վրա: Այդ պահին թվում եր, թե ուրախութիւնը ծորում ե Ալեքսեյ Կուզմիչի դեմքից ե ցանվում արտերի վրա: Նա ջանում եր վորոշել գյուղի փողոցները, մինչդեռ առաջին անգամ ող բարձրացած մարդու համար շատ դժվար եր այդ անել: Յես դիտմամբ մեծ բարձութիւն եյի վերցրել, դիտելու մեծ հորիզոն ունենալու համար: Հիմա ինձ համար այլևս դժվար չեր տեսնել այն, ինչ կատարվում ե «ճամբորդիս» մեջ, նրա մտքի խորքում: Մի բան պարզ եր, նա դրան յերբեք չեր սպասել ե հիմա մտքերը փոթորկվում եյին նրա մեջ: «Սողալու համար ծնվածները թռչել չեն կարող» թերեւս այս ե լեզու Ալեքսեյ Կուզմիչի համոզմունքը, յերբ նա յերկրից դիտել ե յերկնքում թռչողներին: Նա միշտ ել մտածել ե այն մասին, վոր ողից յերկրին ուրիշ գույն ե ձև ունի: Իսկ այժմ, ահա նա, «Սոցիալիզմ» կոլտնտեսության անվանի մարդը ստուգում ե իր կարծիքը:

Ինձ համար շատ հետաքրքիր եր դիտել մի մարդու յեռուն ապրուստները, վորը ուրիշ բոլոր պայմաններում նրանց հայտնաբերման համար շատ ժլատ ե լինում:

Ողում կես ժամ պտտեցինք...

Յերբ ցած իջա սավառնակայան, Ալեքսեյ Կուզմիչը սավառնակից դուրս գալով մոտեցավ ինձ, խանդաղատանքի ժպիտը դեմքին ասաց.

Ինձ թվում եր, վորդիս, թե «սողալու համար ծնվածները թռչել չեն կարող» ասացվացքը ճիշտ ե: Սխալվել եմ: Մինչե գերեզման չեմ մոռանա: Այս թռիչքի մասին կպատմեմ մեր բոլոր կոլտնտեսականներին:

— Ալեքսեյ Կուզմիչ, Ալեքսեյ Կուզմիչ, — կանչեց մեր կոմիսարը, — ասա, վոր ձեր ամեն մի ավելորդ խուրձը մի սավառնակի թել կ...

— Կասեմ, կասեմ, շատ բան կասեմ...

Ուրախության արցունքներն աչքերում նա մոտեցավ, գրկեց ինձ ե համբուրեց ճակատս.


— Ապրես վորդիս, վոր այդքան խիզախ ես...

Ուրախութիւնից նա արբել եր: Յես հոգով հպարտ եյի, վոր Ալեքսեյ Կուզմիչի նման մարդու շնորհակալության արժանացա: Իմ հավատարիմ մեքենայով կատարած թռիչքն Ալեքսեյ Կուզմիչի մեջ փոթորկեց ուրախութիւնը ե այն դուրս հորդեց յեռացող կաթի նման:

Յեյսկ — 1933 թ.



Baş mətbuat müdirliyi müvəkkilliyi № 7229. Azərbaycan № 635 Sifariş
№ 855 Tiraz 2000. İstehsalata verilmiş 26/X 35. Cəpə imzalanmış
26/1-36. Cəp listi 3 1/4. Kağız formatı 72x105. Azərbaycan mətbəəsində
basıldı 26-lar adına "Kitab Sarayı". Bakı, Əli Bəyramov küçəsi.





ՀՀ Ազգային գրադարան



NL0369235

54807

Գրքը 75 կոպ.
Կապը 60 կոպ.

504

36-4
C21194

Q. SEVUNS

JERƏ DOQURU

AZƏRNƏŞR
Bakı — 1936